


215 H/500



91.542-3

4-318

Հրատարակութիւնն Կեդր. գրավաճարանոցի

պ.

Վ. ՓԵՓԵՋԵԱՆ

ՊԵՏՄԻՆԻՔՆԵՐ

Գիշերային ժամերգութիւն. -- Ծովի
գրագ. -- Երկու թռչուն. -- Հաշկական
ձեղնգիներ. -- Մերկ գերիշը. -- Արար.
-- Լուր-դա-լուր. -- Գաղթականներ:



Թ Ի Ճ Լ Ի Ս

Տ Գ. Վ. Մարտիրոսեանցի || Тип. К. Мартиросянца.

Орбеліановская ул. д. № 12.

1901

100

100

100

100

100

10 NOV 2011

3168

Հրատարակութիւն Կեդր. գրադ. ճամբանցի

891.542-3

41-31

155

ար-

Վ. ՓԵՓԵՉԵԸՆ

ՊԵՏԱՐԻԱՆԾՔՆԵՐ

Գիշերային ժամերգութիւն. — Ծագի վրայ. — Երկու թռչուն. — Հայկական մեղեդիներ. — Մերկ գերւիշք. — Երար. — Լուր-դա-լուր. — Գաղթականներ:



Ի Ե Լ Ի Ս

Տպ. Գ. Մարտիրոսեանցի || Կ. Մարտիրոսեանցի.

Օրբելանովսկայա շ. ճ. № 1|2.

1901

28.08.2012

Дозволено пензурою.
С.-Петербургъ, 5-го марта 1901 г.

ԻՐ ԱՆԴՐԱՆԻԿ ԵՒ ՍԻՐԵԼԻ ՔՈՅՐ ԱԶԽԻՆԻ
ՎԱՂԱՄԵՌԻԿ ՄՈՒԶԵՂ ՈՒ ՀԱՅԿ ՈՐԴԻՆԵՐԻ
ՅԻՂԱՏԱԿԻՆ

Նւիրում է ներկնակը:

Քույրիկ Աշխէն.

Երկու վաղամեռիկ փոքրիկներիդ — Մուշեղի և Հայկի
վիշատակին եմ նւիրում այս հաւաքածուն:

Վ. ՓԱՓԱԶԵԱՆ

1901 թ. Մոսկվա.

ԳԻՆԵՐԱՅԻՆ ԺԼՄՆԵՐԳՈՒԹԻՒՆ



ըլը՛նգ, տըլը՛նգ, տըլը՛նգ...

Չարթնում եմ: Ձիւնի սպիտակութիւնն ու աղօթարանի լոյսը, լուսընկայի պէս հում լոյսով ողողել են սենեակս: Մօտ եմ գնում լուսամուտին և փողոց նայում: Աստղերից շատերը գեռ պոպղում են երկնականամարի վրայ. խոր լուութիւն է տիրում. ձիւնի սպիտակութիւնը լուսաւորել է Վան քաղաքի խաչ-փողանի այգ մեծ ծառուղին. ծառերը ծանրաբեռնաձ ձիւնով՝ ճիւղերը խոնարհել են գետին, և փողոցի ձախ կողմի կաճանով քայլող միակ անձն այգ միջոցին՝ Յայնկոյսներ եկեղեցուց ժամկոչ Սահակն է:

Քայլելով սերտ ձիւնի վրայ, թևից քաշ արած տանձնու տախտակին ուժգին հարւածներ է հասցնում նա փայտեայ մուրճով, լետոյ գլուխը ցցում և զիլ ձայնով երգում.

—Ո՛վ բարեպաշտ ժողովուրդ, ժամ հրամմեցէք!...

Ու...տըլը՛նգ, տըլը՛նգ, տըլը՛նգ...

Որքան քաղցր ձայն ունի անպիտանը և որքան ողևորութեամբ է երգում: Երբ վերջացնում է, կանգ է առնում իւրաքանչիւր դռան առաջ, բարձրացնում է կռանը և երեք ուժգին հարւածներով բաղխում:—

Այդ նոյն պահուն լսում են հեռաւոր թաղերից խուլ, այլևայլ շեշտերով հրաւերներ, կոչնակի ձայներ և դռների բաղխումն:

— Տըլը՛նգ, տըլը՛նգ, տըլը՛նգ ...

Հագնւում եմ: Չընայելով որ ցուրտ է, իջնում եմ փողոց և առևի վրայ կուացած՝ սկսում եմ լւացել: Ամալի, մշուշային լոյսով փողոցի մէջ մէկ-մէկ երևում են մարդիկ, ճանչում են դռներ, նրանցից դուրս են գալիս մանուկներ, որոնք խշրտացնում են ձիւնը, քայլում ձիւնից սըթսըթացող ծառերի տակից և իջնում դէպի ձորակի եկեղեցին. ժամկոչը վերջացնում է և կամ լոզնել է դռներ ծեծելուց և իր ծանր կոշիկները քարշ տալով՝ անցնում է մեր դռան առջևից:

— Բարի լոյս, Սահակ ախպէր. ձայնում եմ նրան՝ կկգած առւակի եզրին:

— Աստծու բարին... արդէն գարթնե՛լ ես:

— Կոչնակիդ ձայնը թողնո՞ւմ է քնել. ժպտում եմ ես.— բայց ես շատ եմ սիրում դրա ձայնը. այնպէս քաղցր է հնչում քնի մէջ:

— Արդէն գարթնե՛լ է, հարցնում է նա կամենալով անցնել: Յետոյ, առանց պատասխանի սպասելու՝ վերըսկըսում է.

— Ա՛վ բարեպա՛շտ ժողովուրդ ...

Ո՛րքան գեղգեղ գիտէ՝ հնչեցնում է:

— Չայնոգ խուզուտել է, հա՛...

— Ի հարկէ կըխուզուտի. ցուրտը չե՛ս զգում:

—Մտիր մէկ տաքացիր, թոնիրը վառւած է կարծեմ:

Եւ ժամկոչը, ցրտից զլւած ձայնն իր վերին աստիճանին հասցնելուց յետոյ, կանգ է առնում:

—Աղէն զարթնել է. աւելացնում եմ ես—վերից լլուտւմ էի, թէ ինչպէս Նարեկ էր քաղում:

—Աստուծ օրհնի աղին. շատ ջերմեանդ է. սաղ Նարեկը անգիր գլտի...

Ու մտնում է ինձ հետ: Մի քանի դուռ էր մնացել բաղնիքու դէպի վեր, շատ էլ կարևորներէքը չէին:

Տանտունի դռան առաջ ոտները թափ է տալիս Սահակը և հետևում ինձ: Թոնիրը ներսում վառւում է և մի մեծ բոց զայլարում դէպի երթիկը: Կողքին, մի դէօշակի վրայ նստել, բարձին թիկն է տւել իմ հիւրընկալ Մկրտիչ աղան, ու մեծահնչիւն ձայնով սուրճ է խմում կում առ կում: Ամէն կումից յետոյ, երկար մըջափողով պապերուր բերնին է դնում, մեծ քանակութեամբ ծուխ ներս քաշում, զլուխը բարձրացնում, վիզը երկարացնում և քթածակերից ու բերնից դուրս է վիժում ծխալին մի ամպ: Պանր, պաշտօնական և խիստ մտախոհ կերպարանք ունի Մկրտիչ աղան: Խորշոմուտ ճակատ, արևակէպ ոսկւուտ այտեր և փաթոթաւոր մեծ ֆէս, երկար ֆարաջա ու ճալապատիկ նստած դիրք: Նրանից քիչ հեռու, մի աղջիկ աւլում է յատակի կարպետն ու աշխատում, որջափ կարելի է՝ քիչ ձայն հանել: Տանտիկինը հեռու անկիւնում մի քանի մանր-մուսր մանուկների է հազցնում. մանուկներ, որոնք տկոթ նստած կամ կանդնած՝ կիսամթան միջից շողացնում են աչքերը: Սենեակի մի կողմից լուս է տալիս ձէթի կանթեղը, սր դրւած է պատին խիած փոքրիկ պատւանդանի վրայ—բարձրում:

Եթէ թոնիրի բոցը չըլինէր, այդ լոյսը միայն մի փոքրիկ շրջան հաղիւ կարող էր լուսաւորել: Սենեակը մեծ է և բարձր: Աերից մի երթիկ միայն կայ, այն էլ ծածկւած դմբէթաձև վանդակով և ապակու փոխարէն՝ պատած իւղոտ թղթերով. բազի վրայ նայող պատը շատ բարձրից, ունի երկու միջնադարեան, իւղոտ թըղթով պատած լուսամուտներ: Եւ դրանք են տանտունի լոյս տուողները: Գրա համար էլ հեռաւոր անկիւնները մնացել են կատարեալ խաւարի մէջ: Ինչէր ասես, որ այդ անկիւններում դարսւած չըլինին. կործամ կաթսաներ, բարձր դիզած անկողիններ, չետոյ կարասներ, կուժեր...

Թոնիրի շուրջն է միայն, որ քիչ կանոնաւոր է: Քարձր սափիւյ՝ կարպետներով պատած, մի քանի ներքենակ, մի քանի բարձ և մի աթոռակ, որի վրայ են դրել աղաչի Ֆինջանի ափսէն և պապիրոսի մոխրամանը: Խարուկի լոյսը թոնրից ելած՝ կիսովին լուսաւորում է այդ բոլորը, սուր լոյսի և սուր սուերի կոնտրաստներ դժուր աղաչի գէմքի վրայ. կրակը ֆշֆշում է, լսում է՝ աւելի չոր-րիթմային հարւածները, աղաչի սուրճ խմելու երկար շառաչիւնը...

Գրում կատարեալ լուսթիւն է. երբեմն միայն, մի աքաղաղ կանչում է հաւաբունի խորքից, նրան հեռւից արձագանք է տալիս մի ուրիշը՝ ժանգոտ ձայնով, ապա հեռաւոր տըլընգոցներ և այդ բոլորից չետոյ, ներսից, միջան մէջ սուերի պէս երեցող տանտիկնոջ՝ խոր հազը...

Սահակը դռան կողքին է թողնում կոչնակը, կոշիկները հանում և ինձ հետ թոնիրին մօտենում:

— Քարի լոյս, Մկրտիչ աղա:

— Ա՛յ, Աստու բարին... այդ ո՞վ է հետինց:

—Փամկոչն է:

—Հն... Գէ լաւ. այս կողմ հրամմէ, որդիս. եկո՞
կողքիս նստէ: Գու էլ, Պախակ, եկո քիչ մը տաքցիր,
մրտած կըլնես: Յուրտ է. հն:

—Հն, հրամանք ես, լաւ ցուրտ է: Արարք զնա-
ցող Սիկալեցիք մէկ-մէկ հոխա սառցի քուլաներ ունէին
իրենց բելս ու մօրուսի վրայ:

—Գաշտում ի հարկէ աւելի ցուրտ կը լինի. ասում եմ ես:

Աւելածութիւնը դադարում է. սիլուէտները պէս՝ կի-
սամթան մէջ շարժում են մանուկները:

—Փանաւանդ Սիկալի կողմը. գիտել է տալիս ժամ-
կուշը, լետոյ ձեռքերը պարզում կրակին և՛-ճֆ, ինչ լաւ
կրակ է...

—Կնիկ, դառնում է ազան տանտիկնոջ —ժամկոչ ախ-
պօր մէկ օղի, թող ներսի կրակն էլ վառւի...

Ծիծաղում ենք: Տանտիկին-խաթունը մօտ է զը-
նում պատի միջի պահարանին, հանում օղու շիշը, մի
փոքրիկ պնակով էլ չամիչ, լցնում է՝ բաժակը օղիով և
պարզում ժամկոչին: Սա առնում է, բարեմաղթում, լը-
մում, չամչից երկու հատ վերցնում, սրբում է բելսերն ու
ասում.

—Ուխնայ... Ասուած շէն պահի. լնւ տաքացայ:

—Մէկ էլ տուր, կնիկ, հրամայում է ազան:

Փամկոչը այդ երկրորդը առանց բարեմաղթելու է
կոնծում, թևովը սրբում է բերանը և սրպէս թէ սկըզ-
բում մի բան էր ասել և կիսատ թողել՝ շարունակում է.

—Հն, էն էի ասում... էտ տնաւեր Սիկալեցիք...
Այնքան տեղից, էս ցուրտ-ղիամաթին, ծանր-ծանր, ի-
րենց էշերի քայքայով քաղաք են զալիս թէ ինչ...մէկ ի-

շու բեռ (իթիր ¹⁾) կամ երկու ջուլ պարսուր ²⁾ պիտի ծախեն... Տնաներներ, 5—6 ղուլուշի համար այլքան տանջել կրլինի: Հալն մէկ երկու ժամ էլ այս ցլտին, ստները վեր-վեր անելով, Արարուց մէլզանի մէջ պիտի սպասեն, մինչև ժամաւորն ելնի և պարտորն առնի...

— Թէ որ ծախուի էն էլ մէջ եմ մտնում ես — չես տեսել որ շատերը չեն կարողանում ծախել մէլզանի մէջ և էշն առաջ արած մինչև երեկոյ փողոցներն են չափում և գտում...

— Խն, խն, քե մեռնեմ... շան կեանք է. ողջ որ ու գիշեր տանջեն, ցուրտ ուտեն, հիւանդտանան, մի-երկու ղուլուշ վատկեն, էն էլ տանեն կամ պարտատիրոջ տան, կամ նիւֆիւս առնողի բերան լցնեն:

— Թէ որ մենակ նիւֆիւս լինի... ասում է աղան մռալլ դէմքով — ապա ուրիշ հարկերը, ապա կաշառ քները...

Քոլորս լուռ կնք: Արակը ճարճատում է, բացը էջնում և արնեգոյն լոյսի մի շրջանով ներկում մեր դէմքերն ու թոնրի եզերքները:

— «Զնլն հառաչանաց, հեծութեան սրտի, ողբոց աղաղակի... քեզ վերընծայեմ... ստեղծողդ ամենի»... լըսում է այդ լուռիեան միջից աղալի մեկամաղձոտ, սրտի խորքերից գուրս եկող վշտալից խուլ ձայնը: Յետոյ, երբ մի րոպէ ամէնքս լուռ մնացած, ակնապիշ՝ կրակն ենք դիտում, նա գառնում է ժամկոչին և հարցնում.

— Պատարագիչն ո՞վ է այսօր, Սախակ.

— Տէր-Յգիշէն.

— Նմբիճք էլ ունիք.

— Հրամանք ես երկու հատ:

Նորից լուռ թիւն: Վայճեր են գուրս սլանում թոն-

¹⁾ Այլի աղբից շինած վառելիք.

²⁾ Այլսարի ալբր, որ չորացնում են և վառում.

րի խորքից, միմեանց ետևից պնդում կարծես և սենեակի վերին, մութ տարածութեան մէջ, ճաթ առում-կորչում:

Աղջիկը զեռ աւելում է, բայց շատ հեռու. հազիւ երբեմն լսում է աւելածութեան չոր ձայնը:

— Տէր-Յովսէփին կասես, խօսում է աղան— որ ժամից լիտոյ գալ մեզ մօտ ճաշի. թող ամբիժքը ուրիշներին թողնի:

— Հազրը որ էսօր ամբիժքն ուտի և էգուց էլ ձեր ճաշը... ասում է ժամկոչը—ինչո՞ւ իրար կորցնի ամբիժքները:

Բոլորս ժպտում ենք: Նա նկատում է այդ:

— Խաչ՛ը ապա... շարունակում է նա— դուք չէք իմանում թէ որքան ծանր է տէրտէրները համար՝ կորցնել մի ամբիժք, թէկուզ թաղաւորի ճաշին անդամ հրաւիրւած լինին: Կը տեսնէք ա՛յ...

— Չէ, ժամկոչ, պնդում է աղան— Տէր-Յովսէփը կը գալ. ի՛նչ կալ, իր բաժին ամբիժքը թող տուն ուղարկի: Ասա որ մի լաւ ֆեալագէօս ենք եփել չորաթանով:

— Քալագէօ՞շ...

Եւ ժամկոչի բերնի ջրերը շատանում են:

— Հը՛մ... մռմռում է նա— ինչ լաւ բան որ լինի, իսկոյն տէրտէրին են կանչում... ժամկոչը չու ուցաւ ուտի. .

— Լա՛ւ, լաւ, ժպտում է աղան— քո բաժինն էլ կըտայ խոթունը:

— Ասուած շէն պահի... Գէ՛հ, տաքացայ. գնամ. ժամ օրհնելու ժամանակ է. հիմա տէրտէրները եկած կը լինին. մանաւանդ ճուռ Տէր-Ստեփանը, որ հոգիս մինչև այտեղս է հասցրել:

Կոկորդն է ցոյց տալիս և սկսում կօշիկները հաղնել:

— Խա՛ն գէօ... շարունակում է նա— մինչև այտեղս

է հասցրել: Ամէնից շուտ է գալիս, գուռը շրիկոցով բաց անում, կօշիկները հանելով՝ թևի տակ դնում, գժի պէս վը՛ղղ... վագում դասը: Անցն եկել է ինձ, եթէ ժամ օրհանելու զանգը իսկույն չըլսփեցի:

— 2^է որ նրան գաղարեցրել են քահանայագործութիւնից:

— Ը մ... ո՞վ կարող է նրա վրայ: Ամէն օր կուռում է տէր-Յովսէփի, տէր-Եղիշէի հետ... տէր-Վարդանի հետ իւօ... Աստուծ ազատի— շուն ու կատու են: Ժամի կէս տեղում մէկ էլ տեսար սն-նրան, նս-որան, էլ բան չի մնալ՝ որ չասեն. էհ, էհ, սրն ասեմ... դէհ, մնաք բարին, սաղ լինիք...

Եւ բաց է անում գուռը:

— 2րմուանաս, Սախակ, կանչում է աղան:

— 2եմ մուանալ. մնաք բարին:

— Քարի եկար:

Ժամկոչը բաց արած դռնից երկնքին է նայում:

— Հօ, հօ, ասում է նա— Հիմա լուրը բոլորովին կը քացւի. տէր Ստեփանը կրակ զրել՝ եկեղեցին վառում է ու զրտէ. թէ որ տէր-Վարդանն էլ եկել է, էլ Աստուած ազատի...

Եւ ծանր քայլերով հեռանում:

Գուրս եմ գնում ես էլ: Փողոցում սկսում են երևալ գէպի եկեղեցին իջնող կանանց, տղամարդկանց և մանուկների խմբեր, որոնք միմեանց ետևից, շարքով՝ անցնում են նեղ կաճանով, կճկւած ու քչփչալով: Մանուկներն իրար ձիւն են նետում, սահում են, վազվզում, գողոռում... ու նրանց ստերները կարճ՝ զճուռ է գառի-վայրի շողշողուն ձիւնի վրայ:

Եւ ժամկոչ Սախակի կոչնակի ձայնը իր վերջին

տըլընգ-տըլընգն արձակելով՝ իջնում է գէպի Յայնկոյս-
ների ձորակն, ուր և գնում են ձորագլխի վրայ միմեանց
միացող ժամկոչները:

Չորի խորքից խնլ կերպով լսում է այժմ եկեղեցու
տանիքի վրայ գրւած երկրորդ մեծ կոչնակի ձայնը, որ
իր կողմից արձագանք է սփռում ձորակի մէջ և զզրը-
գեցնում Ջրմփ-զրմփ - մաղարայի լեռը...

Այդ բոլորը լիշում եմ մի առ մի, ամենափոքր ման-
րամասնութեամբ:

Յիշում եմ ապա փոքրիկ կամուրջը, որ ձգւած է
ձորակի գետի վրայ, լետոյ՝ եկեղեցու բարդիները, պուրա-
կը, կից պարտէզները, Ջրմփ-զրմփ մաղարայի քարոտ լե-
ռը՝ ճիշտ շէնքի ետևում ցցւած, եկեղեցու և դպրոցի
պարսպապատ շէնքը, վերի առուն՝ իր ուռենիների շար-
քերով...

Յիշում եմ եկեղեցու քարէ դռնից սրժսրժալով ներս-
մտնող ժամաւորները, որոնք շրժունքները շարժելով
աղօթք են մրմնջում և մտնելուց առաջ՝ քարէ շրջանա-
կը համբուրում. լիշում եմ դռան առջևի առւից լացող-
ներին, որոնք տանը չեն լացել և եկել են եկեղեցուց
առուից լացելու, և որոնք կարմիր թաշկինակներով
երեսները սրբելուց լետոյ՝ խաչակնքում են, ձեռքերի մէջ
փչում և եկեղեցի մտնում...

Ահա և եկեղեցին:

Մի մեծ շէնք է. ցած ու մութ: Լուսամուտները
փոքր. ջահերը վառւած չեն, սեղանի վրայ և տեղ-տեղ՝
պատկերների առաջ վառւող բարակ մոմերի լոյսերը շատ
նեղ շրջաններ են լուսաւորում: Գռնից նայողին ներկա-

յանում է գէմ առ գէմ — հեռւում, մի մեծ բաց դռան ներսի կողմը, մատուռի լուսաւորած ոսկեգօծ սեղանը: Նրա դրսի կողքերում երկու փոքրիկ սեղաններ, նոյնպէս սակաւ լուսաւորած: Երկու մեծ սիւներ կազմում են դասը, որոնք և փայտեայ վանդակորմով զատւած են: Սիւների կողքին են կանգնել քահանաները: Դասերից սկսած դէպիցած պարզւում են երկու անոճ, փայտեայ սիւների շարքեր և ժողովրդի կանգնելու տեղը — մինչև դուռը: Չէնքի յառակը քարեայ է, բայց ծածկւած ամէն տեսակ հին ու նոր կարպետներով և գորգերով: Պատերը զարդարւած են Հնամաշ, սևացած, մոմի կաթւած քներով բճաւորւած, բոցերովը խանձւած, երբեմն շատ տգեղ, հաղիւ ուրեմն գեղեցիկ՝ դանազան պատկերներով:

Յատակից յետոյ, դռան գլխին է գտնւում կանանց բաժինը — երկւարկ լացն օթեակ, որ թառմա է կոչւում: Եւ որպէս զի ցածում աղօթող տղամարդիկ կանանց գէմքերը չըտեսնեն, թառման ունի առջևից մանր ծակերով տախտակորմ: Թառմայի տակն է աղքատների կանգնելու տեղը, երեսփոխի մոմի սեղանը և կօշիկներ հանելու տեղը:

Ներս եմ մտնում այն ժամանակ, երբ գասից լրսւում է տէր-Վարդանի խեղդւած ձայնը.

— Օրհնեա՛լ սէր մեր Յիսուս...

Բայց հաղիւ թէ նա կմկմալով ուզում է շարունակել, որ եկեղեցու դռան մօտ մի խլրտումն է առաջանում: Տէր-Ստեփանն է: Ներս է ընկնում, կօշիկները թեւի տակից գուրս թողնում դէպի գետին, սլանում է դէպի միւս գասը առանց փիլոնի, խլում է տէր-Վարդանի բերանից աղօթքը և գոռում.

— Օրհնեա՛լ տէր մեր...

Եւ ահա հանդիսատես եմ մի տեսարանի, որի լիշողութիւնն իսկ ինձ ծիծաղեցնում է:

Տեսնում եմ հուզ տէր-Վարդանին, որ յանկարծակիի եկած այդ յարձակումից՝ քարանում է: Ստիպած էր լուել, որովհետեւ ձայնը շատ ցածր էր, արտասանութիւնը ծանր: Ծերացել է տէր հայրը. խիստ ծերացել: Լուում է և ալլալուում: Տէր-Յովսէփ աւագերէցից յետոյ, ժամ օրհնելու իրաւունքը իրենն էր. ոչինչ չէր կարող այնքան վիրաւորել նրան, որքան զիժ տէր-Ստեփանի այդ վարմունքը:

Տէր-Ստեփանը զիժ է, մի խենթացած քահանայ, որի հետ չըզիտեն ինչպէս վարել. որտեղ ուղարկում են — փախչում է: Մոլեգին սիրահար է ժամերգութեան. որ թողնեն, ամբողջ աւաւօտեան ժամերգութիւնը — քահանայի, դպիրների, փոխասացների բաժինները — միմեանց ետեւից կասի և դեռ էլի կուզենայ ասել: Ամբողջ օրը իր տան կտուրի վրայ ձեմում է և զիլ ձայնովն ու ստեղի շարականներով ողողում փողոցը:

Բայց ահա տեսնում եմ տէր-Վարդանին, որ ցցում է, կարմրում և գոռում.

— Աղանբորդ (անամօթ), չեմ ամաչում... էլի...

— «Եւ թող մեզ զպարսիս մեր...» շարունակում է տէր-Ստեփանը արագութեամբ, զլուխը ցցած, յաղթական ժպիտը դէմքին: Տեսնելով որ յաղթողն էր, ձեռքերն է շփում, փիլոնը վրան առնում և անընդհատ, երգելու պէս, կարգում է ազօթքները:

— Ծուռ... շարունակում է նախատել տէր-Վարդանը՝ աւելի բորբուքած:

— ... Եւ մի՛ սանիք զմեզ ի փորձութիւն... զոչում է տէր-Ստեփանը շեշտելով և թշաւա ծերունուն դարձած:

Տէր-Վարդանը վերջնականապէս յայտը կտրած, դու՛մ է բարկութիւննից. լռել է, բայց քթի տակից փրնթփրնթում է. և բաւական բարձր ձայնով փնթփնթում.

— Այսպէս դժերի մօրուքը չեն անխում... Հէրիֆ, Հերիք չեղա՛ւ արածդ. քո ինչ բանն է աղօթել, հայււան Մարկոս—ճուռ Փիլիպպո՛ս...

— ... Զի քո՛ է արքայութիւն եւ գօրութիւն... Ինտում է դէպի նա տէր-Ստեփանը՝ գօրեղ ձայնով:

— Չու ու ցա՛ւ...

— ... Եւ փառք յաւիճեալս...

— Գեալինն անցնիս...

— ... Ըմէ՛ն:

Թաւամայում այդ միջոցին քչիչոյր սկսել է: Կանայք բաւական հաւաքւել են. աղամարդիկ էլ հեղհեղատէ հանում են, կօշիկները թողնում դռան մօտ—ժամհարի կողքին, զլիսարկնին կամ հանում և կամ հէնց ֆէսով՝ ցրում են կիտախաւար եկեղեցուց զանազան կողմերում:

Ահա և աւազերէցը. կարճահասակ, բարեմոցն դէմքով ծերունի, որ դռան շէմքի սուաջ կանգ է առնում և դիտում է դասի մէջ կատարւող տեսարանը: Առպարիզի տէրը գեռ տէր-Ստեփանն է. անցել է այժմ մատուռի սուաջ և շարունակում է ջրվէժի պէս բերնից դուրս տալ անհասկանալի արագութեամբ աղօթքներ, մոնոտոն, արագ ու զիլ արտասանութիւնով: Պարզել է վիզը և ամբողջ մարմնով տարուբերում է: Ո՛չ մի տեղ չէ նայում, բացի օձորքից. կատարեալ էքստազի մէջ է:

Այդ միջոցին վրայ է հասնում չորրորդ քահանան— տէր-Եղիշէն: Յաղթանդամ ու հսկալ երկտասարդը ցածում կանգ առնելով, հասկանում է ամէն ինչ. լիտուց,

ձեռքի հաստ ցուպը ցած գնում մոմալաճառի մօտ և մի քանի հսկայական քաղերով կտրում տարածութիւնը: Հասնում է ատեան, բռնում խենթի թւից և այնպէս ցնցում, որ թշուառ երգիչը զայտուում է, դառնում, տեսնում է իր ահարկու թշնամուն, նրա դէմքը՝ և բոլորովին լուռ:

Այդ ժամանակ միայն ամէն ինչ կարգի է բնկնում: Տէր-Յովսէփը շարունակում է ազօթ քը, վրայ հասնող տիրացուները, աշակերտները շարականներն են սկսում, իսկ տէր-Ստեփանի ձայնն այլևս չէ լուռ:

Խեղճ տէր-Ստեփան:

Եւ ահա լոյսն այդ պահուն դրում բացւած, կիսովին դռնից ու բարձրագիւր լուսամուտների ապակիներից աղօտ կերպով ներս է թափանցում:

Եկեղեցին լցում է հեղհեատէ: Հասնում են ծերեր, պատանիներ, մանուկներ: Ամէն կողմ ծնրագնողներ, կրք-ճահարներ, պատկերապաշտներ ու մոմ վառող-խաչակրն-քողներ: Յաճախ լուռ են խուլ մոմուտցներ:

Ոմանք մեզմ ձայնով երգում են տիրացուն'րի հետ, կամ անգիր կարգում՝ քահանայի հետ: Երբեմն, մի հիւսաւոր անկիւնից, տարածում է յօրանջելու ձղւած ձայն և երբեմն էլ ու է է բարեպաշտ, երկար ազօթ ք փսփսուլուց լետու, լանկարժ բերանը բաց է անում և յօրանջելու միջից՝ ձայնում:

— Տէր ողորմեա, տէր ողորմեա...

Գրտում, դռան առաջ երևում են կազմուղ և ապա քանդուղ խմբեր: Եկողներ են, որոնք պահ մի կանգ են առնում, միմեանց բարևում, մի քանի խօսք փոխանակում, ապա դռան քարէ շրջանակը համբուրում և խաչակնքելով՝ ներս գալիս: Վանդակորմից երևում են կա-



նայք էլ, որոնք ծալում են նախ սպիտակ սաւանները, թւի տակ գնում, ապա կարմիր երկար շապիկով կանգնած՝ սկսում են մի քչփչոց, որ ընդհատում է կրճահար պառուների աղիտորմ աղօթքներով.

—Մեզայ՛ յամենայնի, Տէր...

—... Արարի՛չ Աստուած, թո՛ղ զմեզս իմ...

—Հայր երկնաւոր, մեղուցեալ եմ առաջի քո...

Միշտ մեղաւոր են ճանաչում իրենց և համոզւած են այդ բանում. ուրեմն և զարնելու, պատժելու, պատուհասի արժանի...

Այդպէս էին աղօթում կանայք վերեւում, այդպէս էլ տղամարդիկ — ներքեւում...

Ի՞նչ են եղել արդեօք այժմ այդ բոլորը — եկեղեցին ու ձորը. արդեօք ո՞վ է կենդանի մնացել այդ ծանօթ, վշտերով լի, բայց ջերմեռանդ ծերունի գէմքերից, այդ կտրիճ երիտասարդներից, այդ առողջ, բարեպաշտութեամբ աղօթքի կանգնած կանանցից...

Արդեօք յունիսեան այն սև-սև օրերից լետույ, ձեզնից մէկն ու մէկը ազատեց ձեր բազմադարեան ջերմեռանդութեան, կրճահարութեան և «մեղաւորութեան» շնորհիւ...



Ծ Ո Վ Ի Վ Ր Ա Յ



1

էպի Աղթամար էինք գնում աշնանային մի գով գիշեր: Քիւղից ելած, ծովափի աւազների մէջ կանգ էլ առել և սպասում էի քահանային, որի հետ խօսք էինք արել միասին ճանապարհորդելու:

Վերջապահ էի գիտում Վանայ ծովի վրայ. ջուրը լերից կանաչ էր կտրել, կոհակները միմեանց հրելով հեռանում էին դէպի խորքերը և փրփուրի զծեր կաղմում. հեռում երևում էին եզերքների զիւղերը, ծառաստանները. մի այլ կողմ՝ Աղթամար կղզու կէսն էր. հորիզոնի մի կողմի վրայ՝ Կտուց անապատը, իսկ միւսի՝ Առտէր կղզին, որ մի մեծ սև թռչունի նման երբեմն կարծես ընկըղմում էր ջրի մէջ և երբեմն դուրս ցցում իր լերկ գանգը:

Մայր մտնող արեգակն այդ միջոցին աղօտ ճառագայթներով խաղում էր ջրերի հետ ու լայն, լուսաւոր

ուզի գծում մինչև ափը. նրա գէմքը նման էր հրաշէի գնդակի, որ հետզհետէ ընկզմում էր փրփրալից սև ջրի մէջ և լուսաւորում զլիւի վրայի ամպերը, նրանց եզերքներին վարդագոյն աննման ժապաւէններ կազմում և զիմացի մի այլ ամպի էլ բոցավառ ու անշարժ խարոյկի տեսք տալիս:

Նաւավար Թորոսն այդ միջոցին նաւակի քիթը ցցել էր աւազի մէջ և մի քանի զիւղացիների օգնութեամբ նաւակն էր մտցնում ոչխարները:

Մինչ այդ՝ արեղակը հետզհետէ ընկզմում էր. ամպերը մեղմացնում էին իրենց բոցը, լոյսի շառաւիղը աղօտանում, ծովը թանաքի գոյն էր ստանում, կոհակները մեծանում էին, ֆոսֆորային կայծեր արձակում և միմեանց մղելով՝ գալիս շառաչիւնով փռւում էին ոտերիս տակ: Եւ Առտէրը թագնւում էր խաւարի մէջ, Ատուցը անորոշ կերպարանք ստանում ու եզերային ծառերն և զիւղերը նմանում էին մռայլ ոտերներին:

Մի ձայն սթափեցուց ինձ: Քահանան էր. ձեռին բռնել էր մեծ կապոց, ապա մի հողէ զինու աման:

— Քնանք, սրգի, ասաց նա — նաւ մտնենք:

Աւ մտանք: Պատրաստ էր: Քահանան քղտնեքը ծալելով՝ ուրեց, մէջքի վրայ ցցեց, կապեց ու զինին ցած գրաւ ոտերի մօտ. լետու, երբ ևս կռթնած կայմին՝ նայում էի սև ջրերին, դարձաւ գէպի արևելք և կարդաց.

— «Տէր, ուղղես մեզ զգնացս մեր...»

Եւ այդ խուլ աղօթքը, խառնելով կոհակների շառաչիւնին, նաւակի ծիման ու Թորոսի պարբերաբար նաւակից շերեփով ջուր դուրս թափելուն—մի խորհրդաւորութիւն էր սփռում շուրջը...

Յարձրում, զիւղի մէջ, տեղ-տեղ պլպլում էին ձը-

լրագներ. Հեռուն — անտառի ծայրերում՝ երևում էին նախ-
լուրդները և անխաղործները կրակները, իսկ անտառի
ստորոտները ընկզմել էին խաւարի մէջ:

Վերջապէս շարժեցինք: Թորսը դադարեց ջուր
դուրս թափելուց, հրամայեց առագաստ պարզել և թռա-
ւաիւ վրայ, որպէս զի նաւակը ջուրը մղէ:

Ծովի տարածութեան հորիզոնից սկսում էր երևալ
լուսնի կէտը՝ արծաթագոծ կողերով հայելու նման՝ և
հում լոյսի մէջ սղողել գողգոջուն ջուրը:

— Սիրուն է, չէ, մեր ծովը. ասաց քահանան —
մարդ նայելուց չէ կշտանում... Քայց շատ էլ կատաղի է
անիծածը... Ատուած անի, որ փոթորիկ չբարձրանայ:

Յետոյ դարձաւ նաւսովարին և դռնեց.

— Թորոս, փոթորիկ կունենանք:

— Չէ, տէր-հայր:

Մէջքը դէմ էր տւել նաւակին: Ասաց, ոյժ տւաւ,
ասհեցրեց դէպի ջուրը, ապա ցատկեց նրա մէջ և դար-
ձաւ նաւաստիներին:

— Առագաստը... աղաղակեց նա:

Ու նաւակը շրջան գործեց, պատուեց ջուրը, առա-
գաստը արագութեամբ բարձրացրած՝ ուռաւ, մենք ծրու-
ւեցինք մի կողի վրայ և աւաջ սլացանք:

— Ե՛ս Նարեկայ ս. ճգնարան. արեց Թորոսը, քեօ-
լօղը հանեց, խաչակնքեց, լետոյ նորից դրեց և, որպէս
թէ խօսքը կիսատ էր թողել, ասաց քահանային.

— Չէ, տէր հայր, Աստու ողորմութիւնով փոթորիկ
չենք ունենալ. իսկ ալեկոծութիւն... խօսք չունիմ...
քիչ-միչ...

Նաւակը սրանում էր և հետքերի վրայ պայծառ
դիժ թողնում. երբեմն կողը այնքան ծռում էր, որ ձեռ-

քրտ կսխում էի ջրի մէջ և թոյլ տալիս, որ մատներիս ծալներից կաթկթեն շողշողուն շիթեր:

Աղբիները անհետացել էին. խաւար խորքի մէջ ափն էր, այսինքն Ներբող և Գրգուր լեռների կոյտը. և հեռում Սիփանը՝ իր ճիւղնափայլ կատարով. փչում էր ծովային դով, գրեթէ ցուրտ քամի:

Քահանան ցրտից սկսել էր գողալ. մէկ-մէկու վրայ գինու բաժակ էր դատարկում ու մռմռում.

— Կարճես ցուրտ է, հը՞... չնս ուզում, վարժապետ:

Ու ինքն էր խմում: Ե՛ս էլ խմեցի. մի բաժակ էլ թորոսը կոնծեց, լետոյ բարձրացաւ դէպի մեզ իջնող ցանցաձև հովանոցը և ծածկեց նրան մի կտաւով:

— Խմեցէ՛ք... բացազանչում էր քահանան տաքացած—կեր, արբ և ուրախ լեր... ան, առ սա փոխինդից... մի տաղ էլ ասա՛ լսենք. կարգացուր մարդ ես, ազգային տաղեր շատ կրգիտենաս...

Եւ ես նայելով հայրենի ծովակին, լիշեցի հայ բանաստեղծի խօսքերը.

«Չայն տուր, ո՛վ ծովակ...»

Ու երգեցի: Չայնս տարածւում էր ջրերի վրայ դէպի հեռուները և կարճես գողգողում էր թարմ օդի բարձրերում:

Ծովի ալիքները մեծանում էին, նաւակը սկսում էր մեծապէս շարժել: Քիչ լետոյ քահանան պառկեց, իսկ ես մի տեսակ անշարժութեան մէջ, աչքս լուսնի շողքի տակ սրթսրացող կապուտ ջրերի վրայ՝ խորասուզեցի՝ երազների մէջ...

Թորոսի ձայնը սթափեցուց ինձ:

— Կըմբես, վարժապետ, ասում էր նա—քնիր, հիմա մեծ ալեկոծութիւն կ'սկսի:

—Քունս չէ տանում և արեկոծութիւնը սիրում եմ:

—Ուրեմն այստեղ ինձ մօտ արի, որ արեկոծութիւն տեսնես... նստելու տեղ կայ. ծածկոցդ վերցրու, որ մէջը փաթաթուես:

Վերցրի ծածկոցս ու թորոտի կողքին տեղաւորեցի:

II

—Վատաղի ծով ունինք. խօսեց թորոտը—անցեալ տարի հէնց այս կողմերումն էր, որ մի Աւանցու նաւակ բնկղմեց և մօտ A() հողի խեղդեց:

—Քառասուն...

—Մէջն էլ մի քահանայ կար ու երկու կին: Աղ-թամար ուխտի էին գնում խեղճերը... Տես, վարժապետ, քիչ աջ նայիր. այդ արիքները տեսնում ես. մեծանալու-մեծանալու են և ծովը օրօրին... Ըհ'ը, եկան... չբլա-խենաս...

Հեռւից, իջնելով ու հլնելով, թանձր կանաչագոյն մի քանի խոշոր կոհակներ, հաւաքելով ուրիշ շատերի հետ՝ մեծացած ու յուզւած՝ սրացան դէպի նաւը. մի բնդ-հանուր շարժումով ջրերը նաւակի չորս կողմից ետ քաշ-ւելով՝ փոսացան, ապա նորից դիպացան եկող կոհակնե-րի հետ և երբ նաւակը շիւղի պէս նրանց կատարի վրայ էր թռնում - պայթիւնով ճալթեցին նրա կողին ու ջրի մի լեղի անձրև տեղացին մեզ վրայ:

—Այս առաջինն է... ասաց թորոտը և դեկը դարձ-րեց:

—Գեռ սա ինչ է որ. շարունակեց նա - այնպէս շոտկալի տարեր են կազմում, այնպէս կատաղաբար, եր-կու աժգահաների նման միմեանց վրայ դահավիժում ու թաւալում, որ Ասուած մի արասցէ, եթէ նաւակ մէջ

ընկնի, փշուր-փշուր կրլինի... բայց փոթորիկ չենք ունենալ... Հրամանքդ առաջին անգամն ես մեր ծովի վրայ...

— Առաջին անգամն է:

— Զնորհքը կրտսենես մի քիչ... անցեալ օր էր որ տակովն արաւ հինգ նաւակ, բոլորն էլ ցորեն և ոչխար բարձած. մի ամբողջ գիւղ թշուառացրեց — ունեցած չունեցածը ջուրը թափեց...

— Ծախելու էին տանում:

— Այո, վան էին գնում... Նաւավարներից երկուսը ազատել են, միւսները խեղդուել:

— Չէր գիտերից էր:

— Ո՛չ... Այժաւազից էր. լուրը երէկ բերին մեզ... Բայց, վարժապետ, չէ՞ որ այժաւազոց ցաւերն էլ մերինների նման են. մեր սիրտն էլ են դաղում նրանց գժբախտութիւնները... Անցիր ձախ կողմս, որ էլի չըթրջես:

Անցալ ձախ կողմը: Նորից մի ալիք պայթեց նաւակի կողի վրայ և լաց նրա ցուռկը:

— Այո, շարունակեց Թորոսը — ծովն անգամ զուլում է անում մեզ: Սրանից տաս օր առաջ Հարկահանի ցորենաբարձ նաւակները ճանապարհ ընկան: Մի զարմանալի բան էր: Առաջի օրը ծովը փոթորիկից տրաքում էր, բայց լանկարձ հանգարտեց, և անիրաւութեամբ հաւաքւած ցորենը տեղ հասաւ անվնաս... Այլ գէմքը ծուռ մուրտառին տեսնում ես...

— Ո՞վ:

— Լուսինը... Այնպէս լուսաւորել սկսեց, որ կարծես ծաղրում էր մեզ: Իմ նաւակը բերնէ-բերան լցրել էին... Ոստան իջանք. մի հատիկ խոկ չրկորուեց. Հարկահանի ոտքը ուրախութիւնից գետնին չէր զիպջում...

— Իրպէս... ստացի ես:

— Գիպւած... դուչեց Թորոսը բարկութեամբ և աջ ձեռքը թիակը դէմ տուաւ - գիպւած... Ինչո՞ւ այդ դիպւածը քառանուս է, երբ մեր արդար քրտինքն է մէջ տեղ գալիս, երբ մեր ցորենն է գնում, մեր ոչխարները... Չէ, վարժապետ, մենք անիծւած ազգ ենք...

— Այբպէս մի խօսիլ, Թորոս, մենք ինչ ենք արել, որ անիծւած լինինք:

— Չըզիտեմ, հաւատո՞ւ որ չզիտեմ... Ապա ինչո՞ւ է որ ամբողջ տարին ամբարում ենք, սիրտ ենք մաշում, գողում ենք երբ երկնքի վրայ ամպ չըկայ, ուրախութիւնից դժուում, երբ անձրև է գալիս, ահազին կռիւներ ենք սարքում միմեանց մէջ՝ մի հասկ ցորենի համար, մեր բերնից կտրում ենք, մեր երեխայոց մերկ թողնում, արևի տակ ճենձերուում... Քամում ենք, հաւաքում, աշխատում ենք մի խիլ անդամ չըկորցնել և լետո՞յ... Յետոյ գալիս են մի խումբ գալլեր, խփում մեր գլխին և մեծ մասը տանում, իսկ միւս մասն էլ երբ ուզում ենք գործադրել— ծովն է կուլ տալիս... էհ...

Արեց, չուզմամբ դարձրեց գեկի բռնատեղին և նալեց լուսնին:

— Չեզ ո՞վ է ասում տւէք ինչ որ ուզեն. ասացի ես— եթէ մեծ մասը չըտաք, այս փոքր մասի ջրի մէջ կորուելը, — որ պատահմամբ է լինում և ոչ միշտ— ձեզ շատ չի վշտացնիլ:

- Չը տա՞լ, չը տա՞լ... Մի քանի տարի է որ քեզ նմանները այդպէս են գոռում... Չըտա՞լ... Ինձնից աւելի համարձակ, ինձնից աւելի ընդդիմադրող չըկայ զիւզում... Աւ ինձնից աւելի վնասողն էլ չըկայ: Գիւզացիք անգամ ինձ անվարեցող են կոչում, նախատում են... անուսն «ծուռ» են դրել. հարկահաւաքին էլ ասում են.

«բանի տեղ մի դնիլ. Թորոսը կատակ է անում»... Եւ, հարկահանն էլ «կատակով» ինձ աւելի է նեղացնում, ինձնից աւելի վերցնում, յետոյ նոյն տեսակ «կատակով» նաւակա լեցնում և հրամայում որ ձրի փոխադրեմ .. Ատու-
ւած է վկայ, քանի՛-քանի անգամ ուղեցի նաւակը ընկրղ-
մեւ, ցորենն էլ ու շահնալին էլ ջուրը թափել, ինձ էլ
հետը... Բայց, այս անիծած կրծքի տակ սիրտ կայ, խիղճ կայ..

Եւ երկու ուժգին հարուած տեց կրծքին, որից դուրս
թուաւ մի խոր հառուչ:

— Իմ ձեռքս չէ... շարունակեց նա - սոյ, որ ղեկը
այսպէս դարձնեմ, ալիքները դէմ կրգան և կրփշրեն
ամէն ինչ. ո՞վ կիմանար... Ես էլ լողալով կամ կաղատ-
ւէի, կամ ոչ... շատ էլ մէկ ազատելու պէտք չու-
նէի. կրմեռնէի—այդ աւելի լաւ էր... Բայց վերև Ատու-
ւած կայ, որ դատում է մեզ. այստեղ խիղճ կայ... Ա՛ր
մէկին էլ ջրով անես, սր մէկի հաւաքածը ջուրը թա-
փես. ինչու. դրանով կազատե՞նք այդ անիրաւներից...
Այս ալիքները տեսնում ես. հաւատացած եմ որ եթէ նա-
ւակիս միջի ոչխարները Մկրտիչ աղալինը—վաշխառուի-
նը—չըլինէին և ինձ կամ մի գիւղացու պատկանէին—
խսկոյն նաւակը շուռ կըղար, կըփշրէր... Բայց, անի-
րաւ ապրանք է, և, պիտի տեսնես, սղջ տեղն է հաս-
նելու .. Մի պապիրոս չունիս, վարժապետ...

Ջինեցի ու տւի: Վառեց, բուռն շնչով մի քանի
անգամ ծխեց և դէմքը խոժու, վշտերով ակօււած, լուս-
նի տխուր փայլի տակ՝ դէպի հորիզոնն ուղղած՝ մնաց
լուռ և մտախոհ...

Աւ նաւակը սրանում էր, ճեղքում սև ջրերը և ծը-
փում մեծ ալիքների վրայ...

ԵՐԿՈՒԹՈՒՉՈՒՆ



ատշղամբի վրալ էր կախած նրանց
վանդակը: Երկու հատ էին. ա-
րու և էգ: Երկուսին էլ լինից հա-
նել, վանդակի մէջ էին մեծացրել:
Խնամում էին, շատ լաւ կե-
րակրում, ամէն օր էլ տեղը մաք-
րում: Իսկ վանդակը զարդարում
էին կանաչ ծղօտներով, հացաբոյսի փնջերով:

Երբ մեծացան, սկսեցին երգել: Ի հարկէ ո՛չ լաւ,
ո՛չ զւարթ, բայց երգում էին: Եւ գիտակից չէին, որ
իրանց երգը վշտալից շեշտերի մի մեղեղի էր, ստըր-
կական կրճքերից բղխող ողբի համերգ:

Եւ նքանց լսողները յուզոււմ էին, տիրութեամբ հա-
մակոււմ ու ատում.

— Օ՛, խեղճ թռչուններ, սիրուն զեղճանիկներ...

Այդ կերպով էին զգոււմ նրանց, գովասանում հա-
մերգը:

Եւ եղաւ որ մի օր վանդակի դուռը բաց մնաց. մի
ամբողջ օր բաց:

Զարմացան թռչունները, երբ տեսան այդ. զարմացան և իրարու նայեցին: Երկուսի մտքի մէջ էլ ծնել էր, որ այդ լաչն բացւած քից կարող էին դուրս գնալ և այլ ևս զերի չըմնալ:

Գուրս գնալ: Քայց ուր. ինչ կար արդեօք այդ անհուն տարածութեան մէջ, այդ սրպղուն, շողշողուն աստղերի կողմը, այդ արծաթագօծ լոյսի տակ:

Զարթեցին, թառից ցած իջան միմեանց ետևից և մօտ գնացին դռնակին: Քայց չըհամարձակեցին դուրս ելնել. գլուխնին միայն քիչ դուրս հանեցին և վեր նայեցին:

Որքան աստղեր... Իսկ լուսինը, նրա սփռած լոյսի մէջ երևող տների ցից-ցից տանիքները, քամուց շարժւող ծառերի կատարները...

Գուրս չելնել արդեօք:

— Գնանք, շշնջաց էգը:

Քայց չըշարժեցին տեղից. վախենում էին: Երկուսն էլ ջիշեցին վանդակի կողքից սուրալով անցնող մեծ հրէշ-թռչուններն ու նրանց անշաղ, վայրենի հայեացքները: Յիշեցին մանաւանդ խորամանկ կատուին:

Եւ սակաւն բաց դուռը դրաւում էր. ազատ օդը, շողշողուն երկինքը փորձում էր նրանց...

— Պիտ, պիտ, կիւի, կիւի...

Ճնճղուկ էր. երբէք վանդակ չըտեսած, պապերով ու նախնիքներով զերութեան չ'ենթարկւած ճնճղուկ:

Վանդակ էր պատշգամբի ձողի գլխին և վանդակի ներսն էր նայում:

Այդ ինչ էր. երկու թռչուններ էին այնտեղ. և այն էլ աղնականներ, դեղին մեծութիւններ:

Եւ տես մէկ ինչպէս կճկւել կպել էին իրար, երկաթէ վանդակի մէջ պարփակւած: Կերակուր էլ ունէին: Ըպս մէկ տեսնենք ինչ են ուտում այդ գերի մեծութիւնները:

— Կիւի, կիւի...

Եւ նա թռաւ վանդակի գլխին ու նստեց երկաթէ ցանցաւոր տանիքի վրայ:

— Յարև, ձերդ ազնուութիւններ. ինչու էք կճկւել այդ շրջանակի մէջ:

Գեղձանիկները վեր նայեցին: Աչինջ, ճնճղուկ էլ միայն, ստորին տեսակի լեռնական մի թռչուն:

— Ա՛հ, ա՛հ, շարունակեց ճնճղուկը — այդ ի՛նչ ազնու կերակուրներ էլ ունիք. վանդակի մէջ այդպիսի կերակուրներ...

Այն ժամանակ գեղձանիկ-արուն վեր նայեց և ասաց.

— Մենք կուշտ ենք. այս կերակուրը զգւեցրել է մեզ. կուզե՞ս եկ, կեր:

— Ներողութիւն, շնորհակալ եմ. ծիծաղեց ճնճղուկը — երբէք չէի ցանկալ վանդակ մտնել, նույն լակ եթէ ինձ թագաւորութիւն տային այնտեղ... Մի՞թէ դուք հանգիստ էք գրա մէջ... Ես իմ ազատ օդն ու լեռները չեմ փոխիլ ձեր ամբողջ հանգստութեան հետ:

— Մի՞թէ այդքան լաւ է լեռներում և գրտում, ճընճղուկ. հարցրեց էգը ներսից:

— Լաւ... ծիծաղեց զւարթութեամբ ճնճղուկը — ո՛չ միայն լաւ է, այլ հրաշալի, տիկին: Մէկ նայեցէք էհ... Յարձրում, երկնքի կապտութեան մէջ այդ սևին տուղ արտոյաները տեսէք ինչպէս են ճախրում, ինչպէս ձււրլում, պարում .. Չէք զգում ծաղիկներից՝ գեփիւռի ժողոված ու բերած բուրմունքը: Իսկ արև՞ը. տեսէք ինչպէս

այսօրու ու տաք՝ լուսաւորում է, ամէն բանի կեանք
ներշնչում...

— Իսկ եթէ յանկարծ գեփիւռը փոթարկի փոխելի,
արևը ծածկւի և անձրև տեղում...

— Բան... երևի ձեր փայլուն Հագուստների մասին
էք հոգում: Միթէ ծառի խոռոչ, ժայռի ստորոտ և կամ
այլ թագստոց քիչ կալ: Ապա սա ծխնելոյգների գաղաթ-
ները, ապա բոյները—այնքան տաքուկ, այնքան փա-
փուկ ու ապահով...

Էլը թոթուեց իրեն և մօտեցաւ դռնակին:

Այն ժամանակ ճնճողուկը նկատեց որ վանդակը բաց էր:

— Տէր Ասուած, սղաղակեց նա— չիմո՞ր էք դուք
ահա դուռն էլ բաց է, ինչո՞ւ էք ուրեմն կծկւած մնա-
ցել. դուրս եկէք գնանք ինձ հետ ընկերներ իս մօտ—
այնտեղ— ձորում, սիրուն առւակների եզերքին, թփիկնե-
րի տակ լողացէք, զովացէք, ազատ օդ շնչէք...

— Ուրեմն այդքան լաւ է, հա՛, այնտեղ-ձորում. Հարց-
րեց նորից էգը:

— Բայց այ՞, տրիկին: Միթէ չէիք կամենալ, օրի-
նակ, մէկ բարձրանալ մի ծառի վրայ, նստել տերեւների
շուքի տա՛լ, ապա թախահարի՛լ թւերը, սլանալ վեր,
օդը ճղել, օրօրել — ճախրել, իջնել արտը, մտնել Հացա-
Հատիկների մէջ, կոցահարել— կշտանալ և երբ լողնած
ես, գնալ — լւացւել ցատկատող ջրվէժի փրփուրներով և
չհոտոյ անցնել — մտնել ծաղիկների տակ ու ննջել նրանց
սուերներում...

Արու գեղձանիկը, որ կծկւած իր տեղում, լսում էր
լեռնակա՛ն ճնճողուկի բանաստեղծական ոգևորութիւնը,
ասաց հեզնօրէն.

— Իսկ եթէ յանկարծ ուրուրը պնդէ ետեւիցդ և գու-

տակումը կրճքումդ, խելքդ կորցրած՝ ընկնես ամէն կողմ
և պահւելու տեղ չըզտնեն...

— Երևի վանդակի մէջ շատ մնալով՝ կորցրել էք
տեսողութիւնը, գոչեց ճնճղուկը — միթէ աչք չունիք տես-
նելու որ թշնամին հեռւից գալիս է. մտղուկ խօ չէ՛, որ
չընկատուի. հրէշալին մեծութեամբ բան է... Տեսար թէ
չէ, կծիկդ ծալիք և լեռներդ քաշւիր. քիչ թապտոց
կա՛յ ամէն կողմ, ամէն ծաւի խռուջի մէջ, ամէն ժառի
խորքում: Մի բոպէ—և վտանգն անցել է. այնուհետև
գուրս կըզաս, մի լաւ կըծիծաղես և կըսկսես ուտել,
պարել, ազատ օդ ծծել ու ճախրել...

— Այո, այդ բոլորը լաւ. խօսեց նորից չուետես
արուն.— միայն մոռանում ես, ռամիկ կարճամիտ. որ կա-
րող են արտերը քաղած լինել և դու օրերով տաք արևի
տակ կըթափառես սուանց ոչինչ գտնելու, ծարաւից կը-
պապակւես՝ առանց ջուր տեսնելու...

— Մ'հ, ձերդ ազնուութիւն. ծաղրեց ռամիկ ճնճղու-
կը — չէիք կամենալ որ այդպէս ժամանակ ռամիկներս
զնայինք և մարդկանց դիզած կալերից՝ ձեզ համար հա-
ցահատիկներ բերէինք և հազարաւոր աղբիւրներից էլ
ջուր...

—

... Եւ էգ զեղձանիկը, որ մինչև այդ ժամանակ ան-
յազութեամբ լսում էր, լանկարծ մի ոտտիւնով գուրս
թռաւ վանդակից ու նստաւ ճնճղուկի կողքին:

Որպէս բարախում էր սիրտը, որպէս դողում էր նա:

— Մ', օ... գոչեց ներսից սարափած արուն: Ճնճղուկն
էլ մի վայրկեան խօսել չըկարողացաւ:

— Թշնամ, աղաղակեց արուն իր ընկերոջ—այդ լինչ
արիբ, շուտ, ներս եկ, քանի կատուն չէ հասել:

Էղբ բնագգմամբ կձկւեց, շուրջը նալեց և կպաւ ճնճղուկին:

— Մի վախենալ, տիկին, ծիծաղեց ճնճղուկը— կատուն ալտեղ չի հասնիլ. և եթէ հասնի էլ, ինչ կարող է անել:

— Ի՞նչպէս թէ ինչ...

— Այն, բաւական է քիչ զգուշ լինել և շրջահայեաց տեսար կատուին— թռիլը գէպի վեր և ամէն ինչ վերջացել է: Քաղաքները գէպի վեր թռնել չըրկտեսն. նրանք միշտ գետնի վրայ են սողում... մենք ինչ դործ ունինք գետնի երեսին:

— Իրաւ է. սոաց տիկինը— և ինչ լաւ էլ է ալտեղ, ազատ. . . որ կողմ ուղեհաս: կը թռչես... Յի ալտեղ, բնկեր, գնւրս եկ մեզ մօտ:

— Ատուած ո՛չ անէ, գոչեց արուն ներսից . ստել են որ կնտջ խելքն էլ աւամկի խելքի պէս կարճ կըլինի— ալթմ ճիշտ գուրս եկաւ: Պիտի սուժես լիմարութիւնդ, կին գու, բաց ուշ կըլինի...

— Այլի, կիւի, ձերգ վախկոտութիւն, քրքջաց ճրնճղուկը— մնացէք ուրեմն ձեր երկար խելքով՝ վանդակի մէջ, լակ մենք, մեր կարճ խելքով՝ կերթանք ազատ ապրելու... Այնպէս չէ, տիկին, կըրգաս:

— Գնանք:

Ու թռան:

— Պիտե, պիտե. կանչեց բարձրից ճնճղուկը— եկ, եկ մեզ հետ...

Քաջ արու գեղձանիկը վանդակի մէջ կձկւած՝ նայում էր գէպի վեր սլացողներին և սարսափից գողում:

Քիչ յետոյ մի վերջին «կիւի, կիւի» ևս լուեց և ապա երկու թռչուններն անհետացան երկնային կապտութեան խորքերում:

Յւ մնաց արուն վանդակի անկիւնում կձկւած, աչքերը ազատ անհունութիւն դարձրած, դէպի անծանօթ, աներկաթ և անվանդակ հայրենիքը: Յւ այդպէս անշարժ, կերակրի ու ջրի մօտ կուչ եկած՝ երազում էր, տրամաբանում... միմիայն երազում, տրամաբանում...

Երեկոյեան գէժ տանտիկինը տեսաւ բաց դռնակը. տեսաւ որ էգը խուսափել էր, ազատութիւն ստացել:

— Չար... գոչեց նրա հասցէին:

Յետոյ գննեց փխրստփոյարանող, տրամաբանող ու հանդիստութիւն սիրող արուին՝ կձկւած վանդակի անկիւնում.

— Տխմար... ասաց արհամարհանօք, և վանդակի գուռը փակեց:

—

... Այս զրոյցը մի տիկին պատմեց ինձ:



ՀԱՅԿԱԿԱՆ ՄԵՂԵԳԻՆՆԵՐ

(Մեծակ բանաստեղծութիւններ)

«Եթէ աշխարհը հառաչանք չունենար,
աշխարհը կրիսեղզւէր» ..
Ա.ԿԺ. ԳԻՕՂԷ.

I

Մ Ա Յ Ա Յ



ձկնած պատի գէմ, վտխտ, մոմա-
զոյն, հիւանդ ու նկուն, երկար
հասակը կորացրած, զէմքի վրայ
վիշտն ու տանջանքը գրողմած
— ձեռք էր պարզում անցորդնե-
րին:

Եւ այդ ձեռքը այնքան կրճ-
կած ու դողդոջուն էր, այնքան
ամօթով ու վախով կարկառած, որ նման
չէր մուրաց-
կանի երկար պարզուող թաթին, աներեսութեամբ խնդրող
շարժման:

Հագել էր խեղճ, ո՛չ պատառոտուն: Անցեալ բարօ-
րութեան նշույններ, ճմլւած կեղտոտ թէլատների տախ-

տակներին, ծածկւած փոշիով, կերւած ախտից, մասնը-
ւած անհողութեան, ծալմաշ էին եղել, զակացել մէջ-
քի, թիկունքների վրայ. ու մի զլխարկ ունէր, որ գու-
ցէ բարձի տեղ էր ծառայել թշւառութեան անկողնի
վրայ—ճմրտիւած ու այլանդակւած, ծածկում էր ալժմ
նրա ալևոր զլուխը:

Կծկւել էր պատի գէմ, ձեռքը կարճ ու վարանոտ,
պարզում էր անցորդների, աչքերը յուռահատ ու արտա-
սունքով լի՝ նայում էին հեշտակեացների և շրթունքնե-
րը հազիւ լսելի, ողորմ մրմունջով՝ շշնջում էին.

—Ողորմեցէք!...

—Գործեցէք... պատասխանում էին նրան:

Եւ երբ այդպէս նրան մերժում էին, լուռ էր, ձեռ-
քը ետ քաշում, մոլորւած աչքերով անցողարձը զիտում,
ցրտի գէմ պատուպարելու համար վերարկուի մէջ կծկը-
ւում, ամօթից փախչելու համար՝ պատին էր սեղմւում...

Ու անցնում էին:

Ահա մի ծերունի: Բարի գէմք ունի. գուցէ տեսել
է թշւառութիւն, զխտէ, ինչ է անօթութիւն. գուցէ
զխտէ, որ մարդ կարող է գործել զխտենայ՝ բայց գործ
չբոցանել. զխտէ որ մարդ կարող է գործել փախաղել,
բայց գործ չբոցանալ, օտար լինել—լեզու չբահասկա-
նալ, կամ հիւանդ՝ աշխատանքի ոյժ չունենալ: Գուցէ
կրել է ցաւեր, իր պէս՝ տանջանքներ և այդ բոլորը նը-
րան բարի են դարձրել: Չէ՛ որ մարդ քանի տանջանք
տեսնի, այնքան պիտի բարի... կամ չար լինի...

Բայց շարժւում է, ձեռքը կարկառում.

—Ողորմեցէք...

—Ա՛խ, գու ծերուկ ցոփ...

—Ես գաղթական եմ:

— Քաղթականն... ինչո՞ւ չըմեռար Հայրենիքիդ մէջ:

— Մեռնել կուզէի, բայց ծեր եմ. ապրելու փափագը մեծացել է, կամքիս ոչժը թուլացել...

— Քնն, ոչինչ չունիմ...

Աչի՛նչ չունի. իրե՞ն պէս չունի:

Թողեց որ անցնի: Լուռ ու ընկճեաճ, քաշեց մի անկիւն և մտքովն ամբողջ սաւառնեց հեռուն... Հեռուն, ուր մի տարի առաջ ինքն էլ անցնում էր բազմութեան միջից՝ պատսպարեաճ ցրտից, անձրևից, քամուց, գոհ՝ իր դրութեամբ, իր աշխատանքով, բարի՝ դէպի թշուառն ու խեղճը, աղքատն ու ալրին:

Մի տան գլխաւոր էր նա այն ժամանակ. մի տան, որի մօտից անցնող աղքատին չէին թողնում ձեռք պարզելու. ուր կերակրում էին տասնեակ թշուառներ և ուր գլխաւոր ծեր տանտիկինը խնամում էր նրանց, իսկ տանուտէրը հետաքրքրում, ցաւերն իմանում, չուզում անկեղծօրէն ու դարման տանում:

Բայց եկել էին սև օրեր և այժմ ահա, մեծ քաղաքի անձանօթ փողոցում, պատին կռթնած, վշտալից ու մենակ, ձեռք էր կարկառում:

Աչի՛նչ չէր մնացել անցեալից. բոլորին կոտորել էին, ցրել, ոչնչացրել, տունը աւերել, ունեցածը կողոպտել և որպէս ծաղր՝ թողել ծերունուն մութրալու, գոյութիւնը անիծելու, վշտերը լալու:

Գործ չէր գտել, արհեստ չունէր, լեզու չըզիտէր: Կուզէր սակայն գործել և ո՛չ թէ մութրալ: Այդ օրն էր միայն վճռել փողոց ելնելու: Թէյատանը քնելու վարձ չէին ուզում և ոչ էլ նրան անօթի թողնում. բայց, անձնասիրութեան զգացմունքի մի բոպէի ճնշման տակ դուրս էր նետել փողոց, թողել էր որ անցնեն իր մօտով շատ

Հեշտակեացներ, ի վերջոյ, չորս տանջալից, ջրերը կճկող փորձերից լետոյ՝ պարզել էր ձեռքը...

Մի տիկին էր անցնողը: Նրա ափին գրել էր Ծ կոպէկ:

Նայել էր գրամին ու լացել... Ապա փախել էր մի խուլ փողոց. կարծել էր թէ պիտի ճանաչէին իրեն, կարծել էր թէ ամէնքը գիտեն նրա ո՞վ լինելը, ամէնքը տեսան նրա մուրալը, բայց ոչ մեռնելը...

Ահ, այո, մեռնել կուզէր, բայց ծեր էր. ապրելու փափազը մեծցել էր, կամքի ուժը թուլացել:

Չը գիտէր ուր էին գաւակները. կնոջը սպանել էին, աչքի առաջ սպանել, աղջիկը փախցրել. որդին 800-ի Հետ կորել էր... տուն—տեղը աւերակ գարձել...

Մի ամիս էր որ այդտեղ էր, գործ չէր գտել: Հայրենակիցները քիչ հոգացել էին նրան, բայց չէր կարողացել գիմանալ բեռ դառնալու: Ուզել էր աշխատել, վատակել... Եւ փողոցն էր ելել...

— Գործիր... ծերուկ ցոփ... մուրացիկ, կորիւր...

Ասում էին նրան երիտասարդ, ծեր, կին, երեխայ.

— Ասումս՞ տայ...

Գոչում էին ամէնքը... և Ասումսը միայն աւել էր, կորզել, խլել ամէն ինչ...

Կճկել էր պատի մօտ, վտիտ, մոմագոյն, Հիւանդ ու նկուն, երկար Հասակը կորացրած, դէմքի վրայ ամօթն ու վիշտը դրոշմւած. և ձեռք էր պարզում, մի ձեռք փարանոտ, դողդոջուն և խեղճ:

Ու կառքով անցողները սիգածեմ, Հպարտ, ցեխ էին նետում նրա ձեռքի մէջ...



ստամածս մեծ շէ, միայն մի հս-
ռաչ, այն էլ սպատահած 'տա-
րիներ առաջ:

Վանայ լճի մօտ մի շքեղ
գիւղ կար և այդ գիւղի մէջ եր-
կու սիրողներ: Մէկը Սհակն էր,
միւսը Զողեր: Երկուսը վաղուց սի-
րում էին իրար, երկուսն էլ ապրում մէկմէկու համար:

Աշխարհը նրանցն էր: Սհակին—Զողերն էր կեան-
քը. Զողերին՝ Սհակն արևը: Աւ քաշւած նրանք բնու-
թեան գրկում, սիրում էին, ապրում, կեանքը վայելում...

Ո՛ դու, որ սիրել ես և կամ սիրում ես. թշւառ ես,
եթէ չունիս մի հրեշտակ, որ երբ նայում է քեզ—իրեն
մուանում, երբ խօսում է քեզ—ապրում է, շնչում, երբ
ձայնդ լսում—հալում է և երբ դալդ զգում—մարում է
սիրուց...

Այգպէս էին ձողերն ու Սհակ. այգպէս նրանք սիրում, այգպէս կեանք վարում:

Քաց մի օր լանկարծ, «հաւարն» ընկաւ զիւզ, տակն ու վրայ եղաւ մինչև յետին հիւզ: Քիւրզներն էին—անգութ ու վայրագ, որ զիւզը մտած՝ թալանում էին, այլում ու քանդում և ինչ արգելք կար—մորթոտում անցնում: Ո՛չ կայք էր մնում, ո՛չ սրբատեղի, զիւզն ամբողջ զոհ եղաւ սրի. ինչքան արու կար՝ կոտորեց, ինչքան աղջիկ կար՝ առևանդեց:

Եւ հինգ լսելիշ քիւրզ մտան այն պարտէզ, ուր Սըհակն ու ձողեր ունէին իրենց սիրոյ անկիւններ:

Ջարգեցին, փշրեցին, ոչինչ չըթողին: Նրանցից մէկը ցած ձգեց Սհակին և սուրը շողացրեց նրա մատաղ գլխին:

—Մի... գոռաց ձողերը—դա իմ կեանքն է, դա իմ արևն է:

—Աղջիկը սիրունն է, ասաց քիւրզն անգութ և խլեց նրան սիրողի գրկից, ապա շողաց մի սուր և ձողերն էլ ոչինչ, ոչինչ չըտեսաւ...

—Հոգիս առ, Աստուած... գոչեց նա դարձած գէպի այնտեղ, ուր վազուց ի վեր անձայն՝ կար հայու Աստուած.

—Հոգիս առ, Հոգիս. Սհակից յետոյ՝ վերջ տուր իմ կեանքիս...

Եւ Աստուած նրա հոգին չառաւ: Ձողերը միայն թըռչունի կերպարանք հազաւ:

Մի տխուր թռչուն, սանդրիկը գլխին, որ ոտոտում է ծառերի ծալլին, վազում այս-այն կողմ, մտնում խոտերը, քրքրում մացառներ, տակն ու վրայ՝ թփեր և աղիողորմ ու միշտ լալագին ձայնում է կանչում.

— ՍՀակ, ՍՀակ, ՍՀակ !...

Եւ միշտ վաղում է, միշտ էլ փնտռում, միշտ այս-
այն կողմ զննում.

— ՍՀակ, ՍՀակ, ՍՀակ...

—

Պա մի թռչուն է, որին Հայր վաղուց ճանաչում է:
Նայեցէք ահա. անցաւ այս կողմից, կանգնեց այն ծառի
մի ճիւղի վրայ. լետոյ ետ նայեց, աջ ու ձախ զննեց ու
յուզիչ ձայնով՝

— ՍՀակ, ՍՀակ, ՍՀակ...

Անունն էլ հէնց այդ է. «ՍՀակ-ՍՀակ»:

—

Մի հառաչ էր, չէ՞, պատմածս զրոյց:

Անող, այդ օրւանից անցան տարիներ, բայց որքան
շատցան «ՍՀակ—ՍՀակ» ձայնող թշւառ թռչուններ:

Ղատացան... Էլ այդ կողմերում ուրիշ թռչուն կան.
մանաւանդ այս վերջին երկու սե-սե տարիներ...

Ո՞ր կողմ դառնաս, որ ծառը գիտես, որ գիւղի կամ
քաղաքի մէջը որ մտնես, ոչինչ չես տեսնիլ, եթէ ոչ՝
այդպէս խղճուկներ, որբուկ թռչուններ, որոնք մեկամար-
ձիկ, տխուր, լալագին, օգն են հնչեցնում երգով, հառա-
չով. — «ՍՀակ, ՍՀակ, ՍՀակ...»

Ամէն ոք իր ՍՀակն է ողբում—ՍՀակ՝ տապաւրած,
ՍՀակ խողխողած, ՍՀակ զոհ եղած, ցրւած ու կորուած...

Մ Ե Ր Կ Գ Է Ր Ի Ի Շ Ը



նչպէս շները, այնպէս և մուրացիկները թէհրանում, ունին իրենց քաղաքամասը, որից այն կողմ անցնելու և մուրալու իրաւունք չունին մի առ ժամանակ: Այդ բաժանումը, մի քանի ամսից, ըստ երևոյթին, փոփոխութեան է ենթարկուած: Մի քաղաքամասի մուրացիկը, որ մի քանի ամիսներէից ի վեր անդադար անցորդներին ձանձրացնում էր, յանկարծ մի օր էլ չըկար և մի քանի օրից յետոյ պատահմամբ հանդիպում էի նրան բոլորովին ուրիշ թաղում:

Քաց ինչ որ շատ երկար էր նստում այնտեղ այն մերկ գէրւիշը, որին միշտ տեսնում էի Ղալաղարի փողոցի ծայրին, ձիաքարշի վերջանալու կէտի մօտ պսղած:

Նստել է պատի տակ, աւատրիական դեպանատան կողքին՝ եթէ փողոցը քիչ չոր է: Եթէ շատ ցեխ է լինում, բարձրանում է Ղալաղարի այգու պատից դուրս ցցած մի պատանդառնի վրայ և նրա երկու ոտնաչափ լայնութիւնում կուչ է գալիս — մնում:

Փաթաթլաւած է մի միակ վերարկուի մէջ: Աւրիշ հագուստ չունի: Առանց չափազանցութեան, ալ վերարկուն բաղկացած է հարիւր տեսակ ամէն ձևի, ամէն դոջնի և ամէն մեծութեան կարկատաններէց, որոնք միմեանց են կցած հաստ թելերով: Գերուիշական վերարկու է և իրենք դէրուիշներն են շինում: «Հգարմիլխ» են կոչում նրան:

Երբեմն, երբ տեղաւորելու համար բաց է անում վերարկուն, երևում է նրա բոլորովին մերկ անկամները սեւացած ու կապտած՝ ցրտից ու կեղտից:

Գլխին ունի թասաձև, թաղեալ սեւացած զլխարկ, որի տակից դէպի նեղ ճակատն ու քունքերն են իջնում պեխառն ու միմեանց կպած մաղեր:

Գէմքը փոքր է ու կարճ, աչքերը խոր և երազող-կարծես նայում է, բայց չէ տեսնում: Խիստ դժգոյն է, ձեռքերն ու ոտները նիհարացել, ոսկոր են կտրել, մումիալի նման եղել. իսկ մօրուքն ու բեխերը միմեանց խառնել՝ անհետացրել են շրթունքները իրենց մէջ:

Միշտ պապած է. տեղիցը չէ շարժւում: Եւ որովհետեւ ցուրտ է, ունի ծնկների վրայ, երկու ձեռքով բռնած հողէ մի փոքրիկ կրակարան, որի մէջ, մօտակալ հացթուխից առած մի բուռ կրակը նա աշխատում է միշտ վառ պահել, տաքութիւն ունենալու համար:

Երբ մի օր էլ անցնում էի կողքից, կանգ առի քիչ և ուզեցի տեսնել թէ ինչէր անում այդ ալլանդակ դէրուիշը:

Չէր աղօթում. ոչ էլ երգում էր: Անցորդներ շատ կային, բայց ողորմութիւն իսկ չէր հայցում: Զգւած ու խամրած հայեացքով դիտում էր և չէր տեսնում: Եւ անցորդներն՝ անցնելիս յաճախ նրան էին նետում մի սև փող: Գրամբ ընկնում էր կողքին կամ գողը: Չէր շարժւում. թողնում էր որ հաւաքւի:

Երբ մօտեցայ, զգաց Հալեացքս, ծանրութեամբ գլուխը բարձրացրեց: Հաղիւ նշմարեող Հեղնականի նման մի ժպիտ սահեց գէժքի վրայ, աչքերի անկիւններում:

— Գու գէրւիշ ես, Հարցրի:

Գլխովը բացասական նշան արաւ և վերարկուն լայն բաց արաւ: Լիովին մերկ էր. կրակարանը աշխատեց գնել ոտների արանքում. կկգել էր: Յաջողեց վերջապէս, տեղաուրեց, ծածկեց ներսում կրակարանը քղանցքներով և կիսախուփ աչքերը նոյլից ինձ վրայ սևեռեց:

— Աֆիօն ես ծխում, կարծեմ. Հարցրի ես:

Գլխովն այս անգամ զրական նշան արաւ: Աւ գընում էր ինձ. ոչինչ չէր ինկրում:

Մի քանի լոպէ լուս նայելուց չետոյ, չանկարծատաց մի խուլ, անդնդալին ձայնով.

— Ձեր երկրումն էլ աֆիօն ծխում են:

— Ա՛յ... գա թոյն է. մեզնում մարդիկ չեն սիրում իրենք իրենց թունաւորել:

Փպտեց և ասաց.

— Ուրեմն ձեր երկրում մարդիկ ցաւեր չունին:

— Ինչո՞ւ չէ. բայց միթէ Հարկաւոր է աֆիօն ծխել, երբ մարդ ցաւեր ունի:

— Գու սկի ծխել ես աֆիօն.

— Օ՛, ո՛չ...

— Ուրեմն չես կարող Հասկանալ: Բայց գուցէ լսել ես, որ ծխողը փոխադրում է երազի մի երջանիկ աշխարհ, ուր ցնդում են նրա բոլոր վշտերը. ուր նա ազնտ է թշւառութիւնից, տանջանքից... Այդ չրգիտնօ գու...

— Այդպիսով ուրեմն գուք ձեզ մխիթարում էք:

— Այ թէ մխիթարում ենք, այլ աշխատում ենք:

մոռանալ... Մոռանալ... Քիչ բան կալ մոռանալու...

Այդ միջոցին մի ազմուկ բարձրացաւ փողոցում: Հեռւից նախ երևացին գէպի մեզ արշաւող վեց պարսիկ ձիաւորներ երկու կարգ շարւած. նրանց ետևից սրանում էր չորս ձի լծւած մի բաց կառք, որի մէջ փքւած բազմել էր մի պարսիկ ազնւական, հագած թիրմայի թանկագին շալից շքեղ մուշտակ:

Մի խումբ աղքատներ ցնցոտիներով — կանայք կիսամերկ, մանուկներ՝ ցեխաթաթախ, սրսրթալով, ատամները կարկափելով — վազում էին կառքի երկու կողմից՝ ձեռքերը պարզած, աղաչաւոր ձայներով.

— Աղա ջան, մի դրամ...

— Տէր իշխան, մի սև փող...

Փողովուրդը ճանապարհ էր տեղի. կառքը սրանում էր. ցնցոտիներով տասնաւոր մուրացիկները ճգփացնելով ցեխն ու ջուրը՝ վազում էին և ազնւականը փքւած՝ դիտում էր անհոգութեամբ այդ բոլորը:

Մերկ գէրելիքը ինձ նայեց, լետոյ ազնւականին և ասաց.

— Հարկ չէ մոռանալ այդ... կարելի է առանց աֆիսոնի...

Մի քիչ լռեց. լետոյ լանկարծ աչքերը փայլեցին:

— Մեր նահանգապետն է. շարունակեց նա — երկիրը հարիւր-հազարով գնել է, որ երկու հարիւր հազար շահի... և ահա թէ որպէս է շահում... Հարկաւոր չէ ծխել: Ինձ երբեմն թւում է, որ այս բոլորը երազ է և որ երբ աֆիսոն եմ ծխում, այն ժամանակ միայն մտնում եմ իրական կեանքի մէջ, այն ժամանակ միայն զարթնում եմ քնից... Մի, ծխիր աֆիսոն, տէր, և պիտի տեսնես թէ որպէս կրճատանաս այդ բոլորը, այդ ցաւերն ու

անիրաւութիւնը... Փողոցի մէջ, պատերի տակ, ցեխի անկողնի վրայ է, որ պառկում ենք մենք, իսկ մեզնով հարստացողը թիրմալի շալի մուշտակով է զբօսնում...

Յետոյ մի դանդաղ ակնարկ էլ ձգեց քիչ-քիչ ետ մնացող մուրացիկներին վրայ, սլացող կառքին, և երբ կձկոււմ էր վերարկուով՝ ասաց.

— Կեանքը, երջանկութիւնը միմիայն քնելու մէջն է. իսկ այս բոլորը երազ է, վատ կոշըմար... Անցիր, տէր, մի խանգարիր քնելու...

Ու ամփոփւած, գլուխը խոնարհած՝ անշարժացաւ:

Երբ վերադառնում էի, գէրւիշը միշտ նույն տեղն էր, միշտ անշարժ, գլուխը կրծքի վրայ, ինքնամոռացութեան մէջ...



Ա Ր Տ Ը



նիից էլ վերադառնում և անցնում էի հայկական մի գիւղի միջով:

Գիշերը սաստիկ անձրև էր եկել. այնքան սաստիկ, որ շատ պատեր ու խրճիթներ փլեցրել էր: Փողոցներից հեղեղներ էին վազում կշկշալով: Երկինքը միաձուլ կապարագոյն ամպերով ծածկած էր.

գեռ էլի մէկ-մէկ անձրևում էր:

Լոյսը նոր էր բացել: Կանչում էին մի քանի ուշ մնացած աքաղաղներ, զօզանջում էին եկեղեցու զանգակները: Խրճիթների երթիկներից սկսել էին ծխել սիւնակներ խիստ ծանրութեամբ բարձրանալ և տարածել տանիքների վրայ:

Ձիուս սանձը քաշեցի. և ո՛չ իսկ արագ քայլել էր Հնարաւոր, փողոցներում առւակներ էին դոյացել:

Գիւղի վերջին խրճիթին էի հասել, երբ նրա գուռը ճռնչաց, գոմի ներսում կովի բառաչը լսեց, մի քանի մանուկների ճիչեր ականջիս հասան և առաջս դուրս եկաւ մի ալեգարդ ծերունի, բա՛հը ուսին:

Մի վայրկեան ինձ նայեց, լետոյ պատերի տակով
անցք փնտուեց քայլելու:

Քիչ լետոյ գիւղից դուրս էինք եկել: Ես էլ նրա
քայլերով սկսեցի գնալ:

Իէ՛մ ու դէ՛մ, ալիքաձև բարձրանալով, մինչև մշու-
շալից հարիդօնն էր տուածու՛ում սև լեռնաշղթան: Նրա
կուտակած տարածութիւնը վերևից թաղնու՛ում էր մա-
ռահուղի մէջ և ցածի կողմից ճգփու՛մ թացութիւնով:
Չիւն էլ թւում էր որ կար, բայց շնտ հեռու. ամպի
սպիտակ շերտեր լինէին կարծես: Թանձր, սևազօն-սպի-
տակախառն մշուշը ծանրացել էր նսեւ ձորերի և հո-
վիտների, լեռների և բլուրների շուրջը: Տեղ-տեղ, ցան-
ցաձև, երկնքից գետին իջնող շեշտակի գծերը ցոյց էին
տալիս, որ խիտ անձրև էր տեղում զանազան կողմե-
րում: Երևում էր որ ամպերը գեռ շատ ջուր ունէին և
արդ գծերը պիտի քայլէին: Մշուշի քուլաներ էր, որ թա-
ւալում էին բլրակներն ի վար, քարշ գալիս ցրում դէ-
պի դաշտերը... և արօտների կանաչ խոտերը, ալտերի
ցորենի հասկերը կռայցել էին զլուխնին կաթիլների ծան-
րութեանը տակ:

Ծեւունին սկսել էր աւելի հանգարտ քայլել: Նրա
հնամաշ տրեխներից ջուրը հոսում էր գուլպաների մէջ,
ոտը թրջում: Խոնաւութիւնը թափանցում էր բաց կուրծ-
քը և վերարկուի վրայ մշուշից կաթիլներ էին զիգօ՛ւմ:

Անցնելով, մի առ մի դիտում էի երկու կողքի ար-
տերը: Չատիրի միայն մի քանի ակօսներն էին աւրել և
մէջ տեղերում լճակներ գոլացել: Մի քանիսները լիովին
ողողել էին: Ջրի հոսանքները արմատախիլ էին արել,
քշել-տարել ցորենի դալար ծիլերը և հաւաքել ակօսների
մէջ: Յիս էր գոյացել ամէն մի փոքր շաւիղի վրայ, ամէն

մի փոսի մէջ պղտոր, կարմրազօյն ջուր էր կլուել և շատ հասկեր լողում էին նրանց երեսների վրայ, որպէս խեղդւածներ:

—Վահր, փոխ, արեց ծերունին:

Ու առաջ գնաց:

Բայց վնասն ընդհանրապէս շատ էլ մեծ չէր երևում: Հողը դիմացել էր. երևում էին բոլորովին չբիջացած արտեր անգամ. ծիլերը դիմացել էին և այժմ դարթութեամբ ցցել էին սկսում իրենց գլուխները. միայն թէ կաշին այնպիսիները, որոնք ոտաբորիկ էին դարձել, արմատը մերկացրել: Ջուրն էր այդպէս շինել նրանց:

—Է՛հ, փառք Աստծոյ. խօսեց ծերունին՝ տեսնելով դրանք— շատ էլ վնաս չի եղել:

--Քո արտն էլ այդպէս կըլինի, ծերունի, որտապընդեցի նրան:

Ընխօս՝ գլուխը երեքուց: Կասկածում էր, հայեացքը միշտ դէպի հեռուներն էին: Այդպէս քայլելով մենք հեռացանք գիւղից և լիտոյ ծուռեցինք դէպի լեռները:

Փռւելիս, ծերունին մի բոպէ կանգ առաւ և աշխատեց հեռից նշմարել իր արտի գլուխները:

--Ո՞րն է արտդ:

— Այն բարձրինը:

Ինչ որ ջրի հեղեղատներ էին հոսում այնտեղ, ջրակոյտներ փալիլում: Մի գուցէ այդ ջրերը նրա արտի միջովն էին անցել, ամէն ինչ սրբել—տարել:

Կերունին դունատեց:

— Տունս քանդուել է... մրմնջաց նա:

— Միթէ վնասուել է:

--Չըզլիտեմ դեռ... ասաց նա խեղդւած ձայնով— գուցէ աչքերս չեն տեսնում... ծերացել եմ...

Առաջ գնացինք: Մօտենում էինք: Քայլելն աւելի
 դժուարանում էր. վերևից գլխիժէ, ցեխի հեղեղ էր, որ իջ-
 նում էր ցած, խառն՝ ծիլերով, ցողուններով...

Ծերունին հետո էր. շունչը կտրւել էր: Քիչ էլ
 քայլեցինք: Ի՛լ կանաչ չէր երևում. էլ ոչինչ. ցեխի հեղեղ
 և ջուր էր որ տեսնում էինք, աւերէ՛չ, ապականիչ հեղեղ...

Մի քանի քայլ անելուց լսոոյ կանգ առաւ ծերու-
 նին և բա՛հր ուսից ցած թողեց:

Իր արտի կողքին էր: Թշուառ արա...

Վերևից, փոսերի մէջ գոլացած ջրերը պատուել էին
 իրենց թումբերը, ուժգնութեամբ ցած հասել և գրեթէ
 սրբել էին արտը: Տեղ-տեղ, օաղիւնների պէս մնացել,
 իրենց մերկ արմատներն էին ցոյց տալիս՝ ցորենի ծիլի
 կղզեակներ: Երկար, կանաչ երկար շերտեր միմեանց
 վրայ, արմատախիլ, ջարդւած, հոգեվարք՝ սահել էին ամէն
 ուղղութեամբ և թաթախուել ցեխով: Ամանք մինչև վիզը
 խրւել, ուրիշները հազիւ մէջքն էին երևցնում...

Հողն ամբողջ կանաչել էր նրանց գիակներով...

Եւ անձրևը տեղում էր, տեղում, ու իր մեծ կա-
 թիլներով ճգփայցնում լճացած ջրերը:

Ընկաւ բա՛հր ծերունու ձեռքից. աչքերը մթնեցին,
 ճնկները կթոտեց և նա տեղն ու տեղը, իր ընտանիքին
 կերակրող ցորենի գիակների կողքին՝ նստեց ու գլուխը
 ձեռքերի մէջ ծածկեց...

Արշաւանօք հեռացայ: Մխիթարականն ո՛չ մի խօսք
 ասելու սիրտ չուներայ: Աւելորդ էլ էր:

Եւ երբ հեռւից ետ նայեցի, տեսայ թշուառ ծերու-
 նուն, միշտ նոյն գիրքի մէջ, նստած իր աւրւած արտի
 կողքին, գլուխը ձեռքերի մէջ և ալեգարդ մաղբրը տե-
 դացող անձրևի տակ...

ԼՈՒՐ-ԳԸ-ԼՈՒՐ

(Քրդական պոեմա)



Ինտեղ — Սև ջրի չքնաղ եզերքներին էր, որ ապրում էր Հասոն: Երկրի սիրուն և քաջ պատանին էր նա: Աչ մի մարդ նրան չէր կարող զինաթափ անել: Ասագակը սիրտ չունէր նրա հօտի շուրջը ման գալ և ոչ իսկ գալը ոչ իտարի կողքին քարշ գալ: Հասոն որքան որ բարի էր դէպի լաւը, այնքան էլ անգուժէր դէպի չարը:

Սիրուն էր Հասոն, նոր ծագող արևի պէս չքնաղ: Երկրի աղջիկների խելքը գնում էր նրան տեսնելիս: Հագա նրա նազելը: Նրա սրնդից հանած ձախները կարելի էր որ հրեշտակներն ունենային — այնքան գրաւիչ, այնքան սիրալուրդ: Չախներ, որոնք հոտում էին մեկամաղ-ձիկ, կէղզում էին որպէս հեղիկ վտակ, գալլալում, որպէս սիրահար սոխակ:

Փարզ թէ անասուն, ալդ ձախը լսելիս, ակամալ

մօտ էին գալիս, քարանուձ, և աշխատում էին չըկորցնել ո՛չ մի խաղ, ո՛չ մի գեղգեղանք:

Նստում էր Հասօն ժայռերի գլխին, աչքերը ուղղած լայն հորիզոնին, Սև ջուրը գալարապտոյտ ստեղծելի տակին, զզզուն գեփիւււր խաղում ճակատին...

Եւ նա նւագում էր:

Պէտք էր տեսնել թէ ինչպէ՛ս գամփունքը գլուխնին թաթերի վրայ, աչքերը սրնգին, գառնապէս լալիս, Հեծեծում էին:

Պէտք էր տեսնել թէ ինչպէ՛ս ճշխարներն այն անմիտ՝ մուսցել էին ուտելը ու մօտ գալիս:

Հասօն քարերին էր գողացնում, Սև ջրի ալիքները զուգում, բնութիւնն էր քարացնում, գեփիւււին ողբացնում — ամէն ինչ շարժում, հրեշտակների նախանձը գըր-գըրում:

Այդպէս էր Հասօն:

Էլ ինչպէ՛ս ոչխարները չըհնազանդէին նրա երգի ձայնին:

Ինքը չէր շարժւում. ոչխարներին նւագով՝ կանչում էր կողքին:

Արածացնելու համար՝ «բէրիկը», ջրելու համար «խօ-գաթը» և հեզ անասուններին շուրջը ժողվելու համար՝ ածում էր «ոչխարի կոչը»:

Ոչխարները լսելուն պէս՝ թողնում էին ամէն ինչ, անցնում ամէն բան, գալիս Հասօի շուրջը հաւաքում:

Ապրում էր Հասօն այդպէս երջանիկ, հեռու մարդկանցից, բնութեան գրկում, լեռների կրծքում: Երջանիկ էր նա որպէս մի իշխան՝ սիրւած իր հօտից, նւիրւած իր երգերին:

Բայց մի օր Հասօն տեսաւ աղալի միակ աղջկան: Տեսաւ ու սիրեց:

Սիրուն էր Զալխէն: Կախարդիչ՝ աչքերը, սալի էր բոլը, կամար՝ ունքերը, գոգտրիկ՝ թշերը:

Զալխէն էլ տեսաւ Հասօին. Զալխէն էլ սիրեց Հասօին: Տխրեց խիտ Հասօն: Կորցրեց աշխուժութիւն, կորցրեց գլարթութիւն: Օրերով պտույտ էր գործում պալատի շուրջը, մինչև իսկ եթէ ոչխարն այնտեղ ուտելու խոտ չըզտնէր: Աչքը աշտարակին, նւագում էր տխրագին, սիրտը սրնգի մէջ գնում ու արտաւում:

Զալխէն էլ տանջւում էր: Թագնւած վարագոյրի ետևում, աչքը Հասօից չէր հեռացնում, ոչ էլ ականջը նրա նւագից: Աչ ուտում էր և ոչ էլ խմում — տանջւում էր միայն:

Երկուսն էլ գիտէին որ շատ հեռու են միմեանցից, որ աղալի աղջիկը հովւի կին չի լինիլ:

Բայց սէրը Աստուծոյ կրակն է, շատ գորեղ կրակ: Նա կտրում-անցնում է ամէն հեռաւորութիւն, թափանցում ամէն խորութիւն:

Մէրը ոչ հեռաւորութիւն է ճանաչում, ոչ էլ խրաբութիւն:

Հեռատես էր աղան ու խիտ խորամանկ: Զուտով նկատեց Հասօի սէրը: Քարկացաւ, կատաղեց, ուզեց սպանել յանդուզն հովւին, բայց խոհեմ էր. չուզեց իր տան անուներ կտորել յաւիտեան և մի հովւի արիւնը մըտնել ընդունայն:

Բայց ինչ կասէին՝ եթէ իմանային որ մի չորան՝ նրա աղջկալ ետևիցն է ընկել: Պէտք էր Հասօին հեռացնել. հեռացնել ինքնակամ, զոհ խորամանկութեան:

Պէտք էր այնպէս մի խաղ սարքել, որ Հասօն ինքը թողնէր, հեռանար և մէկ էլ այդ կողմերը չըվերագառնար:

Մտածեց աղան, երկար մտածեց ու գտաւ հնարք:

Մարդ ուղարկեց, կանչեց Հասօին և ասաց նրան.

«Գիտե՞մ, Հասօ, ասաց չար աղան—գիտե՞մ, որ սիրում ես դու իմ աղջկան: Քաջ տղայ ես ինքդ, լսել եմ, լաւ ածու՞մ ես սրինդ: Աղջիկս քեզ կըտամ, միայն կըզնե՞մ մի պայման:

«Լս'իլ եմ որ ոչխարները քեզ հնազանդում են և սրնգիդ ձայնից դրաււած՝ քեզ մօտ գալիս են:

«Գետնից մինչև այդ քարձր աշտարակը—տեսնո՞ւմ ես նրան—զնե՞լ կըտամ փայտեայ սանդուղքը. դու կընստես այնտեղ—բարձրում, ոչխարները կըթողուլեն ցածրում: Ահա՛ պայմանը: Եթէ՛ դու բարձրից, սրինգդ հնչեցնելով, կարողացար ոչխարներին՝ սանդուղքի վրայով քեզ մօտ վեր հանել, այն ժամանակ աղջիկս քեզ հալալ, անու վայելիք:

«Ապա թէ՛ ոչ՝ խալտառակ եղիր, ինչ ունիս-չունիս հաւաքիր և քանի շուտ է՝ այս կողմերից հեռացիր: Մի հովիւ՝ աղայի փեսայ չի լինիլ—այդ էլ խելքիցդ հանիր»...

Հասօն ժպտեց, խոր գլուխ տուց—«Տէր ես, աղա՛» — ասաց—«ասածիդ համաձայն եմ»:

Եւ շինել տուց աղան փայտեայ սանդուղքը: Իննըսուն և ինն աստիճան ունէր: Հասօից ծածուկ կոտրեց նրա մէջտեղի մի աստիճանը, կոտրածը թող կերպով գրեց իր տեղը այնպէս, որ ոչինչ չէր երևում. բայց մի թող սեղմում հերիք կըլինէր փայտը ձգելու, և մի աստիճանից դէպի միւսը՝ մի գազաչափ տեղ բաց թողնելու:

Այդ պիտով էլ ոչխարները անցնելը անհնար դարձնելու:

Մ', չոր էր աղան. հպարտ էր. հպարտ...

Այդ խալտառակութիւնը արեց չար աղան: Հասօին աշտարակի ծայրը հանեց, Զալխէին պատշգամբի վրայ՝ ու ասաց հովին.

— Ահա Զալխէն, խրախուսիր. հալալ է քեզ նա, թէ ատաճս արիր:

Զալխէն տեսաւ Հասօին, ժպտեց նրան, կարմրեց և նշան արաւ: Իմացաւ հովիւը որ Զալխէն էլ սիրում էր իրեն: Սիրտն ուրախութիւնով լցեց: Առաւ սրինդը, բերանին դրեց, քեօլօզը ծռեց, նազն սկսեց:

Թնդաց սար ու ձոր, շարժեցին ծառեր, դողացին քարեր: Յուզեց չար աղան, խելայեղ՝ Զալխէն. քիչ մնաց բռնէր ու ցած գնար ոչխարի պէս բնկնէր Հասօի ոտքերին:

Ջարժեցին ոչխարները, մօտեցան սանդուղքին ու սկսեցին միմեանց ետևից բարձրանալ աշտարակն ի վեր:

Լօ, լօ, լօ, Սև-ջրի չորան, սար ու ձոր մղկտացնող ջիւան, դաղան մեղմացնող, քար ու ծառ լուրջ չորան: Ինչո՞ւ լիմարի պէս հաւատացիր աղայի, ինչո՞ւ բարձրացար ծայրն աշտարակի: Ջուր դառնայիլ մօրդ փորում, Հասօ: Երանի չբտնէլիւ այս աշխարհը որ լի է աղաներով: Երանի չբտնէլիւ արեւի փայլը որ քեզ այրեց— խորովեց, Սև ջրի այլիքները՝ որ քեզ տրտեց, շամբի օրօրելը՝ որ քեզ կախարդեց:

Լօ, լօ, լօ... Մի՞թէ քիւրդն այնքան անազնիւ եղաւ, որ սէրը ծաղրեց: Մի՞թէ նրա խիղճը կորաւ, Աստուծո՞ւ մոռացաւ: Խեղճ Հասօին ինչո՞ւ շէլթանի բաժին արաւ, աշխարհը լացի և սուգի մէջ դրաւ... Լօ, լօ...

Հնա բարձրանում էին ոչխարները. հրում միմեանց-
սրնդի ձայնից դիւթւած մտանում էին տակի անդունդը:
Աչքերը Հասօին ուղղած՝ բարձրանում էին:

Աշխարհը գմայլած՝ դիտում էր: Չար աղան քար էր
կտրել, Զալխէն մինչև կէս մէջքը կուացել, ձեռները Հա-
սօին պարզել ու գոչում էր.

— «Ես քոնն եմ, Հասօ, քոնը, լաւիտեան:— Ես քեզ
սիրում եմ, այնքան եմ սիրում, որքան չէր սիրում Աէլ-
լան՝ Մէջլունին:— Ես քեզ սիրում եմ, այնքան եմ սի-
րում, որքան չէ սիրում թիթեռը ճրագին, սոխակը վար-
դին, աշխարհն արևին և բոյսը հողին:

«Գնու ես իմ ճրագը, դնու ես իմ վարդը. դու իմ
արևն ու դնու իմ հողը»...

Լսում էր Հասօն, սիրտը խշխշում: Աճում էր, աճում,
նւագն ուժովցնում:

Եւ ոչխարները բարձրանում էին, շարքով բարձ-
րանում:

Հասաւ ների ¹⁾ այժր կոտորած աստիճանին: Զգաց որ
մահը առջևն է, բայց դիւթւած էր. ստքը զրեց փայտի
վրայ:

Չարժեց փայտը, լսեց մի մայիւն և սիրուն ներին
սրտոյտ գործելով օդի մէջ, գնաց ջախջախելու անդունդի
քարերի վրայ:

Մղկտաց Հասօն:— «Հէյ վնխ, իմ սիրուն ների»
կանչեց սրտաբուղխ. բայց աչքը երբ Զալխէին ընկաւ,
մոռցաւ ներին: Սրինգը զրեց բերնին և սկսեց աճել:

Ոչխարները տեսան ներիի վիճակը. կանդ առին, մտա-
ծեցին ետ գնալ, բայց դիւթւած էին - առաջ գնացին.

¹⁾ Առաջնորդող այժր.

Փորձեց առաջին ոչխարը, ետ-ետ քաշեց, առջևի ստքերը բարձրացրեց և ուզեց թռնել:—Մի մայիւն արձակեց և զնաց այժի ետեւից.

— «Անխ, վնխ, իմ անմեղ ոչխար. մղկտաց Հասօն: Նայեց Զալխէին, մոռցաւ ոչխարին, ոչժ տաւ նւագին:

Փորձեց երրորդ ոչխարը. մինչև իսկ թռաւ, բայց կպաւ աստիճանին, մի պտոյտ գործեց, խղճուկ կերպով մայեց և զնաց դէպի խոր անդունդը:

— «Թռէք, անցէք իմ սիրուն ոչխարներ—երգում էր Հասօն—թռէք իմ թաւամաղ գառնուկներ, եկէք ձեր տիրոջ մօտ»:

Ոչխարներն էլ չէին շարժոււմ. ետ ետ էին զնում:

Կատաղեց Հասօն—բացւածքը չէր տեսնում: Որքան սէր ունէր ու զգացմունք, ներշնչեց սրնդին. զեղգեղանքներով քարացրեց բնութիւնը... բայց ոչխարները ետ ետ էին զնում:

Ամաչեց աղան իր գործից, կիսամեռ եղաւ Զալխէն լուսահատութիւնից:

Փոխեց Հասօն եղանակը:

Այժմ ինքն էլ չբզիտէր, ինչ էր նւագածը:

Պաղրեւ էր քամին, կանգնել էր ջուրը, լռել ամէն ինչ:

—
Ո՞վ չէ լսել «Լուր-դա-լուրը», որին չի գիմանալ ո՛չ մի քար սիրտը: Որին լսելով կըթրթռայ սիրող սիրտը—կըմարի: Որին լսելով կըգժւի սիրող աղջիկը, կըգժւի և դէպի սիրողը կըսլանայ:

Սքանչելի է նա. երգերի փառքն է նա:

Չրեշտակների մըմունջը, Հասօնի հոգին է նա...

Չարժեցեցին ոչխարները, զլուրեցին շատերը:

Չարժեց և Հասօն, կուացաւ, տեսաւ բացաճփքը:

Հասկացաւ ամէն ինչ, նաչեց աղալին:

Ջգաց որ Ջալխէն կորած էր իր համար, ինքն էլ
աշխարհի համար:

Չարժեց Ջալխէն էլ, նաչեց աղալին, նաչեց Հասօին:

Ջգաց որ Հասօն կորել էր իր համար, ինքն էլ աշ-
խարհի համար:

Եւ լուեց ամէն ինչ...

«Լուր-դա-լուրը» դադարեց, նրա խաղի վերջին
լժրթուումը գնաց մեռնելու օդի մէջ...

Յետոյ... լուեց մի ճիչ,

Ու երկու մարմիններ արագ պտոյտ գործելով օդի
մէջ, գնացին միասին, ջախճախելու անդունդի խորքում...

և միմեանց գրկում:

Հասօն և Ջալխէն էին գրանք...



ԳԼԳԹԸԿԸՆՆԵՐ

I



ասէնի զաշտը կտրելուց լետոյ, զէպի ուսաց հողը տանող տարածութիւնը հանդում է նախ մի երկար կիրճի, որ արևելքից արևմուտք է պարզւած, լետոյ սկիզբն է տալիս Քէօսէ-դաղ կոչուող ամենհի լեռնաշղթային:

Լեռնաշղթան իր հովիտների և մացառու կողերի մէջ պատոպարում է միմիայն վայրենի կենդանիներ և մարդկային վայրենի ցեղեր: Ամառը վերերում, ձմեռը ձորերում՝ այդ ցեղերն աւելի անմատչելի են դարձնում լեռնաշղթան:

Անցորդը լեռնաշղթայի մէջ ժամերով ո՛չ մի շնչաւոր էակի չէ հանդիպում. ապառաժ, ձիւն, արտուճի մացառներ, սոսկալի անդունդներ, երբեմն սքանչելի վայրենութեամբ խորշեր, որոնք խոր, սոսկացնող լուսթիւն են պահում և մի-մի անգամ միայն իրենց խորքերից վեր են վիժում մի գետակի կարկաչ, մի վայրենի թռչունի կծու ազդակ, կամ գայլի օւնոց:

Այդպէս է Քէօսէ-դազը: Աւելի սոսկալի է նա ձմեռ-
ւայ ամիսներում, երբ ձիւներ միօրինակ սպիտակ սաւա-
նով ծածկում է այդ բոլոր վայրենութիւնը, տեղ-տեղ ցոյց
տալով ապառաժոտ կողերի սևութիւնը և տեղ-տեղ էլ
ո և է ժայռի սուր ծայրը: Ով մի անգամ իր կեանքի մէջ,
փորձել է անցնել այդ կողմերից, նա անշուշտ մոռացած
չի լինիլ ահաւոր լեռնաշղթան:

Այդտեղ էր ահա, լեռնաշղթայի գլխաւոր գագաթից
ոչ հեռու, որ մի ցուրտ ու մութ զիշեր, բլուրն ի վեր
էր մազլցում մի ճանապարհորդ:

Մենակ, հրացանը զաւագանի տեղ գործածելով՝ ծան-
րաքայլ բարձրանում էր: Ձիւնի սառած շերտերը խշրը-
տալով փշրում էին նրա ստքերի տակ:

Յողնած էր. շատ էր քայլել. շունչը կտրւում էր:
Բլուրի գագաթը երևում էր ձիւնի սպիտակութեան շնոր-
հիւ: Եւ ճանապարհորդը մի վերջին ձիգ ևս գործելով՝
մազլցեց ու հասաւ կատարին:

Այնտեղ նա իջնող գառիվայրի գլխին նստեց, հրա-
ցանի կոթը գետնին դրաւ, կռթնեց փողի վրայ և սկսեց
գիտել:

Գրեթէ ոչինչ չէր երևում: Մի անհուն սևութիւն,
որ տեղ-տեղ, խորքում, ծակծկւած էր մի քանի փայլուն,
կարմիր բծերով:

Սահմանազլխի և բլրի ստորոտում գտնուող գիւղի
կրակներն էին: Եւ այդ գիւղը անշուշտ քիւրդի գիւղ էր:

Սև ամպերից կազմւած միապաղաղ մի ծածկոց էլ
երկնքի երեսն էր թազցրել. աստղի նշոյլ խսկ չբկար:
Քնութեան խուլ շշուկը ծփում էր անգունդների վրայ և
անհետանում անսահման տարածութեան մէջ:

Ճանապարհորդը կռացաւ դէպի ցած և լարեց լսո-

դուժիւնը. թւեց, որ լսում էր շները ձայն. բայց այնքան խուլ, անորոշ, որ նրանց որ կողմից գալը անհնար էր որոշել:

Սահմանագլխի մօտն էր: Այդ նա գիտէր: Քասէնում նրան ասել էին, որ եթէ կրակներ տեսնէ, ապահով թող լինի, որ սահմանալիքի վրայ է:

Ուրեմն, այդ սևութեան խորքումն էր ասա, որ դռնում էր այն երկրի սկիզբը, որի մասին իրենց մօտ այնպէս ցանկալի երագներ էին տեսնում, ուր—ասում էին—ոչ քիւրդն է յափշտակում անպատիժ և ոչ էլ կոպիտ ուժը յաջողում ձեռնամուխ լինել մարդուս նւիրական սեպհականութեանը...

Ուրեմն, փոքր մի ևս, և նա ոտքը պէտք է գնէր այդ հողի վրայ:

Քայց նա չէր եկել այդ երկիրը մտնելու: Նրա համար այդ միտքը շատ էլ գրաւիչ չէր:

Նրա մտադրութիւնը այն չէր, որ խուսափէր իր գառնութիւններով լի երկրից և գնար այնտեղ, ուր—ասում էին—մարդիկ ազատ են և ապահով և ուր բարի, զթոտ մարդիկ կային:

Քարի մարդկանց պէտք չունէր նա, ոչ էլ օգնութեան: Թշնամին նրա մէջքը դեռ չէր տեսիլ. նրա հրացանի գնդակը կամ գառնի հարածը պարապ չէր անցել: Մշու լեռների կտրիճ գաւակն էր նա—Փոմեր գիւղացի Պետրոսը, որին ոչ մէկը անպատել, կամ ծուռ աչքով, մինչև այդ ժամանակ, նայել չէր համարձակել:

Ո՛չ, նա չէր կամենում գնալ՝ միւս թուլամորթների պէս՝ խուսափել հարւածողից... Ո՛չ, նա թողել էր երկիրը, քայլել էր երկար, տաժանելի ճանապարհներ էր կտրել, որովհետև իր նշանածին էր որոնում, իր սիրելուն, իր նազիկին...

Ո՞ւր էր նա այժմ, իր ճնողների և Համադիւղացիների հետ. երկրի ո՞ր լեռների մէջ ապաստանած, կամ ո՞ր ճանապարհի վրայ ընկած, սպանւած...:

Գրանից քսան օր առաջ Բուլանըխից Մուշ վերագառնալով՝ աչքի առաջ ունէր, որ Գոմեր կըհասնի և տարիներով փափալած երազը կիրադործի, որ Նագիկին կունենայ վերջապէս: Խոտոացել էին պսակը այդ ձմեռ կատարել:

Նա սիրում էր Նագիկին և աղջիկը պաշտում էր նրան:

Նրանք երջանիկ էին: Պետրոսը ո՛չ մի մտալլ բան չէր երևակայում Բուլանըխից վերագառնալիս: Քրդերի արածները սովորական էին եղել: Ասում էին որ Մուշը՝ դաշտում քիւրդերը, աշիրաթներն իսկ աւերում էին գիւղեր և օրէցօր սաստկացնում այդ աւերածութիւնը. որ կոտորում են, փախցնում... Բայց Պետրոսը այդ բոլորը նոր չէր որ լսում էր. ճնելուց ի վեր նրա ականջները վարժւել էին այդ բոլորին:

Եւ այդպէս, միշտ վարդազոյն յոյսերով Բուլանըխից Մուշ եկաւ, որտատրոփ Գոմեր վազեց իր նշանածին տեսնելու, բարեկամներին համբուրելու...:

Բայց երբ գիւղ հասաւ, ինչ տեսնէ...:

Սանոյ Բաքրանցի քիւրդերի ցեղապետը — ահա թէ ինչ պատմեցին նրան — ուզել էր տանել Նագիկին. հաւանելու էր բարեհաճել նրան: Արթնօն — աղջկայ հալւրը, այդ լսելով, մի գիշեր յանկարծ առել էր իր ընտանիքը, շալակել էր ինչ որ կարողացել էր և փախել գիւղից:

Սպանել էին և տանջանքի ենթարկւել ո՛չ միայն Նագիկի, այլ և իրեն՝ Պետրոսի ազգականները, որովհետեւ Իւսուֆ աղան գիտէր Նագիկի նշանւած լինելը և կարծել էր թէ աղջկան հեռացնողը Պետրոսն էր:

Գոմերը գրեթէ աւերւել էր:

Այդ բոլորին հետեւել էր մի ընդհանուր աւերածութիւն: Իւսուֆ աղային միանալու էին եկել ուրիշ քիւրդ ցեղեր ևս և Մշոյ գաշտի զիւզերը միմեանց ետեւից թափանում, աւերում ու այրում էին...

Ահա թէ ինչ գլուխեան մէջ գտաւ Պետրոսը իր հայրենիքը:

Մի մեծ յուսահատութիւն ճնշեց վարկենապէս նրա սիրտը. երկնքից գետին էր շարում: Այլևս չըկար ո՛չ երազների և ո՛չ վարդազօյն օրերի իրականացման յոյսը...

Այնտեղ, իր առջևն էր միմիայն աւերակ, մոխիր ու սուգ:

Եթէ չէր գժւել, պատճառն այն էր, որ նրան կարողացել էին գոնէ ասել, թէ դէպի ո՞ր կողմն էին գնացել զիւզից խուսափածները, որոնց մէջ էին Վրթսօն և հաղիկը:

Եւ նա թողել էր ամէն ինչ, անցել գիակների վրայից, աւերակների կողքից, առել իր հրացանն, ու որդին կորցրած մօր կատաղութեամբ՝ սար ու ձոր էր ընկել նշանածին գտնելու:

Ասել էին որ խումբը դէպի Խնուս էր գնացել և այնտեղից մտադիր էր սահմանն անցնել:

Եւ երբ մի բոպէ պատկերացնում էր իր քնքոյշ Նաղիկին, որ այժմ ցրտի, ձիւնի մէջ, գուցէ ոտաբօբիկ և կիտամերկ քայլում էր, գուցէ անօթի կամ մուրալով խուսափում էր քիւրդերից և ստիպւած էր փշերի, քարերի միջից փախչել, ճանապարհ որոնել... երբ այդ բոլորը երևակայում էր—գառնութիւնը խեղդում էր նրան, կրրճում սիրտը...

Ասել էին նրան որ Կովանդուկի վրայով էր անցնելու գաղթականութիւնը: Բայց ո՞ր ճանապարհով. արդեօք

տեղ հասել էին անվտանգ. անօթութիւնը կամ քիւրդե-
րը նրանց չէին ջարդել:

Նազիկը կարողացել էր գիմանալ ցրտի, լոգնածու-
թեան. կարողացել էր քիւրդերից ազատուի...

Ոչինչ չըզիտէր և այդպէս անգիտակ՝ խնուս իջաւ:

Հարցրեց ամէնքին: Ոչ ոք չէր կարողանում ասել
յատկապէս, թէ խմբի մէջ եղել էին Արթօն, Նազիկը:
Տեսել էին Մշից հասած շատ թշուառները՝ անօթի, ծա-
րաւ, ցրտից գրեթէ սառած, որոնք միացել էին Աովան-
դուկից, Կարա-ջօբանից և խնուսի այլ զիւղերից դուրս
եկած զանազան փախստականների հետ և որոնք ծածուկ
ճանապարհներով գնացել էին դէպի սահմանադուխ:

Նրա մէջ մի քիչ յօրս էր ծագել:

Քիչ լետույ նրան ասացին, որ գաղթականներն այլ
ևս անքան սոււար խմբեր չէին կազմում, որ նրանք
ցերեկով թագնուում էին և զիշերները անցնում զիւղերի
կողքերից:

Ասացին, որ քիւրդերը հոտ էին առել և խմբեր էին
կազմում գաղթականների վրայ յարձակում գործելու հա-
մար. որ, «Արու-սարգարի»-ները (ճանապարհը իբր թէ
պահպանող զինուորները) և համիդիէ կոչուող քիւրդերից
կազմած նոր զօրքի խմբերն իսկ, լաւ ուս համարելով
ընկնող թշուառներին, ասպատակ էին սփռել ամէն կողմ:

Հետզհետէ այլ ևս ոչ ոք չըկարողացաւ Պետօին
ճիշտ տեղեկութիւններ տալ: Միշտ անորոշ էին պատաս-
խանները: Զատերը վախենում էին և ուղղակի «չըզիտենք»,
«չենք տեսել» ասելով՝ խուսափում էին: Ոմանք ասում
էին, որ մեծ խմբերը բաժանուել են աւելի մանրերի և ցրու-
ւել սահմանագծի երկարութեամբ, որպէս զի կարողանալին
աննկատելի մնալ սահմանապահ զօրքերից: Ուրիշները

կարծում էին, որ խնուսցիք մշեցիներից բաժանելով ուրիշ ուղղութեամբ էին գնացել. իսկ մի զիւղացի երկտասարդ կանչեց Պետօին մի ախտուի մութ անկիւն և անտեղ յայտնեց, որ մշեցիք մտել են Քէօսէղաղ լեռների կիրճերը և յոյս ունէին ան կողմերից անցնել սահմանը:

Կանգ առնելը նրան աւելի անհանգստացնում էր. կարծում էր որ Նաղիկը կանչում էր իրեն, որ պէտք ունէ իրեն. որ նրա միակ պարտքն է վազել, շնչասպառ վազել, ամէն բանի վրայից ոտնելով վազել, մինչև որ գտնէր նշանածին: Ամէն անգամ կրակ տեսնելիս՝ կարծում էր թէ հասել է: Եւ վազում էր, ամէնքին հարցնում:

Որքան զժւար ճանապարհներ, որքան խոր ձորեր և որքան ձիւն, մացառ ու արգելք: Բայց կտրեց անցաւ բոլոր, մագլցեց ժայռոտ, լսրծուն լեռներ, անցաւ հոտնուտ հողով բլրակներ, ցեխոտ դաշտեր և ահա այժմ, մի ամբողջ ցերեկ քայլելուց յետոյ, չընայելով որ յոգնած էր, անօթի, շնչասպառ — մի վերջին ճիգ ևս գործեց և հասաւ Քէօսէղաղի մեծ բլուրին, որտեղից ճանապարհը սլորապոյտ տանում էր գէպի մի ինչ որ հարթավայր և անձանօթ գիւղ:

Սլգտեղ էր, որ կանց առաւ քիչ հանգստանալու. ի՞նչ գիւղ էր անտեղ — ցածում. ո՞ւր էր հասել. ուռանց հողի վրայ էր, թէ՛ դեռ թիւրք հող էր կոխում:

Ամէն ինչ անորոշ էր: Կուրացած ցաւից, միայն մի նպատակ մտքում՝ քայլել էր. չէր էլ ուզել շատ տեղեկութիւններ հարցնել. յոյս ունէր գտնել փնտռածին հոտառութեամբ, բնազգմամբ:

Սատիկ ցուրտ էր: Թէ՛ յոգնած էր և թէ՛ վհատւած: Չըզխտէր այժմ ո՞ւր գնալ: Կարելի էր մտածել որ այլ կրակները զաթականներն էին վառել:

Մի քանի լուսիկ նա մնաց այդպիսի անորոշ դրու-
թեան մէջ նստած: Յաճում կրակները հետզհետէ մարում
էին. միայն մի տեղ, մի մեծ խարոյկ՝ մնում էր երերուն
և բոցավառ:

Վերջապէս ելաւ և վճռեց իջնել գէպի կրակը: Պէտք
էր տեսնել թէ ովքեր կային այնտեղ և այժմ զոնէ տեղե-
կութիւն հարցնել: Հայեր լինէին— աւելի լաւ. եթէ քիւր-
դեր լինէին, նա իրեն քիւրդ կը ձեռացնէր և զուցէ աւելի
հեշտ տեղեկութիւններ ունենար գաղթող խմբերի մասին:

Հրացանը թւի վրայ, ստուգեց որ փամփուշտ կար,
ուղղեց մէջքի երկար սուրբ, ստուգեց որ գաշոյնը գօտու
մէջն էր և սկսեց իջնել:

Բլուրը հողային էր. ձիւնի շերտը փշրւում էր և
Պետօի ոտը երբեմն փլեցնելով խճային մի հոսանք, մի
քանի լուսիկ շառաչունով խողում էր դիշերային լուսթիւնը:

Երբեմն աւելի պարզ էին լաւում շների ձայները: Խա-
րոյկը բլրի ստորոտումն էր և մեծանում էր:

Նա սկսեց քայլերն արագացնել և լսողութիւնը սրել:

II

Ըստ վտանգաւոր բան էր Պետօի արածը. չէ՞ որ լայտ-
նել էին նրան Քէօսէ-գաղի բնակիչների մասին, թէ նրա
ձորերի մէջ ու ապաժառների տակ, մայցաւոտ անտա-
ռակների կողքին, ինչպէս և կիրճերն ու հովիտները, լի
էին միայն արիւնաբլու, վայրենի քիւրդերով, որոնք մարդ
էին սպանում այնպէս, որպէս սպանում են ճանճերի:

Քիտէր այդ, սակայն չէր կասում. մտածում էր գաղ-
թականներին հանդիպելու: Իսկ եթէ քիւրդեր լինէին
այնտեղ երևացող խարոյկի մօտ, նա առաջին անգամը
չէր լինիլ, որ քիւրդերի միջից ողջ— առողջ անցնելուց

բացի, մինչև իսկ նրանց մօտ համարել էր աշխարհի—
ազնական քիւրդի գաւակ:

Քսան և Հինգ տարեկան, երկարահասակ ու լայնա-
լանջ, սևադէմ ու խրտիտ, սև, արտայայտիչ աչքեր—
խիտ լոնքերի տակ, ճապուկ մարմին ու վայելուչ կազմ-
ւածք—այդ բոլորը նրան նպատուում էին ինքզինքը իբր
ազնական քիւրդ ներկայացնելու: Քացի դրանից, նրան
ասել էին թէ ինչ ցեղեր էին բնակուում այդ կողմերում
և նա գիտէր այդ ցեղերի բնութիւնը:

Վախենալու ուրեմն ոչինչ չըկար: Յանդդնութիւն էր
միայն հարկաւոր: Եւ նա առաջ անցաւ՝ միշտ հրացանը
պատրաստ բռնած: Ընթրի ձայները սաստկացան, լետույ
խարոյղը մի բոց արձակեց և սպա լուեց մի մարդկային
ուժեղ ձայն, որ զոչում էր.

—Ո՞ր է այն:

Քիւրդներէն էր հարցը: Պետօն կանգ առաւ: Ընթրն
այդ ժամանակ զազարեցին հաջելուց, իսկ ձայնը նորից
լուեց, որ այս անգամ հարցնում էր.

—Քարեկամ է, թէ թշնամի:

Պետօն աջ ձեռքը շեփորած և բերնին դրեց, կռա-
ցաւ և նոյն լեզուով պատասխանեց.

—Քարեկամ է:

Գրանից լետույ լուեց ամէն ինչ մի բոպէ: Երիտա-
տարդը համարձակ քայլերով իջաւ ցած, երբեմն դիտմամբ
աւելի խշրտացնելով ձիւնի շերտերը:

Քանի մօտենում էր, աւելի պարզ տեսնում էր մի
քանի սուեթներ, նոյն իսկ խրճիթների պատեր: Քիւրդե-
րը միժան մէջ ծածկուում էին, անշուշտ հրացան ՚ի բռին:
Պետօն նոյնպէս աշխատեց լոյսից խուսափել և երբ բա-
ւական մօտեցել էր, կանգ առաւ և զոչեց քիւրդներէն.

— Ինչո՞ւ են կրմանջները մթութեան մէջ մնում. քաքրանցի Ռզիօն արդեօք թշնամի ցեղի հետ զործ ունի: Բայց ոչ ոք նրան չըպատասխանեց: Պետօն երկու քայլ էլ արաւ և մտաւ լոյսի մէջ:

— Լաւ ուրեմն, ասաց նա խորիտ. թշնամի կամ բարեկամ, եթէ նամարդ էք, առանց դէմ ու դէմ գալու խփէք մենակ մարդու:

Այդ կծու խօսքերը ազդեցութիւն ունեցան. իսկոյն չոյսի մէջ երեւացին մութիւնաձև, առանց թևերի երկու անձինք:

— Բաքրանցիները մեր բարեկամներն են. ասաց մէկը— համեցէք. սէր— սէրան, սէր ճէւան¹⁾... որ կողմերից է գալիս իմ եզբայլը:

Խօսողը, նաև հետզհետէ լոյսի մէջ ելնողը հինգ-վեց քիւրդ, փաթաթուած էին անթև թաղեալ հաստ վերարկուներով մէջ, զլուխներին թաղեալ քէօլօզ և զինաձ էին ընտիլ մարթինի հրացաններով:

Պետօն մի հալեացքով գննեց բոլորին. ոչ մի դէմք պարզ չէր երևում. ծածկուած էին վերարկուի լայն օձիքով:

— Մուշի երկրից եմ. ասաց նա:

— Չատ հեռւից է գալիս իմ եզբայլը. խօսեց մի ուրիշ քիւրդ— բայց մեր գլխի, աչքի վրայ: Իմ եզբայլը քաքրանցիներով ցեղապետն է:

— Բաքրանցիների ցեղապետը, ասաց Պետօն— իմ հայրը, հռչակաւոր Իսուֆ աղան է. իսկ դուք ի՞նչ ցեղից էք:

— Խնուսի շէյխի մարդիկն ենք, պատասխանեց առաջին քիւրդը միշտ թաղիքի միջից— շէյխը սիրում է բաք-

¹⁾ Գլխներին, աչքերին վրայ:

բանցիներին. մենք լսել ենք Իսուսֆ— աղալի անու-
նը... իմ աղան եթէ յոգնած է և քաղցած՝ զիւրը իրն է,
մեր աչքի ու զլիւի վրայ է եկել:

— Վաղուց է ոտքի վրայ եմ. խօսեց Պետօն. եթէ իմ
եղբայրները մի կտոր հաց տան, շնորհակալ կըլինեմ:

Քիւրդերից երկուսը զարձան դէպի խրճիթները. Պե-
տօն հրացանը ամենայն վստահութեամբ ուսին ձգեց և
հետևեց նրանց. իր լետևից զալիս էին նաև միւս քիւրդերը,
և, աչդպէս շրջաապատած նա մտաւ մի խրճիթ: Այ ոք
չբիտրձեց հարցնել թէ ինչպէս մի ցեղապետի որդի, ա-
ռանց ձիու, ոտքով և առանց ընկերակցի՝ զանուժ էր
գիշերով աչդ կողմերում: Երևի լետոյ պիտի հարցնէին:
Եւ լուռ՝ ներս մտան:

Խրճիթը մի մեծ դռ էր. մութ անկիւններից լուռւմ
էին կենդանիների որոճի և ուտելու ձայներ. լայն բաժան-
մունքում մի լաւ կրակ՝ լոյս էր տալիս իր կողքին
նստտած երկու-երեք կանանց և զրեթէ մերկ մանուկ-
ների:

Պետօն քիւրդական մի փոքրիկ, աննշան գիւղի մէջ
էր և երևի նրա բնակիչները հասարակ հպատակներ էին.
ահա թէ ինչո՞ւ իսկոյն չէին համարձակել հարցեր տալ
թէ ինչ գործ ունէր նա աչդ կողմերում:

Երբ ներս մտան բոլորը, աչդտեղ միայն Պետօն կա-
րողացաւ գննել իր հիւրընկալների գէմքը, որովհետև քիւր-
դերը երբ կրակին մօտեցան և նստեցին, թաղիքը հաննե-
ցին և մի կողմը դրին:

Գաժան, սև, խորշոմներով ակուած գէմք, բայց
առույզ, կրակոտ, և խուազննին կտակածող աչքերը
արտաբախտում էին միշտ լարւած զրութիւն. նմանում
էին ամեն ըոպէ վտանգի, կուրի սպասող անձերի: Նստե-

ձիւ՝ ամէն մէկը հրացանը ճնկների վրայ զրեց, լետոյ քիչ ձեռքերը կըսկին պարզեց և ապա սկսեց զննել հիւրին:

Չըջապատել էին խարովը. կանայք և մանուկները քաշուել էին մի մութ անկիւն և այնտեղից, երեմն, կատուի աչքերի պէս փայլում էին մի զոյգ հետաքրքիր աչքեր:

Ամէն ոք լուռ էր. խօսքը տան մեծին էր պատկանում, իսկ նա դեռ զննում էր իր հիւրին: Պետօն մտախոհ գէմք ունէր, բայց վստահութեամբ նայեց բոլորին, լետոյ աւելի լաւ տեղաւորեց և սպասեց: Անհամբեր էր իմանալու ինչ որ ուզում էր. —

Արտեղ էր գտնուում. սահմանից շատ հեռու էր. ինչ տեղաւորութեան վրայ. գաղթականները երբ էին անցել և այլ այսպիսի բազմաթիւ հարցեր կուտակուել էին նրա գրկիւմ: Մի քանի անգամ հարցական ակնարկով նայեց ալեխառն մազերով հիւրընկալին:

Վերջապէս սա դարձաւ, նայեց գէպի մութ անկիւնը, հրամայեց հիւրին հաց տալ և ապա ասաց.

—Սէր սէրան, սէր ճէւան. մեր աղան շատ չոզնած վրլինի. չի կամենայ որ իրեն հանգիստ թողնենք:

—Ս', սն. ասաց աշխուժով Պետօն—իմ հայրը շատ բարի է. ես այնքան չոզնած չեմ. շտապում էլ եմ...իմ հօր անունը ին՞չ է.

—Ֆնդօ.

—Ֆնդօ աղան եղել է Մշոյ երկիր:

—Ո՛չ. ես մինչև Խնուս, Կարա — չօբան գնացել եմ, քայց ս՛չ հեռու...յսել եմ որ Մշոյ երկիր Աստծոյ արքայութեան պէս սիրուն է:

—Այո, մեր երկիրը սիրուն է: Բայց իմ հայրը լսել է որ այժմ այդ երկրում կալու կայ, որ բոլոր աշիրաթները օտքի են ելնում:

— Լսել եմ, ասաց քիւրդըր.— Ֆլանները ¹⁾ մեզ լուր են բերում. գեռ ալսօր էր, որ մի խումբ տկլորներ, առանց հացի ու կիսամեռ, անցան մեր գիւղից: Աչինչ չունէին վարձատրելու առաջնորդի համար, մենք նրանց ճանապարհ ցոյց տւինք: Կանաչք էլ կալին նրանց հետ... էհ, մարդու խեղճն է զալիս. ինչ կեանք է զրանց կեանքը. նամարդու թիւն է նրանց այդ վիճակի մէջ՝ զիպչել կամ վնասել... սառել էին. ոտները բորիկ, մերկ... ոչինչ չունէին:

— Ֆլանները հարուստ են լինում. մէջ մտաւ մի քիւրդ, որ նստել էր տան տիրոջ կողքին— բաց խորամանկ են, իրենց հարստութիւնը ծածկում են:

— Չէ՛, Ռագախ, պատասխանեց նրան Փնդօն— ես էլ քիւ շատ եմ տեսել, նրանց հետ շատ եմ դործ ունեցել— բաց նրանք, որ անցան քիչ առաջ՝ ոչինչ չունէին. զրթւար թէ տեղ էլ հասնեն. կէսը ցրտից, կէսն էլ անօթութիւնից կրկտորւեն. դեռ տեսնենք սահմանապահ զօրքերը կը թողնեն նրանց անցնելու:

— Մի թէ՛ չեն թողնում. հարցրեց Պետօն:

— Ո՞րտեղից... Չղթալ են կազմիլ ու ետ են մղում. սահմանազլիսի գիւղերում, Գոսլի— Բարալի վրայով գնացողները՝ շատ են: Մի կերպ անցել են, բաց շատերն. հէնց ցրտից կամ քաղցից տեղն ու տեղ ընկնում են: Իմ եղբայրը չըգիտէ՞ որ Մշից եկածները ոչինչ չունին:

— Ես այդ գիտեմ. հարցմանը պատասխանեց Պետօն, բաց չըգիտէի, որ սահմանապահները չեն թողնում անցնելու:

— Ըն՛, չեն թողնում. պնդեցին միւս քիւրդերը:

— Իսկ այս կողմից անցնողներ շատ կան:

— Եռաջ ոչ այնքան. պատասխանեց մի երրորդ քիւրդ—

¹⁾ Հայերը:

խակ արժամ անցնում են, որովհետև արդիււում են միւս կողմերից և թէ Արիաչալի ձորում թալանւում են, սպանւում:

—Նրանց թալանողները նամարդներ են . . գոչեց ուժգնութեամբ տանուտէրը— բնկածին չեն խփել:

—Հասնանցիներն են, սաաց տանուտիրոջ փոքր եղբայրը— բոլորովին մերկացնում են, շապիկն անգամ հանում են... .

—Սարսափելի է, սաաց զայլովթ ով Ֆնդօն — էլ տղամարդութիւն չէ մնացել քիւրդի մէջ, էլ ոչ ոք չէ լիշում որ «աղար բժգին չէտրբա» (ամօթը կրօնից սուսել է)... էլ ամօթ չըմնաց քրդի մէջ, ինչ անենք, որ գեաւուր են:

—Մեր շէլիւր աւելի լաւ և արդար է վարւում, ասաց չորրորդ քիւրդը— առնում է ամէն ինչ որ ունին այգիլաները, լետոյ առանց լինասելու՝ բաց թողնում:

—Ֆլաները լսու աշխատում են, ասաց մի քիւրդ— նրանք աշխատում են մեզ համար. սիրուն կանայք էլ ունին:

—Յզրայրս ձիշտ ասաց. ծիծաղեց Պետօն — Ֆլաները սիրուն կանայք շատ ունին... եղբայրս տեսել է սկի:

—Ղնտ... խնտո, խատէն:

—Իսկ անցնողների մէջ. հարցրեց Պետօն անձկութեամբ— օրինակ հէնց այսօրայ անցած խմբի մէջ:

—Ռազախը նրանց չըտեսաւ. ասաց Ֆնդօն— բաց ես տեսայ. երկու—երեք հատ շատ սիրուններ կային. մերսնք ուղեցին վերցնել, ես չըթողի: Ես չեմ ուզում, որ մեր կողմից անցնող կանայք անպատու թեան ենթարկեն: Ես շէլիւի մարդ եմ. առանց էն էլ՝ կնիկ պահելը շատ դժւար է այս կողմերում. անպատել մի թշուառի, որ ցըրտից ու քաղցածութիւնից մեռնում է— զրանից վատթար նամէրգութիւն չէ կարող լինել...

Պետօն այլ ևս չէր լսում քիւրդի խօսքերը: Մտքով անցնող խմբի հետ էր: Աչքի առջև սպտկերացաւ իր

Նաղիկը կիտամերկ, ձիւնը կոխելով, ոտաբոբիկ և քաղցած, ամէն ըստէ ենթարկւած լինելով դեռ՝ անպատուութեան իսկ... իսկ ինքը, նրան սիրողը, մի քանի քայլ հեռու միայն և անշարժ նստել էր ու կարողանում էր տանել քրդերի խօսակցութիւնը:

Ֆնդօի խօսակցութիւնից չետոյ, բոլորն էլ լռեցին: Քիւրդերը նկատեցին որ Պետօն մտածում էր. տեսնում էին նորա դէմքի ցաւազար, կծկւող արտաբայութիւնը, յուզումը:

— Իմ աղան մի ցաւ ունի. հարցրեց տանուտէրը— մենք ունինք զարմանող պառաւներ... կամ վիրաւորւած է արդեօք...

Երիտասարդը ցնցեց: Ձեռքով տրորեց ճակատը, շուրջը մի ակնարկ ձգեց և լանկարձ ոտքի ելաւ:

— Ա՛յ, ասաց նա—վիրաւորւած չեմ:

— Եղբայրս ուզում է գնա՞լ արդէն:

— Այո, ասաց նա մտամոլոր—ուզում եմ... Միայն ինձ ատէք թէ այդ ձեր յիշած այսօրւայ խումբը ինչ ճանապարհ բռնեց:

Այ ոք չըպատասխանեց իսկոյն: Ջարմացմամբ զննեց քիւրդերին և լանկարձ նկատեց, որ նրանց մէջ կասկած էր զարթեի: Զտապեց ուղղել սխալը՝ պարզելով իր հարցի նպատակը:

— Ես պէտք է գնամ նրանց ետևից. ասաց—որովհետև երկու տարի է, որ ուզում եմ մի ֆլա աղջկայ. այդ աղջիկը անցնող խմբի մէջ պիտի լինի: Մշոյ գաշտից այստեղ եմ եկել միմիայն ձեռք ձգելու համար:

— Վա՛հ... ասաց մի քիւրդ—միթէ այդքան սիրուն ֆլա աղջիկ կար նրանց մէջ, ախոսս ես չըտեսայ:

— Իմ աղան շատ ջա՛հել է. ժպտեց տանուտէրը—

Իլա աղջիկ չարժէ, որ դու նրա համար Մշոյ դաշտից
աւաքան տեղ գալիր: Քայց եկել ես. և եթէ ուզում ես
հասնել, քեզ պէտք է շտապել: Սահմանը շատ մօտ է.
Քէօսէ—դադի գազաթը մեր զիւլի մէջքն է. իսկ այդ
հատո ու լաւն մէջքի ետեւումն է ուսաց հողը... խումբը
պտոյտ կըգործի սարի լանջի վրայից և աջ կողմով կիջ-
նի միւս ստորատը:

—Ուրեմն ես աջ կողմով պիտի գնամ:

—Նախ ուղիղ և ապա միշտ ձախ՝ ու ներքեւ...
Զիւնի վրայ իմ աղան կըտեսնի նրանց հետքերը. իմ ա-
ղան թող շտապի, եթէ ուզում է հասնել նրանց:

Պետօն թևին ձգեց հրացանն ու քայլեց դէպի դու-
ռը: Քոլոր քիւրզերը նրա հետ դուրս գնացին և նորից
մօտեցան բոցավառ խարոյկին:

—Ահա. ցոյց տւեց հիւրընկալը՝ ձեռքը դէպի աջ
պարզելով—քիչ եթէ ալպէս ուղիղ գնաս, ստքերի տե-
ղերը կըտեսնես... Ատաւած քեզ հետ:

—Իմ եղբայրը չի կամենալ, որ մեզնից մի քանիսը
ընկերանան իրեն. հարցրեց մի քիւրզ:

—Ո՛չ, շնորհակալ եմ, պատասխանեց Պետօն, բարե-
ւեց և արագ քայլերով մտաւ մթութեան մէջ:

Քիւղը շատ փոքր էր: Նա շուտով լեռան կուրծքին
հասաւ և սկսեց վազել:

Անհամբերութիւնից գոցում էր. էլ ոչինչ աչքին չէր
գալիս. ո՛չ քար և ո՛չ փոս: Մտքով նա աւելի առաջ էր:
Մի բան իրեն ասում էր, որ այդ խմբի մէջն էր լինելու
Նազիկը: Ուրեմն այդքան մօտ էր իր սիրելուն. պէտք
չէր մի լոպէ ուշանալ. պէտք էր թանել դէպի նա, շա-
ւաղկել նրան իր ուտերի վրայ, մերկ ոտները առնել ձեռ-
քերի մէջ, տաքացնել, հագուստովը ծածկել նորա մար-

մինք, լեռներն ու ձորերը տակն ու վրայ անել, երկնքի երեսից թռչուն ցած գլորել՝ կերակրելու համար... պահպանել նրան. նրա կողքին լինել միշտ, ապրել, շնչել նրա օդը, նրա սիրով կեանք վայելիլ...

Թռչում էր փոսերից առանց կանգ առնելու. բարձրանում էր, սահում էր սառած ձիւների շերտի վրայից:

Քիւզը ետ մնաց, շների ձայները անլսելի դարձան: Եւ մութն էր. ձիւնի սպիտակութիւնն էր միայն, որ ցոյց էր տալիս ոտքերի երկար հետքը:

Պետօն տեսել էր այդ և հետևում էր: Հրացանը ուսին՝ ոչ ետ էր նայում, ոչ կողքին: Քնում էր և երազում: Երազում էր Նազիկի հրճւանքը իրեն տեսնելիս... Արդեօք ուղքեր էին խմբի միւս անդամները, ո՞ղջ կըլինէր Նազիկի պառաւ խիստ մայրը. էլի չէր թողնիլ որ Նազիկին մօտենայ, նրա հետ երկար խօսի. այդտեղ էլ...

Եւ վազում էր, կտրում տարածութիւնը: Մտել էր մի պուրակի մէջ, որ ծածկում էր Քէօսէ—դադի այդ կուրծքը:

Անցել էր արդեօք կէս զիշերը: Յանկարծ կանգ առաւ Պետօն և ինքն իրեն այդ հարցը տաւ: Երկինքը միապապաղ սև, ոչ մի աստղի նշույլ չրկար: Եւ եթէ նա պարզ տեսնել էր սկսում նույն իսկ ժայռերն ու զազաթները՝ այդ իր աչքերի՝ մթութեան վարժելուցն էր:

Քրջանը վերջանալու վրայ էր և, բարձրացած մի բլրակի վրայ՝ դէպի ցած էր ուզում իջնել, երբ լանկարծ, ձախ կողմից, մի կրակ՝ կանգնեցրեց նրան:

Ներքև, առապարի մացառուտների մէջ վառւում էր մի խարոյկ. նրա լոյսը լուսաւորում էր բաւական մեծ շրջան, իսկ շրջանի մէջ երբեմն երևում էին մարդկափն տուերներ:

Նոքա՞ էին արդեօք, թէ նորից քիւրդեր:

Պետօի սիրտը տրոփել սկսեց. միթէ՞ այդպէս շուտ հասել էր, պիտի տեսնէր Նազիկին:

Ուրախութիւնը երկար չըտւեց սակայն. մի անհասկանալի տխրութիւն համակեց նրան:

Ինչո՞ւ էին կանգ առել ուրեմն: Պժբախտութիւն էր պատահել, մէկը մեռել էր, ցամօ էր ընկել. կանանցից էր. Նազիկը չէր:

Քարացել էր, ինքն էլ չըզլտէր ինչու. ոտներն այլ ևս դժւարանում էին շարժելու. ն՛ր միայն սկսեց զգալ աննկարագրելի յոգնածութիւն...

Քայց ճիգ դործեց և քայլեց՝ միշտ աչքը խարոյկին: Նախ դանդաղութեամբ էր քայլերը փոխում, բայց մէկէն երկու ոտիւն գործելով՝ անցաւ մի մացառի վրայից և սկսեց վազել... Ի՛նչ, Նազիկը գուցէ տառապում էր այնտեղ, գուցէ մեռնում էր, վերջին շունչը տալիս ձիւնի մէջ ընկած, իսկ ինքը յոգնում է, վհատում է, ուշանում...

III

Արտուճի թփերով պատած մի շրջանի մէջ տեղում, արմատախիլ փշերի դէզով կազմել էին մի մեծ խարոյկ և նրա շուրջը թափւել, ընկել էին գաղթականները:

Մօտ երեսուն հոգի էին. — կին, աղջիկ և մանուկներ: Յոյրը խղճալի, պատառոտուն հագուստով, գրեթէ ոտաբորիկ և գլխաբաց: Տղամարդկանց վրայ՝ բաճկոնները կտրտած, բացւած ամէն կողմից, ցեխոտ ու աղտոտ:

Կանանց հագուստն էր միակ երկար պարեգօտը, որ իր ծակոտիներով ցնցոտի էր եղել և ցրտի առջևն էր պարզում մերկ անդամներ: Ի՛լ ձեռք չէր մնացել առանց կապտելու, ուռելու, կարկամելու: Փչում էին նրանք

իրենց ձեռքերի մէջ, ոտները վեր ու վար անում ձիւնի մէջ կանգնած, շիւում ականջները... քթերից ծորում էր, աչքերից հոսում...

Հաւաքել, ընկել էին խարոյկի շուրջը: Ամանք փռուել՝ մէջքը կրակին էին տւել: Քունը ընկճել էր կանանց և մանուկներին: Արդիք իրենց ծնողները գրկի մէջ կուչ եկել և այգալէս կոյտ—կոյտ, միմեանց դալարւած՝ պարզել էին ցեխի և ջրի մէջ, որ գոլացել էր կրակից հալուող ձիւնից:

Լսում էին երբեմն խուլ, խոր հառաչներ ու գանգատներ.

—Մ', ի՛նչ ցուրտ է, ի՛նչ ցուրտ:

—Քաղցած եմ, մայրիկ...

—Շաման Ասուած, գոչում էր մի կին—հոգիս սնւ պրծիր... Արդին էր, որ տանջում էր նրան, կրկնապատում նրա վիշտը. այդ փոքրիկ արարածի ձայնը կտրուել էր, բայց նա բերանը մօր ուսին կպցրած՝ կոկորդից խուլ, խռզոտ աղաղակներ էր արձակում, որ, ո՛վ գիտէ, գուցէ նրա վերջին շունչն էր...

—Տէր Ասուած... մոմուում էր մի տղամարդ. մեր մեղքն ի՛նչ էր, որ այս օրին էլ հասցրիր մեզ...

Կրակի շուրջը նստոտած հինգ—վեց տղամարդիկ չէին քնել, կուչ էին եկել և պաղել. առւակներ էին վազում նրանց տակից, ցուրտը տառեցնում էր նրանց մէջքը:

Չէին քնել, աշխատում էին արթուն մնալ: Նրանցից մէկը, մի ծերունի, ցուպը գոգին և գլուխը ծնկներին կրթնեցրած՝ խօսում էր լողնած ձայնով: Լսում էին, բայց ոչժ տալով. խօսում էր ծերունին, բայց որքան ականայ, որքան ուժասպառ:

Պատմող ծերունին վիսնամեայ, կորաքամակ և կարճահասակ անձ էր. կեանքը զգալի կերպով քայքայում

էր նրա մէջ. վշտեր, միայն վշտեր էին, որ արտայայտում էր նրա հաշիսացքը, դէմքը. այդ ճանապահորդութիւնը ոյժ չէր թողել այլևս նրա մէջ:

Բայց նա պատմիչ էր և պատմում էր որպէս զի չըթողնի քնելու իր հայրենակիցներին— իմքի պահապաններին: Պատմել էր նա իր կեանքի ամբողջ ընթացքում, զբաղեցրել եղբայրներին, մոռացնել տել շնտ վշտեր... Այժմ էլ նոյնն էր անում: Փակուում էին նրա աչքերը, բայց նա խօսում էր. լեզուն ուզում էր դադարել, ստում էր նրա մէջ ամէն ինչ, բայց նա դարձեալ պատմում էր...

«...Թագաւորը ողորմեց նրան, ասաց՝...» Քնն, աչքիցս հեռացիր... ճակատիս այրպէս էր զբւած, որ մի որդի պիտի ունենայի և այդ որդին՝ իր ազատողի ձեռքով էլ պիտի սպանւէր»...

Եւ խարոյկը ճարձատում էր, կայծեր արձակում ու իր արիւնտս բոցով լուսաւորում այդ տեսարանը: Մթութիւնը մի քանի քայլ հեռւից ծածկում էր իր մէջ ամէն բան. երբեմն միայն, երբ բոյն էր բարձրանում, ֆօնի վրայ գծւում էին ժայռերի մութ սուերները:

Պետօն կանգ էր առել մի քանի քայլ հեռու և դիտում էր այդ տեսարանը: Այդքան ողորմելի բան չէր տեսել երբէք. իր եղբայրներն ու քոյրերը, գուցէ և իր նազիկը նրանց մէջ, այդպէս բնաւեր, թշւառ, այդպէս կիսամեռ դրութեան մէջ, անձանօթ հողի վրայ և թափւած ձիւնի, ցեխի ու ջրի մէջ, կուչ եկած, կիսամերկ...

Երիւնը գլխին խփեց: Մի կատաղի գայլոյթ խեղդում էր նրան. բռնահարեց գաշոյնի կոթը, բայց մտաբերեց խկոյն, որ վաղուց է թշնամուն ետ թողել և եկել է զոհը տեսնելու. այժմ նա կանգնած է շիջող կեանքի, ոչնչացող հասարակութեան առջև և ականատես է նրա

օրհասին, ականատես նրա վերջին տանջանքներին...

Ի՞նչ էին վայելել զրանք—այդ թշառները, որ այժմ այդպէս մեռնում էին՝ հեռու իրենց երկրից, տնից ու հողից: Ծնւել էին գերութեան շղթայի մէջ, սնւել թշառութիւնով և այժմ, շներից աւելի վատ դրութեան մէջ՝ մեռնում են, ոչնչանում, այն էլ օտար հողի վրայ, անօթութիւնից, ցրտից...

Եւ այդպէս քանի՛ քանիսները... հարիւրներ, հազարներ...

Կամաց քայլելով առաջ գնաց: Լուել էր նրա մօտենալը. մի քանիսները շարժւեցին, ոտքի ելան. սլափով ծերունին դադարեց. իսկ մէկը, որ ըստ երևոյթին խմբապետն էր, առանց շարժւելու տեղից՝ նայեց եկողին և ասաց տխրութեամբ.

—Քիւրդ է... Էհ, թողէք, տղէրք, չէ՞ որ ոչինչ չունինք:

Յետոյ Պետօն դարձաւ և ասաց քիւրդերէն.

—Ոչինչ չըմնաց... ձերոնք վաղուց առին եղածները:

Երիտասարդը մի քանի քայլ էլ առաջացաւ. զրեց դետին հրացանի կոթը և ասաց մեզմ ձայնով.

—Մի վախենաք, ես հայ եմ, ճանապարհորդ... Գուք տր կողմերից էք:

—Մշոյ երկրից, Յրօնից...

—Յրօնից... Գոմերից չըկան ձեր մէջ:

—Գոմեր... մոմօաց խմբապետը—նրանք անցան. մեր մէջ չըկան:

Պետօն խոնարհեցրեց գլուխը. ծնկները կթոտեցին և նա համարեա ընկաւ. հրացանը շառաչիւնով դետին իջաւ:

—Ա՛խ, ասաց նա խորին տխրութեան շեշտով—

օրերով քայլիր, յայտով հասիր այստեղ և... չըկայ:

Ու գլուխը ձեռքերի մէջն առաւ:

Բողորը յուզեցին: Կանաչք, որոնք զարթնել էին մօտ եկան. նրանցից մէկը ետ քաշեց և մեղմ ու յուզեաձ ձայնով ասաց.

— Խեղճ... Նշանածին է փնտռում:

Պետօն ցնցեց և բարձրացրեց գլուխը:

— Ո՞վ էր նշանած ասողը. հարցրեց նա: Գո՛ւ էիր, մայրիկ... Այ՛ո, նշանածիս եմ փնտռում... գնաց ցրտի մէջ, հալածւած, կիսամերկ. ապրում է արդեօք... Այ՛ո, նրան եմ փնտռում... ո՞ր է, տեսել ես նրան:

— Ոչ, պատասխանեց տխրութեամբ կիներ—ես սրտեղից եմ տեսել նրան, խեղճ տղայ:

— Ինձ ասացին որ ձեր մէջ մի քանի հաստ աղջիկներ կան. մրմնջաց Պետօն—ես կարծեցի թէ իմ Նազրիկը նրանց մէջն է... ո՞ր է այժմ արդեօք:

Ոչ ոք չէր խօսում. երիտասարդի խօր տխրութիւնը, այդ սաստիկ վիշտը պահ մի մոռացնել սուեց բոլորին՝ իրենց տանջանքը. թշուառները թշուառի տխրութիւնով համոտեցին. մի քանիսի աչքերում արտասուքի կաթիլներ երևացին:

— Լսի՛ր, երիտասարդ. խօսեց վերջապէս խմբապետը—ես գիտեմ որ Խնուոսից շատ շատերը, Մուշից էլ բաւական զաղթողներ եղաւ. անշուշտ Գոմերցիք էլ եղել են. ականջիս մէկ զիպաւ, որ անցել են: Գուցէ նրանք այժմ մեզնից աւելի երջանիկ են, ուստաց հողի վրայ, հայերի տաք գոմերի մէջ... Երանի՛ նրանց. ազատւել են ցրտից, անօթութիւնից: Նայիր մէկ մեր վիճակը... մեզնից կէսը որ հասնի այն կողմ, փառք կը լինի: Գնանք մեզ հետ, երիտասարդ, գնանք Կարս, գուցէ այնտեղ գտնես նշանա-

Ճրգ. այնտեղ են բոլոր թշուառները:

Պետօն չբազատասխանեց:

—Մի յուսահատուիր, որդիս. մէջ մտաւ պատմիչ ծե-
րունին խօսլ ձայնով—զնանք մեզ հետ, կրգտնես նշանա-
ճրգ, եթէ չէ մեռել... Ախ, մեռածներն են միայն, որ
չեն վերադառնում... Հայր ունիս, զաւակս:

—Այո, հայրիկ... Հայր ունիմ, երկիր մնաց:

—Ախ, զաւակս, ետ դարձիր շուտ, դնա հօրդ մօտ...
դու չըզխտես թէ որքան թանգ արժէ մի հօր համար
իր որդու ներկայութիւնը, նրա կեանքը. ամէն, ամէն
բան արժէ... Գարձիր ետ...

Ասաց ծերունին և լաց եղաւ. արտասուք չունէր.
դէմքի գծերը ալլանդակեցին...

—Հերիք է, Աստուածդ սիրես, Մկօ. յանդիմանեց
նրան խմբագետը—ինչո՞ւ ես սպանում մեզ էլ...

Ծերունին գոպեց իրեն, տրորեց աչքերը:

—Լաւ, ահա, էլ չեմ լալիս, ո՛չ... Իմ կորցրածը ի՛նչ
արժէ այս բոլոր կորուստի մօտ. ոչինչ, մի խիլ, մի կտոր
հող...

Եւ նորից տիրեց լուռութիւն: Սկսել էր մի մեղմ, սա-
ռը քամի, որ օրօրում էր խարոյկի բոցը. կանաչք ու մա-
նուկները, ինչպէս և քիչ քիչ տղամարդիկ ևս, զնացին,
փաթաթեցին միմեանց ու ընկան քնելու. էլի սկսեց լս-
ւել սառած փոքրիկները վնդոցներ, սիրտ պատառոզ աղա-
ղակներ:

Պետօն մտաացաւ իր ցաւը և սկսեց մօտից զննել թըշ-
ւառներին: Կորուսում էր սիրտը: Պոկոտեց մի քանի մա-
ցառներ էլ, կրակն արծարծեց, մի մերկանդամ մանուկի
տեղ իր աչճէ մորթի բաճկոնը և փաթաթեց նրա մէջ:

—Զատ կ'սոյ մինչև սահմանագլուխը. Հարցրեց նա

խմբապետին գառնալով:

— Մեկ ասել են որ արտոնդից քիչ է մնացել, պատասխանեց նա. տեսնենք կարող ենք առանց տեսնելու անցնել:

— Աւրեմն գնանք, էլ ինչու ենք նստել. մէջ մտաւ մէկը — չէ՛ որ մեկ գիշերով անցնել է պէտք. աղօթարանը շուտով կը բացուի:

Ամենքը նայեցին դէպի արևելք:

Աղօթարանը բացուած էր: Յուրտը սաստկանում էր, խոլ քամին աւելանում: Խարոյկի լոյսը իջնում էր:

Պետօն կռթնած հրացանի վրայ, զիտում էր խոնաւ, թաց գետնի վրայ կանանց և մանուկներին:

Աւրեմն իր Նազրիկն էլ այդպէս, զուցէ աւելի վատ դրութեան մէջ է. ո՛վ գիտէ, դեռ ապրում է. կարողացել է հասնել, կարողացել է գիմանալ:

Որքան կուզենար նորից ճանապարհ ընկնել, վազել: Զգում էր որ եթէ քիչ էլ չըշարժուի, կը թուլանայ այլևս. տաները սառել էին, պէտք էր թշուառները մասին էլ մտածել, պէտք էր շտապել՝ կտրել լեռները և ընկնել մի գիւղ, մի մի կտոր հաց, մի մի տաք անկիւն ճարել նրանց համար:

Գարձաւ և գետին փռւածներին նայեց: Եթէ չըզարթնէին դրանք, եթէ մի քանիսները մեռած լինէին կամ սառած: Ինչ պէտք էր անել. թողի: Ա՛յ, ժամանակ կորցնել չէր կարելի. պէտք էր քայլել:

Որքան անդուծ բաներ էր մտածում: Քունը և յոգնածութիւնը շշմեցրել էին նրան:

— Քայլէ՛նք... գոչեց նա բարձր ձայնով. — ժամանակ է...

Զատերը վեր թռան: Խմբապետը, որ գլուխը կախած՝ քնից յաղթուել էր, ընդոտ ելաւ և գոռաց.

— Այո, դէհ, վեր կացէք. ժամանակ է. գուցէ լաջող-
ւի մեզ սահմանից անցնել քանի լոյս չէ:

— Քայլենք... ստաց Պետօն — Ատուած ողորմած է:

Ոտքի ելան քնաթափախ. ցլտից սըթսըթում էին, ստամները կարկափում, կուչ գալիս: Աերցրին ինչ որ ու-
նէին: Չատերը չէին կարողանում շարժել իրենց անդամ-
ները. թացութիւնը կեանք չէր թողել նրանց մէջ. մի
քանիսը աղաչում էին, որ իրենց թողնեն տեղն ու տեղ՝
մեռնելու... Սկուեց երեխայոց սոսկալի լացը...

Մի քանի երիտասարդներ առաջ ընկան. կանայք
և աղջիկներ մէջ տեղ մտան ու ծանր, լուղարկաւորու-
թեան պէս, խուժրը սկսեց ցած իջնել: Քարշ էին գալիս.
Հաղիւ ստի վրայ կանգնած՝ երեքում էին, յօրանջում,
գանգատում մէջքի և ազգրերի ցաւից, կռթնում էին
ընկերներին. իսկ կանանց մէջքի վրայ կպած մանուկները,
կարճես ձգած մի խոր փոսի մէջ՝ խուլ, քստմնեցուցիչ
կերպով վնդում էին: Նրանցից մի քանիսները լռել էին.
Քնած էին թէ սառած. ո՞վ գիտէր, ոչ ոք սիրտ չէր ա-
նում ստուգելու:

Իջնում էին ցած: Պետօն խմբապետի հետ առաջ-
նորդում էին խմբին. իսկ մի երիտասարդ, որ հսկողն էր,
անդադար առաջ ու ետ էր գնում և խրախուսում թուլա-
ցողներին, ետ մնացողներին:

Մի քանիսը կքեցան, փորձեցին նստել, ետ մնալ.
բայց հսկողը ցնցում էր և գոչում.

— Քայլէ...

Ու քայլում էին. ետևից եկողները, որոնց մէջ կային
մի քանի ծերունիներ, լուռ ու մունջ, իրենց սպիտակ գլու-
խը գրեթէ երկար ցուպերի գլխին կռթնեցրած՝ փոխում
էին միօրինակ քայլեր, անդադար, առանց կանգ առնելու:

—Քաւեցէք... կրկնում էր միշտ հսկողը — քնջ եղէք.
Ս. Կարապետ մեղի քօմագ... Հն. քիչ մնաց, մի քնէք:
ոէ, Մկօ աղա, սկսի հէքիաթդ, աղէկ բան մը պատմէ:

—Յողնած եմ, մրմնջաց ծերունին, որ հազիւ շարժ-
ւում էր և այն էլ ուրիշի կռթնած—չեմ կարող... .

—Դէ՛հ, վնաս չունի, դօռ արն, իրախուսեց երիտա-
սարգը—որ պատմես՝ ինքդ էլ կըմուսնաս ցաւդ: Մի
լաւ բան պատմիր, որ տղերքը չըքնեն:

—Հն, պատմիր, Մկօ, ասացին—մի լաւ բան պատ-
միր որ մեր քունը փախչի:

Ծերունի պատմիչը չէր պատասխանում. այնքան լող-
նել էր, որ պնդելու իսկ սիրտ չըկար. մնում էր զիջա-
նել: Երկու քայլ փոխեց, երկու ծանր քայլեր և ասաց.

—Յողնած եմ... բայց կըպատմեմ:

—Մկօն հէքիաթ է պատմում, լսեցէք. դուաց հլու-
կողը առաջ գնացողներին:

—Քայլերը մեղմացան. չետոյ, առաջ գնացողները ետ
մնացին. մի շրջան կազմեց պատմիչի շուրջը: Ջրջանից
դուրս մնացին միայն կանաչք, իսկ առջևից՝ Պետօն և
խմբապետը:

—Լսեցէք... սկսեց ծերունին մի մեծ ճիգ գործե-
լով—ծերունի Մկօյի, Մշոյ դաշտի պատմիչի վերջին պատ-
մութիւնը լսեցէք... Ջրում եմ, շատ չի անցնիլ, էլ Մկօն
չի պատմիլ, էլ նրա պատմութիւնը ձեզ չի դարձացնիլ...
կըլռի Մկօն... լսէք նրա վերջին պատմածը:

... «Կըլիսի՛ չի լինիլ մի մարդ, մի խեղճ մարդ, որ
ոչ որբին էր զրկել, ոչ մանուկի լացացրել և ոչ էլ ընկե-
րին օգնութիւն մերժել:

«Լաւ մարդ էր թէ չէ—այդ Ասուած զիտէ. բայց
աղքատը նրա դռնից դատարկ ձեռքով ետ չէր դարձել,

այլին նրան չէր մեղադրել, թշուառներին նա չէր զրկել և ոչ էլ տոկոսով մարդ խեղդել... Ապրում էր նա ոչ վատ, մեռել էր կինը, մեռել էր ազջիկը. բոլորնց միայն մի հատ որդի էր մնացել: Աեցն էր թաղել, թաղելով ծերացել: Կեանքի մի փոքրիկ կաթիլ ունէր, նա էլ իր միակ որդու համար էր պահել... Ունէր՝ չունէր, այդ մի հատիկ որդին ունէր:

«Որդին. — քսան տարեկան մի ջիւան—կտրիճ, սիրուն ու թոսուն, բոլով ու թուխ-թուխ: Սար ու ձուր դողում էր նրա առջև... Իսկ հայրը ունէր չունէր՝ այդ ունէր: Նրա կեանքի պայմանն էր այդ: Ամէն զրկանք, ամէն նեղութիւն նա արհամարհում էր, ամէն բան կրում, իր Առաքելին ուտեցնում, նրան հագցնում, նրա համար մտածում, նրան էր երազում»... .

Գողում էր պատմիչի ձայնը. քաղում էր նա. իսկ ակնարկը հեռուն, մթութեան մէջ, կարծես սրտնում էր մի ինչ որ սիրելի բան, ժպտում էր սիրալիք կերպով...

«... Այգպէս երջանիկ, շարունակեց ծերունին—էր դարդ կամ ցաւ նրա համար չէր: Մեծանում էր որդին, կտրիճ էր դառնում. իսկ հայրը ծերանում, ոլթերը սպառւում: Քայց ինչ հոգ. որդի ունէր, որի կեանքի աշխոյժով ապրում էր ինքն էլ:

«Անցան տարիներ, երջանիկ տարիներ. եկաւ և ձրմեռ, եկաւ գարուն էլ, ամառը հասաւ: Կտրիճ երիտասարդը կեանք էր ստանում, օրէցօր աճում և ծերունուն երջանիկ դարձնում: Նրա մի ոտումը, նրա մի ժպտը թշուառ ծերունուն արև էր տալիս... Քայց...»

Պատմիչը այստեղ կանգ առաւ, ցուպը զեանին կաթը նեցրեց և ստաց շատ թոյլ ձայնով.

— Թողէք շունչ առնեմ ..

Վանդ առին բոլորը ու լուռ էին: Ծերունին խոնարհեցրեց գլուխը, մի վայրկեան, յետոյ դանդաղօթեամբ բարձրացրեց, տխուր, խամրող աչքերով լսողներին նայեց և շարունակեց.

«Մէկ օր, մի սև օր... երբ հայրը իր տան առջև նստած, որդու մասին էր մտածում, երբ երկինքը պայծառ բացւած, արևն էր փայլում, երբ ծաղիկները միացած, օդը հոտով էին լցնում և երբ ծիծառներն ու սուսակները երգել գայլայլում... հաւարն բնկաւ զիւզը: Քիւրդները դաշտում վրայ էին տուել, տաւարը փակցրել ու մարդ սպանել... սպանաճին էին բերում:

«Իսկ հայրը նստել իր դռան առաջ՝ երազում էր. հաւարը նրան երազից չէր կորցել: Երազում էր իր որդու վրայ: Ահա ամուսնացնում է նրան. ունի թուներ. հարոր իրեն ինամում է, և թուները՝ գալիս մագլցում են նրա ճակնեղի վրայ, խաղում նրա մազերի հետ և ինքը օրօրում է փոքրիկին ու իր գիտցած հին լէլէներէից մէկը երգում է նրան քնեցնելու համար...»

«Լէ, լէ բալաս, լէ լէ ձագուկս, լէ լէ,
Թռչունը կերգէ, հովն ալ անուշ կըրուրէ.
Լէ, լէ բալաս...»

«Քայց այն ինչ է. այդ ինչ բազմութիւն է, որ գալիս է դէպի իրենց փողոցը: Խօսում են, զուգուում, մի բան են բերում հեաները. արդեօք իր դրացիներէն է զարնւածը...»

«Քալիս են դէպի նրա կողմը... մօտենում են: Աչինջ չէ հասկանում... լիմար են, ինչ են այդ զիւղացիները. դժւել են: Ի՞նչ գործ ունեն իր հետ... Հեռու, հեռու գնացէք, սպանաճի հետ գործ չունիմ ես, ո՛չ...»

«Մօտենում են... Յանկարծ նա վեր է ցատկում,

Ճգում է ձեռքի ցուպը... մի վայրենի, սոսկալի աղաղակ է գուրս թռչում նրա կոկորդից... լարձակում է դէպի եկողները... իր որդին էր այդ սպանւած, դաշունահանր... Չարժում է, սարսափելի ճայնով մահ է նա կանչում...»

Ամէնքը կանգ էին առել. պատմիչի ճայնը լցում էր մի խոպոտ չուզմունքով: Լալիս էին:

Կանգնել էր պատմիչը ձիւների մէջ, ձեռքերը առաջ պարզել, սոսկալի վշտով ակօսւած ու գունատ դէմքը կիսալուսին տւել, աչքերը վեր, մագերը փչող քամուն...:

Ասաց, մի բոպէ լռեց, լետոյ տեղն ու տեղ իջաւ, որպէս իջնում է մարող մի խարոյկ, ցուպը կողքին ընկաւ: Եւ ոչ ոք շարժեց իր տեղից:

«...Մեռել էր... շարունակեց ծերունին խիստ մեղմ, գրեթէ հազիւ լսող ճայնով — իր որդին էր. սպանել էին... էլ ինչո՞ւ ուրեմն ապրել, ինչո՞ւ... Ու մտաւ ծերունին իր խրճիթը, և գլուխը դրեց հանգած օջախի վրայ ու այսպէս...»

Ծերուկի ճայնը կտրուել էր. բոյորը կռացան դէպի նա: Չրթունքները գեռ շարժում էին և մի աղիողորմ շշուկ էր միայն, որ լուում էր.

«Լէ լէ բալաս, լէ լէ ձագուկս, լէ լէ...»

Յետոյ մի ցնցում... և ամէն ինչ վերջացել էր:

Ընկաւ կողքի վրայ, գլուխը թւելի մէջ առաւ և շունչը փչեց:

Տիրեց մի խոր, անշշուկ և ճնշող լուսթիւն: Աղօթարանի լոյսը մեռելային լուսով յուսաւորում էր տեսարանը. քամին սաստկացնլ էր:

Հէնց այդ միջոցին էր, որ մայրերից մէկը, զգալով մէջքի վրայ մի սառնութիւն, դարձաւ ու շօշափեց կապած մանուկին:

— Աղջի՛... գլղեց նա կողքի կնոջ և շշնջաց. — Սէր-
դոն էլ չէ շարժուում...

Միւս կինը մօտ գնաց, շօշափեց մանուկին, բարձրա-
ցրեց նրա գլուխը, լետոյ սոսկումով բաց թողեց և մըռ-
մուսաց.

— Քնել է...

Մանուկը սառել էր: Մեռած էր:

Իսկ քամին անդադար փչում էր. լուում էին հեռա-
ւոր բուերի սղրազին ձայներ: Աղօթարանի լոյսը մեծա-
նում էր:

IV

Կարսի ձրի ճաշարանի դռան և լուսամուտի առաջ
խռնել էր մի մեծ բազմութիւն, որ գլուխ էր նեղ բազի
քարակոյտերը, փտած գերաններն ու տանիքների և ցիբ-
ուցան թափելի - նստոտել նրանց վրայ: Ամէն ոք սպա-
սում էր ճաշը բաժանելուն:

Թիւրքահայ գողթականներ էին դրանք՝ խառն տե-
ղացի աղբատների հետ: Քարեգործութիւնը սկսել էր կերա-
կրել նրանց: Ազատել էին ցրտից, քիւրզից, թիւրք զինու-
րից և պաշտօնեալից... այժմ նրանց մի-մի անկիւն էին
չառկացրել քաղաքում: Ամանց՝ հին, անբնակ կիսաւեր
տները մէջ պատուարել, ուրիշներին այս-այն խարխուլ
խրճիթը տւել, շատերին դիւզերն էին ցրել, իսկ ուտե-
լու համար ո՛չ միայն ալիւր էին բաժանում, այլ ամէն օր
մսով կերակուր տալիս:

Հալածւածներն այդպիսով փրկւել էին: Մանաւանդ
որ էլ փախ չունէին իրենց աղջիկների առւանդակուց կամ
կանանց անպատուութեան ակնատես լինելուց:

Խօսում էին այժմ նրանք, ծիծաղում, կատակներ

անում: Մի կողմում քարակոյտի վրայ, մի նոր զաղթած կին հներին պատմում էր իրենց ճանապարհորդութիւնը, թւում ճանապարհին ցրտից ու քրդերից սպանւածներին... դերանների վրայ բազմած երիտասարդներից մէկն էլ պատմում էր Համիդէի զօրքի գործերը:

Կուուրի վրայ նստած կային ծծկեր մանուկ ունեցող կանայք և ջահէլ աղջիկներ. սև էին և ցնցոտիներով պատած, բայց սիրուն էին և կարսեցի շատ ջահէլներ իրենց հալիացքը լաճախ ուղղում էին դէպի այդ գէմքերը:

Յածում, լուսամուտի առաջ, միմեանց էին հրում և աշխատում էին միմեանց առաջ կանկնել ու լուսամուտին մօտ լինել, ամէնից առաջ կերակուր ստանալ: Մեծ մասը մանուկներ ու պատանիներ էին:

Ներսում, խոհարարը երկար շերեփով մեծ կաթսաների կերակուրն էր խառնում. նրա օգնականը փայտ էր ձգում հնոցի մէջ, իսկ հերթապահ ակնոցաւոր երիտասարդը՝ բաժին ստացողների ցուցակը գննում:

Եղանակն այդ օր քիչ տաք էր, արևը թէև պայծառ փայլում էր, բայց քամի կար և բաւական խիստ քամի:

Ճաշարանը գրեթէ բազարի մէջ էր, գլխաւոր ճանապարհի կողքին. դրա համար էլ կառքերի և բազմութեան ձայները բազի լայն դռնից ազատութեամբ ներս էլ լցւում:

— Ասում են որ ճաշարանը շուտով փակելու է. խօսում էր մի ալաշկերտցի պառաւ—դուք էլ լսել էք:

— Զէ, չենք լսել, պատասխանեցին շատերը:

— Ի՞նչ պիտի լինի մեր դրութիւնը. դիտել տուց մի ուրիշ կին—որդիներս կրկտորւեն քաղցածութիւնից. մարդըս մեռել է. պատիկներից մէկն էլ հիւանդ է. չրդիտեմ ի՞նչ անել:

— Ապա ե՞ս. ձայնեց քիչ հեռու մի երրորդը— երեք սրդի ունեմ, երեքն էլ տկար, թոյլ, փոքր...

— Ասէ՛ք, ասէ՛ք... ճչաց մի տեղացի աղքատ կին— բոլորդ էլ սուտ էք ասում, մէկը երկու էք շինում և եկել էք մեր հացը կտրում...

— Ծօ քեզի՛ ինչ... պատասխանեց նրան ալաշկերտցի պառաւը— քո հացը ո՞վ է կտրում, ազգը սաղ կենայ:

— Ա՛յ ազգը խռով կենայ գլխիդ, անատամ պառաւ. դոչեց մի ուրիշ տեղացի— վեր էք կացել ձեր երկրից եկել ու ազգի ճրի հացը ուտում էք, ծոյլ, ստախօս հարամներ, ո՛չ ուզում էք գործ անել, ո՛չ էլ մի տեղ նստել...

Ալաշկերտցի պառաւը զայրացած շարժեց, միւս կանայք սղառնական դիրք բռնեցին և անշուշտ սկսելու էր մի թունդ կռիւ տեղացի և զաղթական կանանց մէջ, երբ մի կառք դղրդիւնով ներս մտաւ բազը, կանգնեց մեծ աղտոտ առւակի մօտ: Կառքից ցած իջաւ պաշտօնական հագուստով հասարակաւոր մի անձ, արագ քայլերով անցաւ առւակը և ներս մտաւ:

Ամէնքը լռեցին. բոլորը, նոյն իսկ կանայք՝ ոտքի եկան:

Պաշտօնական անձը, որ ղինւորական բժիշկ էր երևում, թեթեւ կերպով բարեւեց բոլորին և ճաշարանի սենեակը անցաւ. բայց մտնելուց առաջ, դռան մօտ քիչ կանգ առաւ և ասաց.

— Հայ, հըմ, արդէն ալդքան հաւաքել են. ինչքան շատ են այսօր... Հաց պէտք է՝ որ ղիմանայ:

Այդ ասելուց լետոյ բժիշկը խոհարարին դարձաւ.

— Մի՛թէ պատրաստ չէ կերակուրը. հարցրեց շտապով:

— Պատրաստ է, ասաց հերթապահը— սկսենք:

—Գէհ, խօսեց բժիշկը դրսի ամբողխին—քիչ ետ քաշուէք. տետրակներդ էլ պատրաստ պահէք. կերակուրը բաժանելու է: Հանդարտ կացէք, իրարու չքհրէք:

Սկսեցին իրարու հրել, ճգմել. ամաններն ու տետրակները միմեանց ետեւից պարզեցին դէպի լուսամուտը, լուեց հայհոյանք, հառաչ, ճիչ, անէծք:

—Չէէ, այդ չեղաւ. բացագանչեց բժիշկը— մի հրէք իրարու: Ով տոմսակ ունի, թող նա առաջ գայ. տոմսակ չունեցողները՝ ետ... Գու չունես, ինչո՞ւ ես հրում, ետ դնա... իսկ գո՞ւ, այ աղջիկ, ո՞ւր է տոմսակդ:

Մշեցի մի աղջիկ էր, որ լուսամտի կանդնի էր և կապտագոյն հրաշալի աչքերը բժշկի վրայ սևեռել:

Լսելով որ խօսքն իրեն են ասում, ցնցեց. երագում էր:

Չկահահեր էր, վայելուչ հասակով և քնքոյշ զծագրութեամբ. դէմքը ցրտից ու նեղութիւններից սևացել, այլուել էր:

—Ունիմ, թոթվեց նա ձեռքի տետրակը ցոյց տալով:

—Լա՛ւ, սպասիր հերթիդ. ասաց բժիշկը—մշեցի ես դու:

—Հրամանք ես:

Եւ կարմրելով բժշկի հայեացքից, դէմքը խոնարհեցրեց:

—Ի՛նչ գեղեցիկ է, ասաց հերթապահը, որ բժշկի ետեւից նայում էր. —ուրիշ գեղեցիկներ կան այնտեղ, կտուրի վրայ, նայեցէք, բժիշկ:

—Այո, ասաց բժիշկը—բայց ոչ մէկը սրա նման չէ:

Այդ միջոցին խոհարարը մօտեցել էր ամանները առնելու, որպէս զի կերակուր լեցնի: Ամանների մի բազմութիւն պարզեց դէպի նա:

—Քիչ հեռու, քիչ հեռու, ձայնեց խոհարարը— մի վախենաք, ամէնքիդ կրհասնի:

Մի քանիսններից լետոյ հերթը մշեցի զեզեցիկ աղջկանն էր:

—Քանի բաժին. հարցրեց օգնականը.

—Յրեք. պատասխանեց աղջիկը կաս-կարծիք կրարած.

Տետրակը անցաւ օգնականի ձեռքը: Նա բաց արաւ և կարդաց.

—Գոմերցի Արթնօի այրին... երեք բաժին, ճիշտ է, լցրէք:

Ամանը լցւեց: Նազիկն էր այդ աղջիկը: Ասաւ նա կերակուրով լի պտուկը, ոյժ տւեց, ճղեց ամօսիւր: Մի քանի անգամ քիչ մնաց ամանը սահէր ձեռքից, բայց նա երկար պարեգօտի քլանցքը բարձրացրեց և նրանով բռնելով տաք ամանը, յաջողեց հասցնել մինչև բազի գուռը:

Այնտեղ նա երկար առւակի մօտ կանգ առաւ, կռացաւ, սրբեց պտուկի կոթերին կապւած չւանը: Յետոյ էլի երկար պարեգօտի քղանցքը ձեռքի մէջ առաւ և նրանով ուղեց բռնել չուանը, երբ մի ձեռք զիպաւ ամանին, լետոյ մի ձայն լսեց կողքիցը, որ ասում էր.

—Ինձ թող ամանը:

Յնցւեց ու վեր նայեց:

—Ես եմ, Նազիկ, ասաց խօսողը— մի վախենալ... իսկ այժմ թող տուր, որ ես վերցնեմ ամանը և քայլենք... Ուրեմն ահա, թէ որտեղից էիր ամեն օր կերակուր վերցնելու գալիս և ինձ խաբում էիր թէ ձեր կերակուրը մի տեղացու խոհանոցումն էք եփում և զու գնում էիր բեր'լու:

— Պետրոս... կմկմաց աղջիկը աղաչաւոր— մի նեղա-

նալ, Պետրոս— ջան... չուզեցի լայտնել քեզ այս մեր ամօթը:

—Քալէ... ինչո՞ւ նեղանամ, առաջ ընկիր և գնանք: Երկուսն էլ դուրս եկան բազրից և ծոււնեցին գէպի գետափը:

—Այդպէս ուրեմն— շարունակեց Պետօն գունատ ու դողդոջուն ձայնով— մուրում էք և ես այդ չըզլտէի... Տեսա՛յ որտեղ և ինչպէ՛ս էիր կանգնել մի ժամից ի վեր, այս մի կտոր կերակուրը ստանալու համար... Արքան ընկել ենք մենք, որքան... Յիշո՞ւմ ես, Նազիկ, թէ ինչպէ՛ս պտուկներով մաքուր և թարմ— ոչ այսպէս անհամ, կերակուրներ էիր ցրում մեր դիւղից անցնող աղքատներին... իսկ այժմ... Չէ՛, այս շատ դառն է... և գեռձեռքո՞ւմս է այս ստորացնող ամանը:

Ասաց և բարկութեամբ պտուկը շարտեց մի խոր առւակի մէջ:

— Պետրոս... բացականչեց Նազիկը յուսահատ ձայնով— մօրս քաղցած թողիր...

Յետոյ լռեց և գլուխը կրճքին իջեցրեց:

—Քաղցած... ասաց Պետրոսը— էհ, ինչ անենք. թող քաղցած մնայ... ինչու ինձ խաբեցիք. կարծում էի թէ բան էիք ծախել երկրում և փող ունէիք հետերներդ. թէ չէ՛ թւեերիս մէջ ոչ չըլիայ, չէ՛ որ կարող էի աշխատել ու մի կտոր հաց ճարել ձեզ համար... գործի չէի ձեռնարկում, սրովհետև ուզում էի որ ետ գառնանք, ետ... մեր, մեր երկիրը գնանք...

Գուրս էին եկել բազարից էլ, այժմ քայլում էին հայոց նախկին և այժմ առևտացրած եկեղեցու ստորոտից, գետափն ի վեր:

—Է՛հ, այո, շարունակեց Պետրոսն երկար լռութիւ-

նից լետոյ՝ տխուր, կճու ճաչնով — ահա թէ ինչու եկաք այստեղ և թողիք ձեր տունն ու տեղը... Գնալ, կանգնել այդ ողորմելի մարդկանց մէջ, մի ժամ սպասել, այդ սպասելու մէջն իսկ ամփոփեա՞ծ ստորութիւնը, նախատինքր տանել և այդ բոլորը՝ մի աման կերակուրի համար...

Նազիկը չէր պատասխանում. կծկել էր, ցեխի միջից քայլում էր, քիչ էր մնում լար:

— Լսում էիր թէ ինչեր էին խօսում շուրջդ. հարցրեց պահ մի լռութիւնից լետոյ երիտասարդը:

— Ա՛չ, պատասխանրց աղջիկը — ես քեզ ու մօրս վրայ էի մտածում:

— Իսկ ես լսում էի. լսում էի այն տեղացի կնոջ խօսքերը. ստում էր որ մենք եկել ենք մեր երկրից և ազգի ճրի հացն ենք ուտում, որ մենք ծնւյլ ենք, խարդախ ենք...

Քայլում էին, աշխատելով չոր տեղեր կոխել: Քամիւրաց էր անում Նազիկի պարեգօտը. ստիպեա՞ծ էր պարուրել նրա մէջ, կծկել, գլխի թաշկինակը աւելի ցած քաշելով՝ երեսը ծածկել:

— Կըմբես, շուտ-շուտ գնանք. սոսայ Պետրոսը և նորից շարունակեց:

— Չէ, պէտք է ետ դառնալ. սոսայ չուզեա՞ծ ճաչնով — այստեղ քեզ նայում են իբր յափշտակողի վրայ: Եւ իրաւ, ինչ ենք մենք. այն, ինչ որ տեղացի աղքատներին համար էր, մենք ենք գրաւում. ինչ իրաւամբ: Երէկ մի դռան մօտից անցնում էի. լսեցի թէ ինչ խօսքեր էր ասում մի կարսեցի հաստ ու կարճիկ կին՝ մի լուլանխցի նիհար կնոջ, որ գրկել էր իր մերձի մահ մառուկին: Գիտես ինչ էր ասում:

— Ես ինչ գիտեմ. մամուաց Նազիկը — ինձ այժմ տան-

ջուճ է այն միտքը միայն, թէ մայրս ինչ պիտի ուտի.
քաղցած է:

— Մինք այդ կրտսններնք, պատասխանեց Պետօն խիստ
ձայնով — Հերիք է, որքան մուրացինք... Ես էլ ձեզ հետ
ուտում էի այդ մուրացած կերակուրը... Ո՛չ, այդ անկումը
երբէք չեմ մոռանալու: Գոմերցի Պետօն ողորմութիւն
առնի, ողորմութիւնով ապրի... Զատ, շատ ընկանք:

— Կարեցիք բարի են, Պետրոս, խօսեց Նազիկը—
տալիս են և չեն ստորացնում. մեզ միշտ օգնում են:

— Ես էլ զիտեմ որ օգնում են, բայց այն բաւական
է, երբ քեզ նայում են, որպէս մուրացողի վրայ. ար-
համարհանքով, դաւակցութեամբ: Տի՛րի՛ն է դու քեզ վատ
չես զգում, երբ ժամերով սպասում ես այդ լուսամուտի առաջ:

— Զատ վատս է դալիս. ասաց Նազիկը— ուլում եմ որ
գետինը պատուի՝ ես մէջը մտնեմ. մանաւանդ առաջին
օրերը... Թագնում էի Եղսօյի ետւը, ամաչում էի. կար-
ծում էի թէ ամենքն ինձ մատով են ցոյց տալիս. կերա-
կուրը չէր մտնում բողազս... Հիմա էլ չէ մտնում...

— Զղում եմ, որ այդպէս պիտի լինէր. մենք սովոր
չենք մուրալու. մուրալուց ինչ վատ բան կայ... Չէ, պի-
տի ետ դառնալ. հերիք է. ետ գնանք. սա ապրել չէ,
սա մեռնելուց վատ է:

— Ես բան չեմ ասում. խօսեց մեղմութեամբ Նազի-
կը— դու զիտես որ ես կրգամ քեզ հետ՝ ուր որ ուղես.
Իսկ մայրս... չէ՞ որ հիւանդ է, շատ հիւանդ. տեղիցը
շարժել չէ կարող, ծերացել է, զնալու նեղութիւններին
գիմանալ չէ կարող:

— Կաշխատենք տանել. պնդեց Պետօն— այսպէս ես
չեմ գիմանայ, չեմ կարող տանել որ դու նորից զնաս և
կանգնես այնտեղ, այն լուսամուտի առաջ... Ո՛չ...

Ապա ինչ անենք: Մայրիկը չէ կարող. կըմեռնի. Հօրս վրայ շատ է մտածում. երէկ առում էր թէ երանի Հօրս պէս ճանապարհին, Հայրենի Հողի վրայ մեռած մնար: Գու կարծում ես նրա բողաղից ցած է գնում այդ կերակուրը: Քանի քանի անգամ ինձ ասել է. «Նազիկ, այս մուրացած կերակուրը ինձ սպանում է»... Բայց եթէ դառնանք—աւելացրեց նա—էլի միւսնոյն ճանապարհով ենք ետ դառնալու: Վատ ճանապարհ է. քիւրդերով լիքն էր. քանի անգամ քիչ մնաց ինձ փախցնէին: Խեղճ Հայրս ինչե՛ր էր քաշում. մայրս էլ նեղութիւնից ինձ էր անիծում:

Հասել էին գետափի կամրջի կողքին մնացած մի թումբի մօտ, մի հին բաղնիքի մնացորդ սենեակի ետեւում:

—Խեղճ Նազիկս... ասաց երիտասարդը՝ բռնելով նրա ձեռքը—մի վախենալ. այս անգամ ես եմ Հետներդ. դու գիտես որ իմ կեանքը քեզ Համար է միայն:

Աղջկայ աչքերը սիրոյ արտայայտութեամբ լցեցին, սեղմեց երիտասարդի ձեռքը:

—Ներս մտնենք. ասաց — մայրիկը մենակ է:

Բաղնիքի այդ մնացորդ սենեակից դուրս էին խուժում այլանդակ ձայներ:

Նազիկը առաջ անցաւ: Պետօն Հետուեց նրան: Ներսում այս-այն կողմ, բաց գետնի վրայ թափուել էին կին, տղայ, ծեր և աղջիկ, բոլորը ցնցոտիներով, կեղտոտ և խղճալի:

Մի անկիւնում, փոխաթի վրայ էր, որ պառկել էր Նազիկի հիւանդ մայրը:

Նրա դրութիւնն անյուս էր. այդ պարզ էր. ամէն ինչ քայքայւում էր նրա մէջ: Գժգոյն, աչքերը խամրած,

Թօշնած: Գլուխը կռ թնեցրել էր բարձի պէս մի տոպրակի
և ասքերն առատաղին՝ տնքում էր ծանր կերպով:

Նազիկը մօտ գնաց ու չոզեց նրա գլխի մօտ:

— Կերակուր չըբերի, մնրէ. մըմնջաց նա— Պետրոսը
չըթողեց. ասում է հերիք է մուրանք. շատ անօթի ես,
մարէ:

Հիւանդ կինը նախեց ուշապրութեամբ շըթերը պրկած
գունատ երիտասարդին, լետոյ քիչ բարկացաւ, լենեց աղջ-
կան և նստեց:

— Մնօթի չեմ. ասաց նա թոյլ ձայնով— գիտեմ ա-
բածդ, Պետրոս. գիտէի որ եթէ իմանալիր՝ ալ պէս էիր
անելու... Ասումս քեզ պահէ... Մենք մեր դռներում շա-
տերի ենք կերակրել. այս մուրացկանութիւնը, այս ան-
կումը ինձ սպանեց:

— Գիտես ինչ, մնրէ. խօսեց երիտասարդը— ես կեր-
թամ աշխատանք կըգտնեմ և հաց կըբերեմ ձեզ. անհող
եղէք: Բայց առելի լաւն այն է, որ ետ դառնանք: Չատ
ծանր է... Գնանք, մնրէ, գնանք էլի մեր հողը գտնենք,
մեր ջուրը խմենք, մեր ձեռքով աշխատենք մեր հացն ու
մեր աշխատանքն ուտենք... Ի՞նչ կեանք է այս. չորս կող-
մը օտար դէմքեր, որոնք գննում են քեզ ինչպէս մի ջէնէ-
վերի և կամ ցաւում են վրադ, խղճում են քեզ... Երբ խօ-
սեցնում են, նրանց ձայնն իսկ վիրաւորական է, նրանց
քաղցրութիւնը բարկացնում է քեզ. զգում ես որ խեղճ ես
— խղճում են, ողորմելի ես և ողորմում են. ոչինչ չունես՝ և
տալիս են... Ինչո՞ւ: Չէ գնանք, մեռնենք մեր հողի վրայ,
հպարտութեամբ մեռնենք, թէկուզ անօթութիւնից...

Նստեց: Բազմիքի մէջ միւս կանայք ու տղամարդիկ
լռել, նրան էին լսում: Իսկ նրա ձայնը գողում էր և
խիստ չուզած էր:

— Գնանք, շարունակեց նա:— ես մինչև իսկ լաւ եմ համարում քիւրդերից սպանել, քան այսպէս կեանք վարել: Ի՞նչ է այս մեր վիճակը, այս թաց գետնի վրայ անդամներդ են փտում, բորբոսում. առանց ձածկոցի, ցուրտ, քամի... Մի կտոր հաղուտ չունենք պատասպարւելու, մի քիչ տաք ջուր՝ մաքրելու... Իսկ այնտեղ— թողել ենք մեր արտ, մեր գութան, մեր տաւարն ու մեր տուն, մեր օդն ու ջուր— անուշ, զգողուն ջրեր:— Ահա գարունն էլ եկաւ, կրբացոյն ծաղիկներ, օդը կըլցւի մեր թրուչունների ճիւղոցով, Սասնոյ լեռներից հեղեղատներ կիջնեն... Է՛հ, մարէ, միտդ բեր մէկ այն սիրուն լեռներ, այն խոտն ու ճնճաղիկ, լալան ու մանուշակ... Ղէր կաց, մարէ. փառք Ատճոյ, քանի ես կենդանի եմ՝ ձեզ զիպչող չի լինիլ. երկիր գնանք, թէ լաւ թէ գէշ, մեր տուն-տեղաց մէջ սթարուենք, հալբաթ մի կտոր հաց կըլինի, որ առանց թուք ու մուրի կուտենք. վէր կաց, մարէ...

Պառաւի և բոլոր լսողները աչքերում արտասուքի կաթիլներ փայլեցին: Ամէնքը սկսեցին մտքով պատկերացնել այն բոլորը, ինչ որ այնպէս ոգևորութեամբ նկարագրում էր Պետրոսը:

Իսկ քամին գրտում սուլում էր տխրազին և պտուտ գործում բաղնիքի աւերակների մէջ:

— Է՛հ, որդի. խօսեց հիւանդը— մեռնեմ արևուղ, իմ անուշ որդի. իմ օրերը համբուած են. ես էլ մնացի այստեղ. շատ-շատ՝ մի քանի ֆօր էլ ապրեմ: Երբ թաղես ենձ, առ իմ Նազիկ, պահիր նրան, բայց տանր երկիր և թող այս թշուառութիւնների մէջ չըմնայ: Թէ քիւրդեր սպանեն— թող գրկիդ մէջ մեռնի: Բարեկամներ կան այնտեղ, ծանօթների մէջ... գնացէք տուն ու տեղ եղէք, մի տեղ սթարուէք, էլ ձեռք մի պարզէք... Մի-մի ան-

դամ էլ ձեր պառաւ, օտար հողի մէջ թաղւած թշաւ
մօրը լիշէք և ողորմիւս ասէք:

Կոկորդը լցւեց. ձայնը պահ մի կտրւեց: Քլուխը դրեց
բարձին և փակեց աչքերը:

— Երանի ձեզ, շաւունակեց նա մրմնջայով — հագնւր
երանի, որ էն սիրուն դաշտեր պիտի տեսնէք, էն զրդ-
զրուն անուշ ջրեր խմէք, էն մեռնի ծաղիկների հոտն
առնէք... մեր ոչխարների, գառների մտոց լտէք, մեր
արտի ցորենն ուտէք, այգու խնձորենու տակ նստէք...
Ատուած իմ, Ատուած իմ, ինչ էի արել քեզ, որ իմ եր-
կրից հեռու եմ մեռնում, ոսկորներս երկրիս հողին արժա-
նի չես անում... ինչ արի, ինչ մեղք գործեցի:

Եւ լալիս էր խեղճ կինը:

Պետրոսը աւելի և աւելի չուզում էր:

— Մտի՛, ասաց նա: — Հող մի անիլ. կըլաւանաս,
քեզ էլ մեզ հետ կըտանենք:

— Չէ, որդի. աչքերը բաց արաւ հիւանդը — ես դի-
տեմ ասածս. իմ երկրիս արևն էլ չիմ վայելելու... Կեան-
քը ձերն է այժմ. դարձէք, մեր հողերի տէրն եղէք...

Ճաշ ստացողները հետզհետէ վերադարձած, ներս
էին գալիս, իսկ հիւանդը բոլորովին ուժասպառ էր եղել:
Ընկաւ բարձի վրայ, նորից աչքերը փակեց: Երկու երի-
տասարդները նստեցին նրա սնարի մօտ:

Քաղթականները նստեցին խոնաւ գետնի վրայ և
նրանց ճաշը սկսեց:

Սուլում էր քամին դրսում, թեղացնում բաղնիքի
պատերը, պտոյտներ գործում աւերակների մէջ. հետզհե-
տէ մթնանում էր և արեգակը ծածկւում սև ամպերի
տակ...

V

Խստաշունչ ձմեռւայ օրերը գրեթէ անցնում էին. փղանակը մեղմանում էր, ձիւները հալւում էին և ջրերը բացւում:

Աւերակների բնակիչները կէս էին եղել: Չատերը մեռել էին, մի քանիսներին յաջողել էր շարժել տեղացիների կամ շրջակայ հիւրասէր դիւղացիների գութը և գնալ լցել նրանց դոմերը. ուրիշներն էլ այս-այն պանգոկի մէջ էին ապաստանել: Չատ քչերն էին առհասարակ, որոնց յաջողել էր ապրել, դիմանալ ցրտի և թշւառութեան:

Մեռնողներից մէկն էլ եղել էր Նազիկի մայրը: Նազիկը մնացել էր որբ: Այդ ժամանակ էր ահա, որ Պետօն սկսել էր իրագործել երկիր վերադառնալու ծրագիրը:

Նրան ասել էին թէ ինչ պէտք էր անել: Չէր անցել տասն օր գարունը բացելուց, որ նա զինւած, Նազիկին էլ տղամարդու հագուստի մէջ ծածկած, Սասուն ու Մուշ գնացող ուրիշ վեց կտրիճ երիտասարդների ընկերակցութեամբ ճանապարհ էր ընկել, անցել էր սահմանը և մտել էր թիւրքաց — Հայաստանի սահմանները:

Նրանք բոլորն էլ, Կարօ անունով սասունցի երիտասարդի հետ, ճանապարհը լաւ դիտէին: Պետօն վճռել էր նախ Գոմեր հանդիպել և աշխատել այնտեղ մնալու, ապա թէ ոչ՝ բարձրանալ Սասուն: Քարոտ Տալւորիկի ամուր դիւղերում մտադիր էր պատսպարել իր Նազիկին և ապա իջնել Մշոյ դաշտը:

Թէ ինչ պիտի անէր դաշտն իջնելուց լետոյ — այդ գեռ չէր որոշել, բայց նա լցւել էր մի խուլ, հետզհետէ իր ամբողջ էութիւնը գրաւող՝ զայրոյթով:

Թիւրքաց հողը մտնելուն պէս, խումբը նկատեց որ իրենց հետևում են: Հեռուից երբեմն երևում էր բարձրութիւնների վրայ մի քիւրդ ձիաւոր, որ մի վայրկեան կանգնած՝ դիտում էր նոցա, յետոյ անհետանում և երբ երիտասարդները հրացան ի բռին սրտատրոփ սպասում էին յարձակումի, օրեր էին անցնում և ոչինչ չէր պատահում:

Յրեք անգամ, մինչ Քասէնն էին կտրում, նրանք ուղեցին գնդակահար անել մի քիւրդի, որ իր «կուլաբի» մէջ փաթաթած՝ յանկարծ ցցւում էր մի ժաշուի կամ մի բլրի գլխին, այնտեղից խորապէս գննում նրանց, յետոյ ետքաշւում և անհետանում միւս կողմը:

Պետօն, մանաւանդ Վարօն, սրտնեղութիւնից կատաղում էին, երբ միշտ կռւի էին պատրաստուում. լարած գրութեան մէջ էին մտնում, սպասում էին յարձակումների և սակայն ոչինչ չէր պատահում:

—Այտեղ մի բան կայ. ասում էր Վարօն —երևի սպասում են, որ մեզ մի նեղ անցքի մէջ բռնեն:

Եւ աշխատում էին քայլել միշտ այնպիսի տեղերից, ուր կարողանային յանկարծակի յարձակման ժամանակ պաշտպանողական և շարժելու դիրք ունենալ:

Արտեսութիւնը կառավարութեան կողմից լինել չէր կարող: Կառավարութեան զափթիէները կըմօտենային իսկոյն և «լանուն օրինաց» կրկուէին կամ կըկողոպտէին. պէտք եղած ժամանակն էլ առանց կռւի կըսպանէին և կերթային յայտնելու որ «ապտտամբների» են սպանել:

Քասէնից յետոյ, ճանապարհորդները մի նոր բան էլ սկսեցին նկատել:

Երկիրը առաջւայ գրութեան մէջ չէր. ամէն քայլ յափոխում ասպատակների նոր շինած աւերակների, կո-

դրպատւած զիւղերի և այրած տների էին պատահում. ամէն կողմից քիւրզ գնդերի բարբարոսութեան մասին էին լսում. գալիս էին այն եզրակայութեան, որ անձնապաշտպանութեան համար, հարկաւոր էր գնդակահար անել իւրաքանչիւր պատահած քիւրզի:

Այդ մտքով զեկավարելով, երբ նրանք իններորդ օրը Խնուսից անցնում-մտնում էին Մշոյ երկրի լեռները, մի հովիտի սկզբում, զիշերով, Կարօն յանկարծ կանգ առաւ, բարկութեան մի շարժում գործեց, լարեց հրացանը դէպի մի բլուր և կրակեց:

— Շողիներս հանեցին անիծածները. մոմուաց նա:

Փիշերային լուութեան մէջ հրացանի ձայնը որոտման պէս թնդաց: Քարձրութեան վրայ մի քիւրզ էր, որ կծկեւել՝ լրտեսում էր. գնդակը ստանալով՝ նա մի ձիջ հանեց, լիտոյ զլորեց ետ և անհետացաւ բլրի ետևում:

— Այդպէս, ասաց Կարօն—աբսուհետև ամենքին էլ այդպէս եմ ընդունելու. ինելք ունին՝ թող չ'երևան:

Այնուհետև նրանք մտան հովիտը և առաջացան դէպի ցած երևցող մի ժայռոտ բարձրութիւն, որի մօտի ձորով նրանք մտնելու էին Մշոյ երկիրը:

Հաղիւ թէ կէս ժամ արշաւակի քայլել էին նրանք, որ Քարբիէլը բռնեց Կարօին և ստաց.

— Նայիր այդ կողմը...

Հեռուից, այս անգամ մի ձիււոր էր, որ միւսների պէս փոխանակ լրտեսելու, սրարշաւ մօտենում էր:

— Հ'րմ... արեց Պետօն—վերջապէս կիմանանք թէ ինչ են ուզում մեզնից: Կանգ առնենք, տղերք, և զգուշութիւն. մի քանիւր թող ամէն կողմը լաւ գննեն առանց շարժելու:

Ձիււորը մօտենում էր այնքան արագութեամբ, որ

ցայտեցնում էր սառած ձիւնի կտորներ: Նրա նիզակը-
ցցած երևում էր աջ ոտի կողմից, իսկ ուսագլխի վրայ
փողփողում էին վահանն ու հրացանը:

Հուարնկայ զիշերով նրա սուերը երկարօրէն զճւում
էր ձիւնի սպիտակութեան վրայ:

Երբ բաւական մօտեցել էր խմբին, Հանեց ուսից
հրացանը, ծնկան վրայ դրեց, լետոյ ձիու սանձը քաշեց
և պահ մի կանգ առաւ: Պետօն ուղղեց ղէպին ա իր հրա-
ցանը և բարձաձայն գոչեց.

— Ի՞նչ ես ուզում, կռօ...

— Ես կռիւ չեմ ուզում առայժմ. պատասխանեց
քիւրդը — ուզում եմ ձեր գլխաւորի Հետ խօսել:

— Մօտեցիր, ձայնեց հրամայական՝ Պետօն. և երբ
քիւրդը քիչ էլ մօտ եկաւ, ասաց — Խօսիր, ինչ ես ուզում:

— Ուրիշ քիւրդեր էլ, նայեցէք... ասում էր այդ մի-
ջոցին Գաբրիէլը Կարօին:

Եւ իրաւ, հորիզօնի վրայ, սակայն դեռ շատ հեռու,
երևում էին սև կէտեր:

Քիւրդը կանգնեց մի քանի քայլ հեռաւորութեան
վրայ և ասաց.

— Գուք ձրտեղացի էք:

Պետրոսը ղէմքը կնճռեց և ասաց իրօխտ.

— Մեզ ոչ ոք իրաւունք չունի հարց տալու, այլ
պարտաւոր է միմիայն պատասխանել. ինչ է ուզածդ, ասա
և ապա կորիր գնա...

Քիւրդը նախ ձեռքը զաշոյնին տարաւ, ապա զըս-
պեց իրեն և հպարտութեամբ ասաց.

— Գիտցէք, ուրեմն, որ ինձ ուղարկել է իմ աղան.
նա ուզում է իմանալ թէ դուք ձրտեղ էք զնում:

— Ձեր աղան շատ հետաքրքրուող է. ժպտեց Հեզ-

նութեամբ Պետօն — իսկ շատ հետաքրքրուողը շուտ կը
ճերանայ... դարձիր, գնա և այդպէս առաջ նրան:

Այն ժամանակ քիւրդը ցնցեց վրայի վերարկուն և
ասաց խիստ գոռուութեամբ.

— Ես Համիդէի գօրքից եմ...

— Ուրեմն աւելի վատ սրիկայ ես. ընդհատեց նրան
Պետօն:

— Ահա իմ նշանները. շարունակեց քիւրդը և ցոյց
տուեց կապայի վրայի գօտին ու գլխարկի նշանը:

— Պղնձի կտորներ. հեզնեց Վարօն — և բաւական
արիւնտ...

— Իմ աղան, շարունակեց քիւրդը — Համիդէի գօրքի
փաշան է... Նայեցէք հեռու, ահա այնտեղ ինձ է սպա-
սում 50 զինուորով. պատասխանեցէք ինձ:

Վարօն անհամբերութիւնից շրթունքն էր կրծում,
ուտքը աւաջ դրեց և գոչեց քիւրդի երեսն ի վեր.

— Աղայիդ ասա, որ քիւրդերէն առածը չըմտանայ.
«Շատ հետաքրքրուողը, շուտ էլ կրսատկի»... այս վերջին
երկու բառը ես եմ փոխում և լատկապէս՝ աղայիդ հա-
մար... դէհ, մէջքդ մեզ ցոյց տուր, ապա թէ ո՞չ աղայիցդ
շուտ դժոխք կերթաս...

Քիւրդը ծիծաղեց լրբութեամբ:

— Լաւ ուրեմն, ասելիքս ասեմ. գոչեց նա — ձեզ սահ-
մանազիխից հետևում են մեր մարդիկ...

— Արոնցից մէկը կարծեմ այն բլբլի ետևի հողն է
համբուրում. ծաղրեց Վարօն.

— Ֆլան շատ ծաղրածու է, ասաց նրան քիւրդը —
բայց երբ ձեռքս ընկնես, իմ աղան լեզուդ կտրելու է և
իր վրանի առաջ կախելու... բայց ես շարունակում եմ:
Ձեզ հետ կայ Մշոյ Գոմեր գիւղից մի աղջիկ, տղամարդի

Հտգուստով. ահա՛ն, կարծեմ նա է... լաւ, իմ աղան ուզում է այդ աղջկան. տւէք և՞ ազատ ձեր ճանապարհը զնացէք:

Պետոն սաստիկ զուհատեց և մեքենայօրէն ասաց.

— Աղադ խաբւում է. մեզ հետ աղջիկ չըկայ:

Նազիկը ետ քաշեց և պահեց մէկը ետևում:

— Ֆլան խաբում է. կօչեց քիւրդը— Ֆլանները խաբերայ են լինում. մեր լրտեսները վաղուց հետևում են ձեզ. վերջինը այժմ հասաւ և յայտնեց որ աղջիկը ձեզ հետ է: Նրանց մէկը բառական ժամանակ է որ Վարս էր և քայլ առ քայլ հետևում էր աղջկան: Աւելի լաւ է տրւէք աղջիկը և ձեր կեանքին չենք դիպչի, թէև կուզէի ես բոլորիդ մորթել և այդ լաւ հրացանները ունենալ:

Պետոն այժմ հասկացաւ թէ ով է այդ նոր փաշան: Քսքրանցիների ցեղապետ Իւսուֆ աղան էր, Գոմերն աւելորդ և Նազիկին փախցնել ուզող քիւրդը:

Արիւնը գլխին խփեց. մի վայրկեան անխօս մնալուց յետոյ, ձեռքը զաշոյնին տարաւ և կատաղութիւնից լուզւած ձայնով ասաց.

— Գնան այժմ և աղայիդ ասա, որ իր նման շներին ընդունելու համար զնդակ ունենք. եթէ աղջիկ է ուզում, թող զայ. ես նրան ահա թէ ինչ կըտամ:

Աջ ձեռքով մտրակը ցոյց տաւ և շարունակեց.

— Այժմ կորիր, ստրուկ... և ասա՛ աղայիդ, որ Գոմերցի Պետոն սպասում է նրա կաշին քերթելու...

Քիւրդը ցնցեց ոչ միայն այդ կծու խօսքերից, այլ և Պետոյի անունը լսելուց. մի սպառնական շարժում գործեց. բայց Պետոի պարզւած ձեռքը և ակնարկը զսպեց նրան: Նա լուռութեամբ դարձրեց ձիու սանձը, մտրակեց նրան, ոտնուղ տուց, ապա մի խուլ հայհոյանք լուտեց և սաստիկ արագութեամբ հեռացաւ:

Նրա գնալուց լետոյ մի րոպէ գրեթէ ոչ ոք չընտեց և ոչ ոք տեղից չըշարժեց:

—Այսպէս ուրեմն, ասաց վերջապէս Պետօն — արշունն է դարձեալ:

—Պէտք է մի տեղ ամրանալ, Պետօ, միջահատեց նրան կարօն — ժամանակ է շտուպել:

— Գնանք այդ ժայռոտ կրճքի վրայ եղող քարայրները: ասաց Քարբիէլը — ես գիտեմ, շատ ամուր դիրք է: Համաձայնութիւն կայացաւ. պէտք էր պաշտանել. հորիզոնի սև կէտերը սպառնալից էին և դէպի նրանց գնացող ձիաւոր քիւրդը քիչ լետոյ հասնելու էր և հրաւիրելու կուռի:

Զտապեցրին քայլերը, լուռթեամբ կտրեցին հովիտն ու մագլցել սկսեցին քարոտ ստորոտից դէպի բլրակի ապաժառոտ կուրճքը, որի վրայ, բարձրում, երևում էին երկու մութ քարայրներ:

Կէս ժամի չափ սողոսկեցին, անցան նեղ կաճաններից, պտոյտ արին ժայռերի միջից և վերջապէս կարօն ամենից առաջ ոտ կոխելով առաջին քարայրի տախարակի վրայ, ձեռք տւեց Նազիկին: Միմեանց ետևից միւսներն էլ հասան, կանգ առին և ետ նայեցին:

Քիւրդ ձիաւորների խումբը սկսել էր շարժւել և մեծահում էր: Քոսն րոպէի բան էր նրանց հասնելը մի այնպիսի հեռաւորութեան վրայ, ուրտեղից գնդակ կարող էր հասնել քարայրներին: Քագմաթիւ էին նրանք: Չէին շտապում, հանդարտ ու կանոնաւոր արշաւանքով առաջ էին գալիս այն որսորդների պէս, որոնք ապահով են, որ որսըն այլևս չէր խուսափելու:

Քարայրները, ուր մտան Պետօն ու ընկերները, խոր չէին. փոս էին ներսից և պատասպարւած դրօսից եկող զըն-

դակներից: Ղետնից շատ բարձր էին և տիրում էին դաշտի վրայ. նրանց երկու կողքի շաւիղները անքան դժւար էին ունեղ, որ երկու հոգով կարելի էր լաւ պաշտպանել մուտքերը: Առատաղից թափւած կաւախառն աւազը չոր էր պահել յատակը և մի քանի օջաղների մնացորդներ ցոյց էին տալիս, որ նրանք ծառայում են եղել իբր փարախ:

Պարօն կտրեց առաջին քարայրը երկրորդից բաժանող մեծ մացառը և մի ընդհանուր տափարակով՝ երկու քարայրները միացան:

Երբ հասան, ամէն մէկը նստեց քիչ հանգստանալու: Լուռ էին, բայց աչքերնին յառած հեռւում երևացող քրդերի խմբին...

— Լաւ եկանք... խօսեց քիչ լետոյ Պետօն— բայց բանտարկեցինք. քիչ լետոյ կըհասնեն. մեր ձիւնի վրայ թողած հետքերը նրանց կըպատմեն մեր տեղը և... չբզիտեմ ինչ է լինելու մեր վերջը. նրանք շատ են և դաշտի վրայ... մեզ մնում է մեռնել միայն...

Ոչ ոք չըխօսեց:

VI

— Ի՞նչ էք կարծում. հարցրեց Պարօն քիչ լուռ թիւնից լետոյ.— ցածից արձակւած գնդակները չի՞ն կարող մեզ վնասել:

— Չեմ կարծում, եթէ միշտ ներսը մնանք. պատասխանեց նրան երիտասարդներից մէկը:

— Մօտենում են... յայտնեց չորրորդ երիտասարդը, որ աւելի դէպի մուտքն էր գտնւում.— նայեցէք, որքան շատ են...

Բոլորը դարձան դէպի գաշտը: Խումբը մօտենում էր.

նրանց նիդակները Ֆօնի վրայ երերում էին, իսկ վահանները զամերն ու Հրացանների փողերը փայլում լուսնի աղօտ լուսի տակ: Քաղմաթիւ էին, բոլորը ձիերով և լազ զինւած:

—Պատրաստենք, տղերք, գոչեց Պետրոսը—Ս, կարապետ մեզի քօմագ... Հրացաններիդ աչք խփէք. ետքաշենք և թողէք ինձ դիտելու թշնամու քայլերը:

Միւս վեց երիտասարդները ներս քաշւեցին: Պետօն փորսող տալով մօտեցաւ տափարակի ծայրին, աշխատեց քարայրի ձգած սուերի մէջ մնայ և սկսեց դիտել:

Քիւրդերը յառաջացան բաւական տեղ, կանգ առին, խմբւեցին և շրջապատեցին իրենց մեծաւորին: Մի քանի բոպէ լետոյ նրանք նորից բաժանւեցին և աւելի կամաց քայլերով՝ զնացին դէպի քարայրները: Մէկ մէկ համբուում էին. բոլորն էլ համիդէի զօրքի նշաններն ունէին իրենց քրդական հագուստի վրայ:

Երբ մօտեցել էին այն կէտին, որտեղից սկսւում էր ժալուի ստորոտը, քիւրդերից շատերը ձիուց իջան և հրացանները լարեցին:

—Պատրաստ կացէք, դարձաւ Պետօն ընկերներին— սկսում են յարձակումը. սողոսկելով մօտեցէք ինձ և երկու հոգի ձեզնից աջ, իսկ երկուսը ձախ հսկեցէք՝ գնդակահարանելու մագլցողներին:

Այդ միջոցին ճալթեց մի չոր բան կարծես. արձագանքը թնդացրեց հովիտը և մի գնդակ եկաւ թուցնելու մի քանի ժալուի կտոր, քարայրներից երկրորդի գլխի վերևում:

Այդ առաջին ճալթիւնը դողացրեց պաշարւածներին. մարթիւնի զօրեղ և հեռաձիգ հրացանի ձայն էր:

Նազիկը քաշւել էր բոլորովին խորքը և կծկւել մի անկիւնում:

— Կրակ չանէք, տղերք, Հրամայեց Պետօն — սպասեցէք իմ ասելուն:

Առաջին հարւածից լետու, քիւրդերը լուեցին: Խոր լուռութիւն տիրեց երկու կողմից էլ: Էլի պաշարողները հաւաքւեցին իրենց ազալի շուրջը, էլի մէկը նշան դրեց առաջին քարայրը և մի գնդակ ուղղեց նրա ներսը:

Քնդակը զնաց, ներս մտաւ, բայց առաստաղից դաժէիջաւ և այնտեղից զետին թափեց քարի կտորներ: Նազիկը տարտափահար՝ ճիչ արձակեց: Պունատ՝ դողում էր:

— Աչինջ. գարձաւ նրան Պետօն — քանջ եղիր և մի վախենալ, տեղիցդ որ չըշարժես, գնդակը երբէք քեզ չի հասնիլ:

Երկու գնդակից լետու քիւրդերը երրորդ անգամ հաւաքւեցին: Այս անգամ խորհրդակցութիւնը երկար տևեց: Յետոյ մէկէն նրանք միմեանցից բաժանուեցին և մօտ 20 — 30 հոգի, զանազան ուղղութեամբ, ոտաւոր և հրացան իբրևին, սկսեցին քարերի միջից զէպի վեր՝ քարայրները բարձրանալ:

— Քալիս են. ասաց Պետօն — աչքերնիդ չորս բաց արէք...

Քրդերը մտել էին քարերի մէջ, ծածկւում էին նրբանց ետևում, տափակահանում, սողոսկում էին՝ աշխատելով օգտուել իւրաքանչիւր թփից կամ բարձրութիւնից ու քարերից, նրա ետևը պահւելու համար:

Պետրոսը գունատ նայում էր և հազիւ կարողանում էր նշմարել եկողներից մէկի կամ միւսի մէջքը կամ գլխի մի մասը:

— Պէտք է կրակել. ասաց նա — դրութիւննիս վատանում է. տղերք, հէնց որ մի ծայր տեսնէք՝ կրակ...

Անցաւ մի լուռ բոպէ, լետու կարօն շարժւեց, լարեց

Հրացանը, թռաւ գնդակը, լսեց մի ազադակ և քարերի միջից դէպի ցած գլորեց մի քիւրզի մարմին:

Այդ առաջին հարւածը հրաւիրեց իր վրայ դաշտում կանգնած քիւրզերի գնդակները կարկուտ, մի քանի ըսպէ վերից ու ներքեւից փոխադարձաբար միմեանց վրայ էին տեղում գնդակներ. լսում էին ճիչեր, գլորում էին մարմիններ...

— Տղերք, ի զուր գնդակ մի փչացնէք, գոռում էր Կարօն ըսպէ առ ըսպէ՝ արձակելով իր հրացանը:

Բայց նրանք ստիպւած էին այժմ փոքր ինչ երևցնել իրենց գլուխը՝ կռացնելու համար հրացանը դէպի մազըցող քիւրզերը: Եւ այդ սկսեց վնասել նրանց. առաջին իսկ կռանալու ժամանակ տղերքից մէկը զարնեց գլխից և գնաց թաւալազլոր դէպի ցած:

Հրացանաձգութիւնը շարունակեց, քիւրզերից անգաղար ընկնում էին. ձիաւորները դէս ու դէն էին արշաւում:

Յանկարծ Կարօն էլ ձեռքից բաց թողեց հրացանը, լետոյ բարձրացաւ, ձեռքը գլխին տարաւ և գոռաց.

— Զարնեցայ...

Ու ետ ընկաւ շանթահարի նման:

Պետօն դէմքը կնճռեց, կոկորդը դառնացաւ, բայց տեղիցը չըշարժեց ու շարունակեց հրացանի: Քիւրզերը մի քանի քայլ միտին բարձրացել էին, բայց պարզ երևում էր, որ շուտով զրաւելու էին քարայրները, մանաւանդ որ անհնար էին դարձնում իրենց զարնելը՝ թագնւելով. գաշտի վրայ կանգնածներն էլ ջլատում էին հայերի ոյժը:

Պետօն այդ ժամանակ ետ նայեց: Մնացել էին չորս հոգի: Նազիկը ոչինչ, նա ոչ դէնք բռնել գլխէր և ոչ էլ սիրտ ունէր կռւելու:

Եւ կանգ առաւ: Զգաց որ ժամանակ է խուսափելու. տաս ըոպէ ևս, ամեն ինչ վերջացած կըլինէր. կըբռնէին՝ վանդակի մէջ փակւած թռչունների նման, առանց կուել իսկ կարողանալու:

—Տղերք, ասաց նա խուլ ձայնով—ով կարող է, թող դուրս թռչի քարայրից, մազլլցի լեռն ի վեր. այնտեղ կամ կըմիանանք կամ ոչ. ժամանակ է սակայն որ ամէն մարդ իր կեանքի վրայ մտածի:

Երիտասարդները դագարեցին կրակելուց և Պետօին նայեցին:

—Այ՛ո, կրկնեց նա—իզուր է. տեղերնիս նեղ է և կռիւր անհաւասար. միակ փրկութիւնն է բարձրանալ տափարակի վրայ և ազատել փախչելով կամ պահւելով: Զուտ անենք: Գնանք, Նազիկ...

Ամեն ոք շտապեց գէպի դուրս: Պետրոսը Նազիկին գէպի ձախ տարաւ և մտան ժայռերի մէջ, որոնք այդ կողմում թափւել էին միմեանց վրայ կտոր կտոր, շատ տեղ ատիճաններ կազմել, կամարներ և շատ տեղ էլ քարի հեղեղատներ:

Այդպիսով դիւրանում էր վերելքը. մանաւանդ որ դժւար տեղերում Պետօն սահում էր գէպի վեր, լետոյ ծնկան վրայ գալիս և վեր էր քաշում Նազիկին: Թայռի կտորներ էին պոկոտում և շառաչիւնով դլորում ցած՝ նրանց ետևից, բայց այդ բոլորը անխելի էին, որովհետև դաշտի վրայ կանգնած քիւրդերը դեռ զնդակներ էին տեղում քարայրները վրայ:

Այդ նշան էր, որ մազլլցող քիւրդերը դեռ քարայր չէին հասել:

Երբ հասան վերև և այնտեղ Պետօն կանգ առած՝ թողեց Նազիկին քիչ շունչ առնելու, ցածում հրացան-

ների ձայներ լուեցին, յետոյ անցան մի քանի լուռ լուպե-
ներ: Պետօի միւս ընկերները չէին երևում. ով գիտէ ինչ
էին եղել. բռնակել, զարնակել էին, թէ փոխել կամ թագ-
նելով ազատել:

Պահ մի խոր լուռութիւնից յետոյ, լանկարձ լուեցին
մի քանի թոյլ հրացանաձգութիւններ, ապա վայրենի ա-
ղաղակ յարձակման և այդ բոլորը ապացուցին որ քիւր-
դերը գրաւել էին քարայրը և ստուգել որ իրենց որսը
անհետացել էր:

Ուրեմն հետապնդելու էին: Չիով անկարելի էր. հարկա-
ւոր էր մի քանի ժամ, որ կարողանային ձորի կողմից հասնել
այդ տափարակին. քիւրդերն անշուշտ ոտքով կը հետևէին:

Այդպէս էր մտածում Պետօն: Ուրեմն զեռ ապահով
չէին. հարկաւոր էր քալել, գտնել մի ուրիշ ապաստարան
և կամ մի կերպով կորցնել տալ իրենց հետքը:

Յուրտ էր: Երկինքը ամպոտել էր սկսում. արևելքից
մի մեծ ամպ փշրել էր և ցանցառացած բրդի նման՝
տարածուած էր սփռուած լուսնի երեսին. յետոյ կատակում
էր ետևից հասած ուրիշ ամպերով և գիշերը մթնացնում:

Երկու երիտասարդները քալում էին արագութեամբ.
ոչինչ չէր երևում նոցա, բացի հեռաւոր, ձիւնայից բար-
ձրութիւններ և մութ, ամալի դաշտ:

Կոխտուում էին տաքութիւնից նախ փափկացած,
բայց այժմ կիսովին սառող ձիւնը և ի մեծ ցաւ Պետօի,
նշմարելի տաքի հետքեր էին թողնում: Չիւն գալուց ի
վեր այդ կողմերում ո՛չ մի մարդկային ոտք չէր կոխել.
սպիտակ անրիժ մի սաւան էր ծածկում կարծես անհուն
տարածութիւնը, որի միակ եզր կաղմում էին հեռում ե-
րևցող ժայռի սև խոշոր կտորներ:

Պետօն ա Նազիկը դէպի այդ ժայռի կտորներն էին

լառաջանում. կտորներ, որոնք անտեղ ջրած կալին, ո՞վ գիտէ, մնացորդ որպիսի լեռից:

Զիւներ քիչ խշրտում էր և ստքը շատ խոր էր գնում նրա մէջ: Ամալի էր ամէն կողմ. ո՞չ մի ձայն:

Յաճախ Պետօն ետ էր նայում սրտատրուփ և սպասում նտեի կողմից եկող գնդակներին: Քայցիերկինքը մըթնանում էր և հեռաւորութիւնը աննշմարելի մնում: Այդ հանգամանքը սկսեց նրան քիչ մխիթարել. գուցէ կարողանային անտեսանելի մնալ, հասնել այդպէս մի գիւղ, մի տեղ թագնեւել... կամ ո՞վ գիտէ...

Այդպէս էր Պետօն մխիթարում իրեն, երբ լանկարծօղի մէջ սուլեց մի գնդակ և ճիշտ նրանց դիտի վրայից անցնելով՝ գնաց անհետացաւ խաւարի մէջ:

— Տեսնում ենք... գոչեց լուսահատութեամբ Պետօն՝ առաջին տպաւորութեան տակ — տեսնում ենք. ուրեմն շատ մօտ են...

Կանգ առաւ և ետ նայեց: Հեռուից սև բաներ շատ էին երևում, բայց մթութիւնը ծածկում էր ամեն ինչ և նա, որ քիչ առաջ օրհնում էր խաւարը, այժմ անէծք էր կարդում նրա դէմ, որ արգելք էր լինում տեսնելու թէ ինչ հեռաւորութեան վրայ էին հալածողները:

Մի քանի րոպէ ուշադրութիւնը լարած՝ նայեց Պետօն, լեռոյ լանկարծ ցնցեց և ժպտելով ասաց.

— Ա՛... Հիմա իմացայ:

Իմացել էր: Քիւրդերը հրացան էին արձակել՝ նայելով հետքերի ուղղութեանը. մանաւանդ որ Պետօն միշտ ուղիղ դժով էր քայլել:

— Հեռուիւր ինձ, ասաց նա Նազիկին: Ապա փոխեց ուղղութիւնը քիչ դէպի աջ և սկսեց գնալ դէպի ժայռերը՝ այս անգամ ծառ գծով:

Պարզ էր սակայն, որ նրանց ետևից գալիս էին. դա անհանդիստ արեց Պետօին: Եթէ ինքը մենակ լինէր, շատ հեշտութեամբ կարող էր արագացնել քայլերը և անշուշտ կազատուէր. իսկ այժմ իր հետ կին կար, որ հետզհետէ թուլանում էր, յոգնում և չէր կարողանում ոչ միայն արտք քայլել, այլ սկսում էր ետ մնալ, կքւել:

—Քայլիր... դռնում էր նա յուսահատութեամբ, բռնած Նազիկի թււից և գրեթէ կոպտութեամբ—բիւրդերը հասնում են:

Խեղճ աղջիկը ճիգ էր գործում, սեղմում էր ատամները, աշխատում էր քայլել, բայց ոտները ծանրանում էին. կայլոժում էր, շնչատագառ լինում... աչքերը արտասուքով լցւել էին, մարմինը քրտնաթոր...

Քայլեց, քարշ եկաւ, թափեց ինչ որ ոյժ ունէր, բայց վերջապէս կանգ առաւ շնչատագառ և հազիւ կարողացաւ թոժովել:

—Էլ չեմ կարող, թող ինձ արտեղ:

—Քիւրդերին թողնեմ. բացագանչեց Պետրոսը:

—Սպասիր ուրեմն. նստեց Նազիկը—էլ չեմ կարող, էլ ոյժ չըմնաց:

Այն ժամտնակ Պետօն ուսին ձգեց հրացանը, լիտոյ եկաւ նստեց Նազիկի առջև, մէջքը նրան դարձրեց և սասաց վճռողաբար.

—Հնւտ, մէջքիս վրայ ելիր... Տուր ձեռքդ... այգպէս, լաւ... Հանդիստ կաց...

Ու արագութեամբ շալակեց աղջկան, բարձրացաւ և սկսեց քայլել:

—Ատուած իմ, գոչեց Նազիկը—այդ ինչ արիւր, Պետրոս...

— Ինչ որ պէտք էր. ասաց երիտասարդը— գրկիր վրիս և հանգիստ մնա... լաւ, այդպէս:

Նազիկը քնքուշութեամբ գրկեց Պետօին և մի ջերմ համբոյր դրոշմեց նրա վզի վրայ:

— Որքան բարի ես. ասաց նա.

— Բարի. ժպտեց Պետօն— սիրում եմ քեզ և, քրդին չեմ տալ քեզ:

Երկինքը աւելի և աւելի մթնանում էր: Աղջիկը յոգնած էր և ահագին՝ ծանրութիւն դարձաւ երիտասարդի վզի վրայ: Նա այդ զգում էր, որովհետև Պետօն էլ շուտով սկսեց յոգնել. քրտինքը վրայ տւեց, տաքացաւ նա, հեւտ սկսեց ծանրութեան տակ, դանդաղացրեց քայլերը:

— Իջնեմ. խօսեց Նազիկը:

— Ո՛չ ո՛չ, դեռ քայլել չես կարող:

Եւ բաւական գնաց այդպէս: Երբեմն միայն կանգ էր առնում և ետ նայում: Այժմ հեռում սկսում էր նշմարել շաժման մի մեծ կէտ, մի քանի քրդեր էին, որ վազում էին:

Պետօին տիրում էր յուսահատութիւնը. չըզիտէր ինչ անել: Աչքով մի թաղստոց էր փնտռում, մի ծակ, մի խորշ... Սակա՛յն բացի տարածութիւնից և նրա վրայ ցանաւած կտոր կտոր փոքրիկ ժայռերից՝ ոչինչ չէր երևում:

Քայլերն աւելի ամրապէս էին դրոշմուում ձիւնի վրայ: Այդ նրան կատաղեցնում էր: Անիճեց ձիւնը, անիճեց ձրմեւը, անիճեց և շատ ուրիշ բաներ... բաց աղջիկը ծանրանում էր նրա ուսին, նրա վերջին ոյժերն էլ սպառում:

Այլևս շարունակելու հնար չըկար. ծնկները կթոտեցին. կանգ առաւ, ցած սահեցրեց բեռը և ասաց.

— Կարող ես քիչ քայլել... մինչև որ հանգստանամ:

— Կըքայլեմ... իմ խեղճ Պետրոս. ես չէի ուզում, գիտէի որ ծանր եմ:

— Լաւ, լաւ, այժմ քայլենք և... շուտ:

Այդ միջոցին նորից փայլեց ետևի կողմից մի յուս և նորից մի գնդակ՝ ճղեց օդը:

— Այժմ աւելի մօտ են. ասաց Պետրոսը — նրանք վազում են. շտապենք մի տեղ պահելու:

— Որտեղ, մօմօաց Նազիկը յուսահատ — չէ՞ որ նրանք սղամարդիկ են և վազում են; իսկ ես արդէն չօգնել եմ. և լետոյ, ո՛ւր թագնւենք. չէ՞ որ մեր հետքերը երեւում են:

Այդ խօսքերն իրենց ճշտութեամբ Պետօին էլ յուսահատութիւն ազդեցին: Նա կանգ առաւ և սրտնեղութեամբ ասաց.

— Լաւ ուրեմն, սպասենք և մեռնենք:

Նազիկը շատ չըքայլեց: Հարիւր քայլ անկոյց լետոյ նսրից կանգ առաւ և նստեց մի քարի վրայ: Պետրոսը բարկութիւնից դողալով հրացանը ձեռքն առաւ և լարւած՝ կանգնեց նրա կողքին:

Բայց մի բոպէ լետոյ նրա բարկութիւնը իջել էր: Կուացաւ դէպի նշանածը, աջ ձեռքով գրկեց նրան և հարցրեց քնքուշութեամբ.

— Մի՞թէ էլ չես կարող քայլել, Նազիկ:

Աղջիկը յուսահատ կերպով դէմքը ծամակեց, նրան նայեց, լետոյ ձեռքերով գրկեց նրա գլուխը, դէմքը գրեց նրա ուսի վրայ և ասաց.

— Ո՛չ, էլ ոչ չըմնաց... Սպանիր ինձ և թող մեռնեմ գրկիդ մէջ...

Մի սպանիչ, խոր դառնութիւն սեղմեց Պետօի կուկորը և նա գոչեց յուզւած.

—Ատուած իմ, Ատուած իմ... Բնչ անեմ:

—Գիտես ինչ, Պետրոս, ասաց Նազիկը թող. ձադնով — Մանենք այս քարի ետևը... Սպասիր, ինձնից մի գատուիլ. թող գրկիդ մէջ մնամ... լսու, այդպէս... այնքան յոգնել եմ, այնքան յոգնել... Միթէ դու չես յոգնել... Ախ, ինչպէ՛ս երեխայի նման շալակել, տանում էիր ինձ...

Աւ ծիծաղում էր, առամները կարկափելով ծիծաղում թշուառ աղջիկը:

Յետոյ, թուլացաւ, սեղմեց ջրածղութեամբ երիտասարդի գլուխն իր կրծքի վրայ և սկսեց անվերջ համբուրներով ծածկել նրա գէմքը:

Մի րոպէ ոչ մի երջանկութիւն չէր կարող հաւատարեւ նրանց ինքնամոռացութեան... Մոռացել էին ամեն ինչ — մօտեցող քիւրդերը, մահը, ցուրտը...

—Յ', որքան, որքան սիրում եմ քեզ. մըմնջում էր Նազիկը տենդային խանդով սղմելով երիտասարդի գրկում — թող դան այժմ քիւրդերը, եթէ չըզարնեն ինձ և տանել ուղեն, դու սպանիր ինձ... Կանես, չէ՞, չես թողնի որ նրանց պիղծ ձեռքերը զպչեն ինձ... Արքան կուզէի մեռնել, մեռնել այդպէս, գրկիդ մէջ, երջանիկ րոպեում...

—Իսկ ես, ես ինչ կըլինեմ, ասաց Պետոն — Բնչ պիտի անեմ եթէ դու մեռնես:

—Յ', իմ Պետրոս, մըմնջաց Նազիկը — Ես էլ քեզնից բաժան' ապրել չեմ կամենում... Մեռնենք միասին. այդ լաւ է... Երևում է որ իրաւունք չենք ունեցել երջանիկ լինելու... Աչ... Հայրս էլ լաճախ ասում էր, որ մեր ճակատի գրածը թշուառութիւն է, հայածանք... Ինչու այդպէս է — չըզլտեմ... Ինչու գողերը, աւազակները աւելի լաւ ճակատազիր ունեն . Գու այդ գիտես, Պետրոս...

Նրա ձայնը թուլանում էր, նույնպէս և մարմինը. լի-
ովին ամփոփուել, կուչ էր եկել երիտասարդի գրկում և
աչքերը փակել էին:

— Մօտեցիր... գրկիր ինձ. մըմնջում էր նա... մըր-
սում եմ կարծես... այդպէս... օ, ինչ լաւ է...

Եւ երբ քիչ լուռ էին, շարունակեց մեղմ ձայնով.

— Երբ ես կըմեռնեմ... դու ապրիր... ապրիր, և լոմ,
մօրս, հօրս, մեր գիւղացիներին... բոլորի վրէժն առ... և
ապա եկ ինձ մօտ... կանես, չէ՞...

Յանկարծ Պետօն մտաբերեց քիւրդերին և աչքը
բարձրացրեց: Տեսաւ որ մօտենում էին և մինչև իսկ որո-
շեց, որ երեք էին:

Նա շտապով բաց թողեց գրկից Նաղիկին:

— Պալիս ես. ասաց—գոնէ պաշտպանելով մեռ-
նենք... ինչ լաւ կըլինէր, եթէ դու էլ հրացան արձակել
դիտենալիր և ալժամ մի հատ ձեռքդ լինէր... մենք
երեքին էլ կրփուէինք գետին...

Յետոյ առաւ հրացանը, մի վայրկեան լարեց և երբ
երեք քիւրդերը կանգ էին առել հեռքերի ուղղութիւնը
քննելու, կրակեց:

Քոցը վիժեց փողից որպէս մի խուրձ շանթ, սլացաւ
մթութեան մէջ, յետոյ լուեց մի սուլում և մի սպառակ:
Մի քիւրդ ընկել էր:

Իսկոյն երկու գնդակներ եկան դէպի նա: Մէկը սա-
փակացաւ ժայռի վրայ, իսկ միւսն անցաւ գլխի վրա-
յից:

Գլանից յետոյ քիւրդերը մի քանի ոտիւն գործեցին
և մտան քարերի ետևը:

Անշուշտ նոքա իմացել էին հետքերից, որ անցել էր
մի մարդ, բայց այդ մարդը ուտերի վրայ ուրիշին ունէր:

Եւ խորամանկ քիւրդերը հասկացել էին Նազիկի այդ կողմը լինելը:

Այժմ կանոնաւոր կռիւ էր սկսուում, մտած պատնէշները ետևում: Այժերը անհաւատար էին, բայց Պետրոսը քիչ ուրախութիւն զգաց: Առաջին անգամը չէր, որ երկու քիւրդի հետ կռիւ էր տալիս:

Աւրախութիւնն զգաց. այժմ ապահով էր որ յաղթելու էր և մի գնդակ ուղղեց դէպի ժայռը:

Այդպէս մի քանի բոպէ գնդակներ սկսեցին տեղալ միմեանց վրայ ընդհատ: Պետրոսը սակայն չէր նկատում, որ հակառակ կողմից արձակուող հրացանը մէկն էր, փոխանակ երկուսի:

Նազիկը կծկւել էր ժայռի ետևում:

Այդպէս էր դրութիւնը: Գիմացից լուել էին. Պետրոսը սպասեց ինքն էլ, երբ յանկարծ ետևի կողմից թընդաց մի հրացան: Պաշարւել էր: Քիւրդերից մէկը դադարադողի անցել էր ետևի կողմը, մտել մի ուրիշ քարի ետև և այնտեղից գնդակահար էր անում Պետօին:

Առաջին գնդակը սակայն փշրեց միայն մի կտոր քար, բայց Նազիկը գրեթէ ուշաթափ եղաւ:

Պետրոսը կատաղութեամբ մի ոտտիւն գործեց. դրան հետևեցին երկու ուրիշ ձայներ, մի գնդակ սրացաւ իր կողքից, լուեց մի աղաղակ և նա տեսաւ թէ ինչպէս Նազիկը ձեռքերը դէպի նա պարզեց, լետոյ բարձրացաւ, ծրնկան վրայ եկաւ և փուլեց ժայռի վրայ:

Պետրոսի արիւնը դէպի գլուխը հոսեց բուռն կերպով: Հսկայ թռիչք գործեց, հասաւ քիւրդին, հանեց երկար սուրը և մի այնպիսի հարւած հասցրեց նրան, որ եթէ քիւրդը ետ չըքաշւէր, անշուշտ գլխից գրկւելու էր:

— Նամէրդ. մռնչեց Պետօն և էլ չըթողեց քիւր-

դին շարժելու: Գնդակները սուլում էին նրա կողքից, մէկն էլ ազդրի մէջ մտաւ, բայց նա հրացանի բռնով ջախջախեց քիւրդի գլուխը, դաշոյնով պատառեց նրա կոկորդը և ապա նույն թռիչքով անցաւ այն տարածութիւնը, որ իրեն բաժանում էր միւս քիւրդից: Եւ, չընայելով դէպի նա ուղղած գնդակները, հասաւ նրան:

Ձեռքին միայն գատարկ հրացանը ունէր. բարձրացրեց և առանց խօսելու իջեցրեց քիւրդի գլխին: Սա, վահանը դէմ տուաւ և դաշոյնով յարձակեց:

Պետրոսը գօտուց ատրճանակը հանեց: Մի լուպէից յետոյ այդ քիւրդն էլ ոտքի տակն էր, բացւած կուրծքով:

Յազթութիւնը Պետօին էր: Եւ դաշտը մտաւ դարձեալ ամայութեան մէջ: Խոր լուսթիւն տիրեց նրա շուրջը:

Կանգ առաւ ու շուրջը նայեց. արիւնով դեռ լեցուն էին աչքերը. խելագարի պէս էր, դեռ ոչինչ չէր լիշում: Մթութիւնը սաստկանում էր. հորիզօնը լիովին ծածկւած էր ամպերով, կամաց-կամաց շրջակայ լեռների շրջագծերն իսկ անհետանում էին:

Մենակ էր այժմ և հետզհետէ զխտակցութեան էր դալիս, հանդարտում էր: Մի վայրկեան յետոյ նա սկսեց լիշել:

Եւ երբ լիշեց, մի խուլ, ցաւալից աղապակ դուրս թռաւ նրա կոկորդից: Վազեց դէպի ժայռը, ցած ձգեց հրացանը և չոքեց Նազիլիի դիակի մօտ:

Գեռ տաք էր, բայց մեռնում էր... Ստակալի իրողութիւնը նրան երազ, կոշմար էր թւում:

—Նազլիկ... գուաց աղիողորմ ձայնով— իմ Նազիլի...

Աղջիկը շարժեց և բարձրացրեց թևերը. բացեցին քիչ նրա աչքերը. մի ակնթարթ... և ապա մի բուռ արիւն դուրս հոսեց բերնից:

Պետոն գրկեց, բարձրացրեց նրան:

Մի բառ անդամ չարտատանեց անբախտ աղջիկը. թեքեց գլուխը, գրեց իր սիրտը կրճքի վրայ և մեռաւ...

—Նազիկ... գոչեց երիտասարդը—Ատուած իմ, միթէ առանց քեզ եմ մնալու, միթէ թողնում ես ինձ...

Ու բաց թողեց գրկից, գրեց գետին, գլուխը ժայռին դիմ տաւ, լետու բարձրացաւ, մի կողմ շարժեց գլխարկը, բաց արաւ կուրծքը: Խեղդւում էր, շունչ չէր մնում... Մի օգնութիւն, մի ձայն գոնէ. միթէ չէր կարելի ազատիլ Նազիկին, չէ՞ որ նա պատրաստ էր կեանքը տալ զրա համար...


Խոր լուծիւն էր տիրում ամեն կողմ. միտին ամպերը կուտակւում էին միմեանց ետեւից երկնքի երեսին. մեղմ ցուրտ քամի էր սահում-անցնում օդի միջից... Լուռ էր ամեն կողմ, ոչ մի շշուկ, ոչ մի ձայն...

Եւ մի սեւ մշուշ արդ ժամանակ, լառաջանում շրջափակում էր հարթավայրը, որի միջից գեռ երևում էր կուրծքն ու գլուխը բաց, լուսահատ աչքերը դէս ու դէն պտտեցնող երկարահասակ երիտասարդը, որ սարքերարար, ելքեմն, աղէխարշ ձայնով օդն էր պատառում իր գոչով.
—Նազիկ...

Ու նրա քստմնեցուցիչ ձայնը տարածւում էր հեռուները, որպէս զիշերային թռչունի ազիտորմ ողբը...

1894





ԿԵՆԴՐՈՆԱԿԱՆ ԿՐԱՎԱՃԹՈՒՆՈՅՈՒՄ

ծախում են նաեւ նոյն հեղինակի հետևեալ գրքերը.—

Սանթո (հայ բոշաների կեանքից) — 30 կ.

Հայ բոշաներ (ազգագր. ուսումն.) — 50 կ.

ԳԻՆՆ Է 50 կ.

